ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈԳՈՒ ԽՃԱՆԿԱՐ

Ռուզան Միրզոյանի «Հոգու խճանկար» գիրքը հեղինակի ստեղծագործությունների 6-րդ հրատարակությունն է, որը նախատեսված է տարբեր տարիքի ընթերցողների համար: Իրենց թեմատիկայով խիստ արդիական պատմվածքները, ինչպես նաև նրա ինքնատիպ չափածո ստեղծագործություններն ընթերցողի առջև բացահայտում են բարության, ազնվության և արդարության հեղինակի նուրբ հոգու ընկալումները, իսկ որոշ պատմվածքներում վեր են հանվում սիրո հավերժության, կյանքի և մահվան, գաղափարները: Դրանք խիստ հուզական են և տպավորիչ:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԲԱԼՈՆ

Դառնահեծեծ քամու անողոք հարվածներից վիրավորված՝ պատուհանների փեղկերը շխկշխկում էին գիշերային խավարի մեջ, իսկ անձրևն իր մայրական հոգատարությամբ ու փաղաքշանքով լվանում էր լացող պատուհանների ապակիներից հոսող հորդառատ արցունքները:

Սենյակի ներսում այնքան մութ էր, որ Աննան հազիվ էր նշմարում իրենից ձախ գտնվող իր փոքրիկի՝ հնգամյա Նանեի մահճակալը: Երեխայի դեմքը չէր երևում խավարում, և նա ստիպված էր միայն շնչառությամբ որոշել քնա՞ծ էր աղջնակը, թե՞ դեռ բաց էին աչքերը: Լսողությունը սրելով՝ մայրը ժպտաց ու շունչ քաշեց. «Փառք Աստծո, խորն է շնչում, ուրեմն՝ քնած է», - մտածեց ու ինքն էլ հանգիստ փակեց հոգնատանջ աչքերը:

Օ՜ զարմանք, փակ կոպերի միջով կարծես մի հզոր լուսավորված սենյակից լույս էր թափանցում և աչքերի մեջ ընկնելով խանգարում էր քնել: Աննան բացեց աչքերը: Թանձր խավար էր ամենուր: Փաստորեն, բաց աչքերով նայելիս՝ սենյակը կորած էր մթության մեջ, իսկ աչքերը փակելուց հետո՝ շուրջը նորից լուսավորվում էր: Երբ նորից փակեց աչքերը, զգաց, որ քունը խանգարող այդ լույսը ոչ թե սենյակից, այլ հենց իր ճակատի ներսից էր լուսավորում կոպերը:

- Մա՜, - լսեց նա իր երեխայի ձայնն աջից:

- Քնի՜ր, խնդրում եմ, - աչքերը դեռ փակ վիճակում ասաց Աննան:

Հաջորդ պահին զարմացած բացեց քնաթաթախ կոպերը, բայց ոչինչ չէր երևում սենյակի թանձր խավարում:

«Այս ո՞վ է», - մտածեց Աննան, - Նանես քնած է ու իմ ձախ կողմում է, ուրեմն՝ Նանեն չի:

- Մա՜, - նորից մանկան թովիչ ձայնով իր բալիկն իրեն էր կանչում:

«Ախ հա՛, մյուս բալոս է, – մտածեց նա, - էս ինչ դժվար գիշեր է սպասվում, էս երեխեքը հաստատ գիշերն ինձ հանգիստ չեն տալու, որ քնեմ»:

Նա մթության մեջ խարխափելով մոտեցավ դռան կողքին գտնվող անջատիչին և վառելով սենյակի լույսը նայեց ձայնի ուղղությամբ:

Իր փոքրիկն էր: Նանեից մի տարով մեծ, մի տեսակ խեղճացած, վտիտ մարմնով տղան ոտաբոբիկ կանգնել էր սառը հատակին: Նա շփոթված ու կարծես ցրտից կամ ամպրոպի ձայներից վախեցած՝ դողում էր թեթևակի ցնցելով սպիտակ շապիկից թափանցող փոքրիկ ուսերը:

- Տե՛ս, քույրիկդ քնել է արդեն, դու ինչո՞ւ քնած չես:

- Մա՛, ուզում եմ Նանեի հետ նույն մահճակալին քնել, - փորձեց մի կերպ իր չքնելն արդարացնել փոքրիկը:

Հանկարծ Աննան այնպես ճչաց, որ ինքն էլ իր ձայնից վախեցավ: Լավ էր, Նանեն չարթնացավ: Ախր, ինքը միայն մի երեխա ուներ՝ աղջիկ, իսկ այս տղան ո՞վ էր, որտեղի՞ց հայտնվեց, և ինչո՞ւ էր ինքն իր ամբողջ հոգով և մայրական սրտով այնպես սիրում նրան կարծես իր զավակը լիներ:

«Աստվա՛ծ իմ, այս ի՞նչ է կատարվում ինձ հետ», - վախեցած մտածեց Աննան: Նա մոտեցավ փոքրիկին, գետնից բարձրացնելով գրկեց նրան և շոյելով ոսկեդեղին գանգրահեր գլուխը՝ իր քնքույշ համբույրը թողեց նրա փոքրիկ, դալուկ այտին: Երբ առաջ քայլեց երեխային մահճակալին դնելու, զգաց, որ պատահաբար տրորեց ինչ-որ մեկի ոտաբոբիկ ոտքը: «Էս ի՞նչ էր», - սարսափած մտածեց Աննան ու նայելով ցած՝ սփրթնեց, երբ հասկացավ, որ դա հենց իր իսկ գրկի մեջ գտնվող երեխայի ոտքն էր: Աչքերի առջև երեխան մի քանի ակնթարթում շարունակեց հասակ առնել, կերպարանափոխվել, և արդեն իր առջև կանգնած էր մի երիտասարդ, որն այնքան հարազատ էր իրեն: Աննան նույնիսկ կյանքն էր պատրաստ տալու նրա մատի փուշն իսկ հանելու համար:

Որպեսզի անսպասելիությունից բարձր չգոռա, նա ձեռքերով ամուր փակեց զարմանքից բաց մնացած բերանը և մի քայլ ետ ցատկելով վախեցած հայացքը սևեռեց երիտասարդի վրա:

- Վախենո՞ւմ ես ինձնից, հա՞, - բղավեց նրա վրա երիտասարդը, - իսկ տասնինը տարի առաջ մի՞թե չվախեցար, երբ քո արգանդից ինձ դուրս շպրտելու որոշումը կայացրեցիր: Դու մարդասպան ես, մա՛մա:

Աննան բռնվեց մահճակալից, որ չընկնի ցած:

- Ուրեմն, դու իմ տղա՞ն ես, - խեղճացած ձայնով կմկմաց Աննան, - իրոք, դու հիմա հենց այս տարիքում էլ կլինեիր…

- Եթե կարող ես ոչնչացնել, - շարունակեց գոռալ երիտասարդը, - դա չի նշանակում, որ պիտի ոչնչացնես: Կարծում եք դո՛ւք՝ մայրե՛րդ, դուք մարդ-արարի՞չ եք, այսինքն՝ արարող էա՞կ և եթե ուզեք՝ նոր կյանք կստեղծեք, ուզեք՝ եղա՞ծը կվերացնեք: Դուք ձեզ Աստծո տե՞ղն եք դրել: Դուք կարեկցանք, խիղճ չունե՛ք, դուք թաքնված մարդասպաններ եք՝ որդեսպաններ:

Նա մի կերպ իրեն զսպելով լռեց ու զայրույթի արցունքները թևով սրբելով ավելի կամաց ձայնով ավելացրեց.

- Թող ներեն ինձ նրանք, ովքեր դեմ չեն գնացել Աստծուն և չծնված զավակ չեն սպանել:

- Իմ լավ, իմ խե՛ղճ տղա, ես շատ եմ զղջացել քեզ կորցնելու համար: Բայց ես դա չէի ուզում, ընկերուհիս համոզեց ինձ, - կմկմաց Աննան, - ես շատ երիտասարդ էի ու հավատացի նրա խոսքերի ճշմարտացիությանը: Նա պնդում էր, որ ինձ դեռ լավ աշխատանք է պետք գտնել, իսկ երեխաներ, երբ էլ ուզեմ՝ կունենամ: Ես սիրում էի քեզ, ես ուզում էի, որ դու աշխարհ գայիր: Չէ՞ որ մինչ այդ ընկերուհուս հանդիպելը ես պայքարում էի, որ դու առողջ ծնվես ու նույնիսկ ուտում էի իմ չսիրած մրգերը, քանի որ լսել էի դրանց օգտակարության մասին:

Տղայի բարկությունն անսպասելի տեղի տվեց, և նա սկսեց այնպես մղկտալով լաց լինել, այնպես հուզվել, որ հազիվ կարողացավ մի քանի բառ արտաբերել.

- Ախր, ես ապրել էի ուզում…

Աննան հեկեկալով գրկեց նրան ու շատ ցածր, համարյա լացակումած ձայնով մի կերպ շշնջաց.

- Տղե՛ս, ցավդ տանեմ, ների՛ր ինձ, խնդրում եմ, աղաչում եմ: Ախ Աստվա՛ծ իմ, էս ի՞նչ եմ արել:

Նա երկար ժամանակ չէր կարողանում հանգստանալ, մերթ Նանեին էր նայում, մերթ

տղային ու անվերջ արտասվում էր: Մի կերպ իրեն տիրապետելով գնաց խոհանոց, դողդողացող ձեռքով մի բաժակ ջուր լցրեց և պահարանից սրտի դեղը վերցնելով փորձեց ջրի հետ կուլ տալ: Որդին տեսնելով մոր տառապանքը՝ մեծ ջանքերով կարողացավ զսպել արցունքները և թախանձագին դիմեց մորը.

- Կներե՛ս ինձ, մա՛մ ջան: Ես, ախր, էս ինչե՞ր եմ ասում, կներե՛ս:

Մոտեցավ և քնքշությամբ փաթաթվեց մորը, գանգրահեր գլուխը դրեց նրա ուսին՝ փորձելով նրանից թաքցնել իր կամքից անկախ դեմքի վրայով հոսող արցունքները:

- Մա՛մ ջան, իմ լավ ու բարի մա՛մա, չէ՞ որ իրականում ես վաղուց արդեն ներել եմ քեզ, դու իմ միա՛կ, իմ հրա՛շք, - գլուխը բարձրացնելով և իր գորովալից հայացքն ուղղելով մորը՝ շարունակեց, - եթե ամբողջ հոգով դեռ ներած չլինեի քեզ, դու հիմա չէիր կարողանա տեսնել ինձ: Աստվա՛ծ իմ, ո՛նց եմ ձեզ սիրում, մա՛մ, քե՛զ էլ, Նանեին էլ:

- Ա՛խ, իմ լա՛վ բալա: Եթե իմանայիր, ինչքան եմ մտածել քո մասին, դու կարծես ամենուր ինձ հետ ես

ու մտքումս շատ անգամներ եմ զրուցել քեզ հետ: Սա հրաշք է, հիմա դու իմ կողքին ես: Այս ինչքան ես մեծացել, հասակ առել, իսկ ես նույնիսկ չեմ հասցրել քեզ համար անուն որոշել: Ախր, ես էս ի՞նչ եմ արել, իմ անո՛ւշ, իմ կյա՛նք, իմ թանկագի՛ն տղա:

- Մա՛մ ջան, բայց ես անուն ունեմ: Դուք այն ժամանակ ինձ Բալո էիք ասում, չե՞ս հիշում. «Բալոն, որ ծնվի այստեղ կդնենք մահճակալը, Բալոն, երբ մեծանա, լավ կլինի, որ բժիշկ դառնա կամ իրավաբան…»:

Աննան ժպտաց.

- Դա քո անունը չէր, դեռ անուն չէինք ընտրել քեզ համար, չգիտեինք աղջի՞կ ես ծնվելու, թե՞ տղա: Բալոն, դա բալիկ բառի ավելի քնքույշ տարբերակն է: Չնայած, բոլորովին էլ վատ անուն չի, հենց այդպես էլ ես քեզ կանվանեմ այսուհետ, իմ Բալո՛ տղա, - ասաց մայրն ու ամուր-ամուր փաթաթվեց որդուն:

Ավելի երջանիկ վայրկյաններ չէր էլ կարող երազել Բալոն: Նա շոյում էր մոր երկար ու փափուկ մազերը, համբուրում ճակատն ու անվերջ ժպտում: Հետո մոտեցավ Նանեի մահճակալին ու քնքշությամբ նայելով քնի մեջ ժպտացող քրոջը, կռացավ ու

զգուշորեն համբուրեց նրա կլորիկ ու վարդագույն այտերը:

- Ի՜նչ խաղաղ է քնած ու հանգիստ, տեսնես ի՞նչ կզգա, երբ իմանա իմ մասին, - ինքն իրեն բարձրաձայն խոսելով՝ նորից փաթաթվեց մորը: - Մա՛մ, մենք հիմա վերջապես երեքով միասին ենք, - անսպասելի ոգևորված բացականչեց Բալոն, - մեր ընտանիքն այս պահից սկսած վերջապես լիարժեք կյանքով կապրի:

Գիշերը դեռ մի քանի ժամ էր, ինչ սողոսկել էր Աննայի բնակարան, և մինչև առավոտ դեռ շատ ժամանակ կար: Հեզասահ քայլվածքով մոտենալով պահարանին՝ մայրը մի բարձ հանեց հարցնելով.

- Տղե՛ս, որտե՞ղ դնեմ բարձդ՝ բազմոցի՞ն, թե՞ Նանեի կողքը: Լավ կլինի մի փոքր հանգստանաս մինչև Նանեն արթնանա:

- Որտեղ կուզես, մա՛մ, ամեն տեղ էլ ես երջանիկ կզգամ ինձ, սա կլինի իմ առաջին գիշերն ընտանիքիս հետ:

- Բալո՛ջան, ուրեմն դու արդեն միշտ մեզ հե՞տ ես ապրելու, մեռնեմ ջանիդ, ո՛նց եմ քեզ սիրում, ո՛նց եմ

կարոտում: Քեզ նորից գտնելուց հետո այլևս չեմ պատկերացնում կյանքս առանց քեզ:

- Դե իհարկե, մա՛մ ջան, իմ բարի՛, իմ լա՛վ մամ ջան:

Աննան ուրախությունից ձեռքերի մեջ սեղմած բարձը վերև շպրտեց միաժամանակ երեխայի պես բացականչելով.

- Ուռաաա՛, ուրեմն ես քեզ նույնիսկ ամեն օր կարող եմ տեսնել:

Ափերը բաց պահած վիճակում սպասում էր, որ օդի մեջ ձեռքերով ճիշտ որսա ետ ընկնող բարձը, երբ Բալոյի հանկարծական քրքիջն անսպասելի թնդաց սենյակում:

- Ցավդ տանեմ, Բալո՛ ջան, մի քիչ կամաց ծիծաղիր, Նանեն քնած է, կարթնանա, - զգուշացրեց Աննան, բայց փոքրիկ Նանեին նայելով համոզվեց, որ մանկան քունն այնքան խորն է, որ նույնիսկ մեծագույն ցանկության դեպքում էլ անհնար կլիներ նրան արթնացնել:

- Էս բարձն ի՞նչ եղավ, - զարմացած վեր նայելով ու միաժամանակ քթի տակ մրմնջալով հարցրեց Աննան և սկսեց Բալոյից ավելի բարձր քրքջալ: Հավասարակշռությունը կորցնելով, նա հազիվ իրեն

գցեց բազմոցին, շարունակելով առաստաղին նայել ու հռհռալ:

Բարձը կախվել էր բարձր առաստաղի լուսամփոփից ու այնպես հպարտ ու հաղթական էր ճոճվում, կարծես թե մանկան չարաճճիությամբ մարտահրավեր էր նետում ծիծաղից թուլացած խաղընկերներին:

- Դու ավելի բոյով ես, Բալո՛, - տղային դիմեց Աննան, - դու փորձիր հանել:

Տարբեր կողմերից բարձին հասնելու համար Բալոն այնպիսի ծիծաղելի շարժումներով սկսեց թռչկոտել, որ այլևս հնարավոր չէր կասեցնել Աննայի հռհռոցի վեր բարձրացող նոր ալիքը: Մայրը մի կերպ իրեն զսպելով գնաց միջանցք և հատակը մաքրող երկար փայտե ձողը ձեռքին՝ հայտնվեց լուսամփոփից կախված բարձի տակ: Բալոն օգնության հասավ, և նրանք չորս ձեռքով այդ փայտն ամուր բռնած, ցատկոտելով ու հռհռալով այնքան հարվածեցին բարձին ու քրքջացին, մինչև բարձը պատռվելով բմբուլե փաթիլներով ձյուն տեղաց նրանց վրա:

Անսպասելիորեն սկսվեց մանկական բարձերով մենամարտ խաղը: Այնքան զվարճալի էր, որ բոլոր բարձերը հերթով փետրահան էին լինում, իսկ երջանկության մեջ թաթախված մայր ու որդի լիովին սպիտակի մեջ կորած՝ ինքնամոռաց թավալվում էին բմբուլների մեջ ու անվերջ ծիծաղում:

Աննան գլխի ընկնելով, որ այդ հրաշալի րոպեները պետք էր լուսանկարով հավերժացնել՝ արագ վերցրեց հեռախոսը:

- Մի նկարիր ինձ, մա՛մ, - միանգամից լրջացավ Բալոն, - ես նկարների մեջ չեմ երևում, ես մարմին չունեմ, մա՛մ ջան, ես միայն հոգի եմ:

Ծիծաղը սառեց Աննայի դեմքին՝ վայրկենապես վերածվելով լացակումած աչքերով, բայց ժպտացող բերանով ծաղրածուի դիմակի:

Իրականությունը շատ դաժան էր: Աննան որոշեց այդ ծանր թեման փոխել ու հարցրեց որդուն.

- Բալո՛ ջան, դու որտե՞ղ էիր ապրում, բալե՛ս, - ինչո՞ւ մինչև հիմա քեզ չէի տեսնում:

- Մա՛մ ջան, ես քո մեջ եմ ապրում: Դու շատ լուսավոր կետեր ունես քո գլխուղեղի հենց ճակատային մասում: Ես այդ լույսերի մեջ եմ

ապրում: Հիշո՞ւմ ես, մի քանի տարի առաջ բժիշկները կարծում էին նոր տեսակի լույս արձակող քաղցքեղածին բջիջներ են հայտնաբերել քո գլխում և ինչպես մի ժամանակ քո արգանդից հեռացրին, այնպես էլ վիրահատել առաջարկելով գլխիդ այդ հատվածը՝ ուզում էին ինձ լիովին դուրս գցել: Այս անգամ դու համառորեն պայքարեցիր և, ինչպես մի էգ առյուծ, փրկեցիր քո ձագին՝ թույլ չտալով նրանց վերացնել ինձ, իմ հերո՛ս մամա:

- Էս ի՞նչ ես ասում, տղա՛ս: Էս ի՞նչ սարսափների միջով ես անցել: Ա՛խ, երանի՛ իմ հղիությունն ընդհատելու որոշումը երբեք կայացրած չլինեի: Հիմա քո նման համակրելի երիտասարդը, որն իմ հարազատ որդին է, որի համար կյանքս եմ պատրաստ տալու, միշտ կողքիս կլիներ, երջանիկ կապրեինք երեքով՝ ես, դու, Նանեն: Ինչո՞ւ, ախր ինչո՞ւ ես դա արեցի:

- Մի՛ այպանիր ինքդ քեզ, մա՛մա, ես չեմ ուզում, որ շատ մտատանջվես ինձ համար, ափսոսաս, որ չկամ: Չէ՞ որ ես սիրեցի իմ մահը: Նա էլ իմ ու քեզ նման միամիտ էր, մա՛մ ջան, չգիտեր, թե ինչու էր այդքան

շուտ եկել ու ինչու էր իր կյանքն էլ ինձ հետ այդքան շուտ ավարտվում:

Աննան խորը հոգոց հանեց: Ուրախություն ու ցավ, թախիծ ու կարոտ, անմեղ սեր ու անսեր մեղավորություն, ամեն ինչ, ամեն բան խառնվել էր գլխում: «Ինչքա՜ն լավ զավակ է Բալոն, ես ինչպե՞ս էի մինչև հիմա առանց նրա կարողանում ապրել», - մտածում էր մայրն ու հիանում դիմացը կանգնած թիկնեղ, խելացի աչքերով, ժպտադեմ ու անսահման բարությամբ օժտված իր տղայով:

- Բալե՛ս, - ասաց Աննան քնքշանքով, - այսքան տարիներ քո մասին ոչինչ չեմ իմացել, պատմիր մի քիչ քո մասին, քա՛ղցրս: Ի՞նչ դժվարություններ ես ունեցել, ինչ խնդիրների ես հանդիպել, իսկ ես ամեն ինչից անտեղյակ ոչնչով չեմ կարողացել օգնել քեզ:

- Մա՛մ ջան, ես քո որդին եմ ու քեզ շատ եմ նման: Քո նման ես էլ արդեն անցած դժվարությունները միշտ ծիծաղով եմ հիշում: Որևէ մեկին էլ պատմելիս՝ փորձանքներն արկածների վերածելով մի լավ հռհռում եմ ինքս ինձ վրա, բացի, իհարկե, այս վերջինից՝ պատերազմից: Առանց սարսուռի չեմ կարող հիշել այն, իսկ պատմելիս էլ հոգուս ցավն

ասես կրկնապատկվում է: Երբ հիշում եմ ծխի, պայթյունների և կրակահերթերի մեջ կորած մարտադաշտը, մեր գումարտակի զոհված տղաներին, սիրտս դուրս է թռչում տեղից, ուզում եմ ոռնալ ու բղավել ամբողջ ձայնով, ետ տալ և կանգնեցնել ժամանակը:

- Ինչպե՞ս թե: Դու մասնակցել ես պատերազմի՞ն, - Աննայի գլխում նորից ամեն ինչ խառնվեց իրար: Չգիտեր՝ անհանգստանա՞ր, որ տղային կարող էր լիովին կորցրած լինել ռազմաճակատում, թե՞ ուրախանար, որ նա ողջ և առողջ վերադարձել էր արդեն: Բայց չէ՞ որ իրականում նա հենց մեկնելուց առաջ իսկ արդեն ողջ չէր, և այդ ամենն ի՛ր մեղքով: Մայրը մտքում կռիվ էր տալիս ինքն իր հետ անվերջ կրկնելով. «Աստվա՛ծ իմ, մարդիկ իրենց կյանքն անգամ չեն խնայել ու կռվել են հանուն հայրենիքի՛, հանուն սիրած աղջկա, հանուն սիրասուն ծնողների, իսկ ես հանուն ոչնչի սպանել եմ իմ նորաստեղծ տղային: Ես ինձ չեմ կարող ներել, Աստծուց ինչպե՞ս ներում հայցեմ»:

- Հա, մա՛մ ջան, մասնակցել եմ հենց առաջին իսկ օրերից: Չէ՞ որ ես կարող եմ երբեմն-երբեմն լքել

իմ ապահով կացարանը, աշխարհով մեկ ուր ասես գնալ ու նորից վերադառնալ իմ մայրական լուսավոր օջախ, - ասաց Բալոն: - Երբ կամավորների ջոկատի հետ ես ու ընկերս՝ Դավոն մեկնեցինք ռազմաճակատ, - շարունակեց նա, - Դավոն անգամ իմ գոյության մասին տեղյակ էլ չէր և նույնիսկ չգիտեր, որ ինքն արդեն իմ տասնութ տարվա ընկերն էր: Իսկ մեր ջոկատի տղերքը, մա՛մ, նրանք իմ ախպերներն էին, նրանք հիմա…

Որդու ձայնը դողաց ու նա մի պահ լռեց:

- Դու ցնցվում ես, տղե՛ս, գուցե պետք չէ, որ հիմա պատմես, - փորձեց նրան ընդհատել Աննան, բայց Բալոն կարծես ոչինչ չէր լսում: Նրա ականջներում նորից վիրավորների ճիչերը միախառնվել էին անողոք կրակոցների հետ, խլացուցիչ պայթյունները ցնցում էին երկիրը:

- Լսո՞ւմ ես, մա՛մ, լսո՞ւմ ես փամփուշտների սուլոցները: Շուրջս իմ ընկերներն են կատաղի կռվում, ոմանք գոռալով ինչ-որ մարտական հրամաններ են տալիս, մյուսները ցավից մռնչում են, լսո՞ւմ ես: Ուր որ է կվերսկսվեն մեր ուղղությամբ նետվող արկերի պայթյունները և…

Բալոն ամուր սեղմեց արդեն իսկ փակ աչքերն ու ձեռքերով ծածկելով ականջները սկսեց ամբողջ ձայնով գոռալ.

- Կա՜նգ առեք, սրիկանե՛ր, կա՜նգ առեք:

- Բալո՛, Բալո ջան, հանգստացի՛ր, բալես, դու հիմա տանն ես, իմ կողքին, - այս ասելով Աննան ջրով լի բաժակը մեկնեց նրան, - առ խմի՛ր, բալե՛ս, արի էլ պատերազմի մասին չհիշենք:

Բալոն սթափվեց ու մի փոքր խոժոռված դեմքով դիմեց մորը.

- Ի՞նչ ես ասում, մա՛մ ջան, չհիշե՞նք պատերազմը, չհիշենք մեր հերոսների՞ն, չհիշենք մեր զինվորների սխրանքնե՞րը: Ցեխն ու արյունը խառնվում էին նրանց կոշիկների տակ, մա՛մ, երբ առաջ էին մղվում՝ վճռականորեն պահպանելու իրենց դիրքերը: Դավոյի համազգեստը պատռված էր ու բոսորագույնով թաթախված: Մի փամփուշտ դիպել էր նրա թևին՝ մյուսը՝ կողքին: Ամեն շունչ քաշելուց նրա ցավն ավելի ու ավելի էր սաստկանում, բայց նա հրաժարվում էր թուլանալ, մա՛մ: Ատամները ցավից սեղմելով՝ մի կերպ վիրավոր ձեռքով քաշում էր հրացանի ձգանը, իսկ մարմինը դողում էր

հոգնածությունից ու արյան կորստից: Երբ հրամանատարը գոռաց. «Դադարեցնե՛լ կրակը, նահանջո՛ւմ ենք…», նա խենթի նման դուրս ցատկեց խրամատից ու ամբողջ հասակով մեկ կանգնեց՝ շարունակելով կրակել: Աչքերիս առջևից չի հեռանում այդ պատկերը, մա՛մ ջան: Ընկերներիցս ամենատարիքովն առանց վարանելու՝ կրակների միջով վազեց Դավոյի ուղղությամբ: Նա գետնին տապալեց ընկերոջս ու մեծ դժվարությամբ քարշ էր տալիս նրան՝ հանելով կրակագծից, իսկ Դավոն փորձում էր դուրս պրծնել այդ ամուր ձեռքերից ու մի գլուխ կոկորդը պատռելով գոռում էր. «Բիձա՛, թո՛ղ ինձ, բա՛ց թող ինձ, Բիձա՛, ես մինչև կյանքիս վերջին վայրկյանը պիտի սատկացնեմ դրանց: Բիձա՛, քեզ ասում եմ բա՛ց թող ինձ»: Բիձան այդ տարիքավորի մականունն էր, մա՛մ ջան, իրականում՝ նա ընդամենը հիսուներկու տարեկան էր:

- Բալո ջան, Դավոյին կարողացա՞ք փրկել, - զգուշորեն հարցրեց Աննան:

- Հա՛, փառք Աստծո, աստվածատուր բժիշկների շնորհիվ նա հիմա ողջ է, չնայած անվասայլակով է տեղաշարժվում: Նրա նման շատ ու շատ վիրավոր

տղաներ էլ փրկվեցին: Նրանք ընկած էին անօգնական ու անհույս, ցեխակոլոլ շորերով: Կիսամութի մեջ շատ դժվար էր տարբերել դեռ կենդանի մնացածներին: Մա՛մ ջան, իրականում ես էլ ճիշտ քեզ նման, ինձ չկորցրեցի դժվար պահին: Այդ բարդ իրավիճակից դուրս գալու ձևը գտա: Բռունցքի չափ փոքր կարմիր լույսի վերածվեցի ու թևածելով զոհված մարմինների վրայով արագ հայտնաբերեցի վիրավորներին: Իմ թեթև լույսը գցելով նրանց վրա օգնում էի փրկարար տղաներին գտնել բոլորին՝ մեկ առ մեկ: Սիրտս կանգնում էր, երբ պատկերացնում էի, որ որևէ վիրավոր կարող էր գերի ընկնել:

- Վա՛յ, քոռանամ ես, բալե՛ս, էս ինչերի՞ միջով ես անցել, Բալո՛ ջան, իմ հերո՛ս տղա: Միայն լույս տալով այդքան զինվոր ես փրկել, պատկերացնում եմ ի՛նչ սխրանքներ կգործեիր, եթե ծնված լինեիր, ա՛խ, իմ խրո՛խտ տղա, - ասաց Աննան ու համբուրեց որդու ճակատը:

- Բայց դա դեռ բոլորը չի, մա՛մ: Վերջին վիրավորին հիվանդանոցում թողնելով՝ քամու արագությամբ սլացա ետ՝ մարտնչող ընկերներիս մոտ: Երբ տեղ

հասա, ոչ ոք, ոչ ոք այլևս կենդանի չէր, մա՛: Նրանց մարմինները և ասես իմ հոգին էլ նրանց հետ, ցիրուցան ընկած էին ցեխակոլոլ ու արնաշաղախ, - Բալոն դեմքը ձեռքերով ծածկելով՝ փլվեց մոր գոգին:

- Ցեխն ու արյունը, մա՛մ, խառնվում էին թշնամու զինվորների կոշիկների տակ, երբ այդ սրիկաներն առաջ էին մղվում տրորելով իմ սիրտն ու քաջ ընկերներիս դիակները:

Բալոն փղձկաց ու նրա անզուսպ հեկեկոցն ազատություն ստանալով՝ պատեպատ բախվեց և հասկանալով, որ այդ պատերից միևնույնն է այլևս չի կարող դուրս գալ՝ մի կերպ հանդարտվելով նորից թաքնվեց տիրոջ անչափ բարի հոգու մեջ:

- Մեր ջոկատի տղերքը, - մի կերպ ինքն իրեն տիրապետելով շարունակեց նա, - էլ չկան, մա՛մ ջան, էլ չկա՛ն: Բոլորն էլ զոհվեցին՝ հաղթանակը սրտներում պահած: Նրանք այնքան երիտասարդ էին, ախր, մա՛մ, այնքան ընկերասեր: Շատ էին սիրում երգել: Երբ քայլում էինք, մեր հայրենիքի անկոտրում ոգին էր թնդում նրանց երգերի բառերից: Իսկ երբ նստում էինք կարճ դադարի, իրար հետ զրուցելու փոխարեն՝ երգում էին սիրած

էակին նվիրված կամ էլ մայրական կարոտի մասին երգեր: Ես հենց այդ երգերից էլ հասկացա՝ հայրենիքը քեզ նման է, մա՛մ, քեզ նման միակն ու քեզ նման անփոխարինելի, քեզ նման անկոտրում ու… Մա՞մ, մա՛մ ջան, ի՞նչ եղավ քեզ, ուշքի արի, մա՛մ, մա՛մ ջան, աղաչում եմ, ցավդ տանեմ, բաց աչքերդ, ես չեմ կարող կորցնել քեզ…

Աննան ուշագնաց ընկած էր ճոճաթոռին: Նրա ոտքերից մեկը գետնին էր հասնում, մյուսն էլ թեթև տատանվում էր օդում, քանի որ Բալոն մոր ուսերը ցնցելով փորձում էր ուշքի բերել նրան: Երբ նույնիսկ երեսին լցված բաժակի սառը ջուրն անգամ ոչ մի օգուտ չտվեց, որդին խառնվեց իրար. «Ախր, ես ինչո՞ւ էի այդ դաժան մանրամասները պատմում այդքան փխրուն ու բազմախոնջ տառապանքների միջով անցած մորս: Ի՜նչ անարժան զավակ եմ ես: Եթե մի բան պատահի նրան, ես ինձ երբեք չեմ ների», - անընդմեջ մտքում կրկնում էր Բալոն:

- Աստվա՜ծ ջան, աղաչում եմ, փրկի՜ր, փրկի՜ր մորս կյանքը, - հուսահատ հայացքը մութ երկնքին դարձնելով՝ մրմնջաց նա, - խոստանում եմ՝ այլևս իմ աղեմորմոք հիշողություններով չեմ տանջի նրան,

միայն թե փրկի՛ր նրան, խնդրում եմ: Խոստանում եմ, որ կհեռանամ նրանից, ինչքան էլ դժվար լինի ինձ համար: Ես միայն կաղոթեմ նրա ու Նանեիս համար, կաղոթեմ անվերջ ու շատ հեռվից, միայն թե մորս ոչինչ չպատահի, աղաչում եմ:

Վայրկյանը ժամ թվաց Բալոյի համար, իսկ մի քանի րոպեն՝ հավերժություն:

Երբ Աննան վերջապես բացեց աչքերը, Բալոն պատուհանի մոտ նստած, մի տեսակ տխուր ժպտում էր: Նա իր որոշումն արդեն կայացրել էր: Շուտով լքելու էր հարազատներին, իր այդքան ապահով լուսավոր կացարանը և նաև հարազատ դարձած իր տունն ու քաղաքը, նույնիսկ ընկերոջը՝ Դավոյին:

- Բալո՛ ջան, ի՞նչ է պատահել, բալես, ինչո՞ւ ես այդպես դժբախտ տեսքով նայում ինձ վրա:

- Ես քեզ շատ-շատ եմ սիրում, մա՛մ ջան, այդ պատճառով էլ պիտի ընդմիշտ հեռանամ, որ դու կարողանաս երջանիկ ապրել:

- Ինչպե՞ս թե ընդմիշտ: Մի՞թե չասացիր, որ այսուհետ մեզ հետ ես ապրելու, - տագնապով լի հայացքը նրան ուղղելով հարցրեց Աննան, - և հետո առանց քեզ ի՞նչ երջանկություն:

- Ամեն անգամ ինձ տեսնելիս դու միշտ ցավ ես զգալու քո կատարածի համար, - ասաց Բալոն: Նույնիսկ, եթե ամենազոր երկնային Աստվածն էլ քեզ ներած լինի, քո խիղճ կոչվող ներքին Աստվածն ինքը երբեք չի ների քեզ, և կյանքդ դժոխքի կվերածվի: Այս անգամ առանց բժիշկների միջամտության, ե՛ս եմ որոշել դուրս նետվել երկրի վրա իմ գոյատևման լուսավոր կացարանից, անդառնալիորեն սլանալու դեպի հավերժություն: Միգուցե, սա անհանգիստ հոգիների երկրային ինքնասպանությո՞ւն է, չգիտեմ: Այս քայլին գնում եմ ի՛մ կամքով ու հանուն քեզ, մա՛մ ջան: Մնա՛ս բարով, իմ ամենաթանկագի՛ն էակ, իմ մա՛մա:

Մայրն անհագ սիրով մոտեցավ որդուն, անցած տասնինը տարիների կարոտը սրտում փաթաթվեց նրան ու այնպես ուժգին սեղմեց կրծքին, որ երկուսի շունչն էլ կտրվեց:

- Մա՛մ ջան, մի խեղդիր ինձ քո սիրով, քո այդ տղան էլ չկա:

- Չե՛մ հավատում, չե՛մ հավատում, - մղկտաց Աննան, - ախր, ես այս ի՞նչ արեցի, երբ բարեգութ Աստծված որպես մի պարգև էր քեզ շնորհել ինձ:

Աստվա՛ծ իմ, ների՛ր ինձ, ների՛ր, մի խլի՛ր տղայիս ինձնից, աղաչում եմ, ախր ես Է՛լ չեմ դիմանա:

- Խնդրում եմ, մա՛մ ջան, շատ եմ խնդրում, միշտ հիշիր, որ կյանքիցս առավել սիրում եմ քեզ: Ես այսուհետ կապրեմ միայն քո հիշողության մեջ, իսկ այնտեղ, խնդրում եմ, միայն լավ հիշողություններդ պահիր ու մի՛ մեղադրի՛ր քեզ, որ ե՛ս էլ դրանց մեջ գտնվելով՝ ինձ երջանիկ զգամ: Աղաչում եմ, խոսքս փոխանցի՛ր աշխարհի բոլոր մայրերին, - խորը ճիգով մի կերպ հեկեկոցը զսպելով ձայնեց Բալոն:

Հայացքն օդի մեջ պտտելով նա բարձրաձայն դիմեց իրենց կամքով հղիությունն ընդհատած բոլոր մայրերին. «Լսեցե՛ք դուք, բոլո՛րդ: Դուք կարծում եք, թե մենք՝ նորաստեղծ ապագա մարդ արարածներս, դեռ այնքան փոքր ենք, որ ոչինչ էլ չե՞նք զգում: Ախր, մենք նույնիսկ այդ պահին արդեն հոգի ունենք ու ապրելու իրավունք, ախր, Աստծու չափ սիրում ենք ձեզ և նաև մեր ապագա աշխարհը՝ Երկիր մոլորակը: Մի՛ սպանեք, աղաչում եմ, մի՛ սպանեք մեզ այլևս, մենք ծնվել ու ապրել ենք ուզում»:

Հանկարծ սենյակը մթնեց, ասես անտեսանելի մի ձեռք չրխկոցով անջատեց էլեկտրական լույսերը:

Կարմիր, բոցեղեն, բռունցքի չափ մի լուսե գնդիկ սենյակում պտտվեց ու վերջին անգամ քնքշանքով ժպտաց իր հայրական տան պատերին, իր փոքրիկ քրոջը՝ Նանեին, իր սիրասուն մորը և այս դաժան ու նենգ աշխարհից խիստ դառնացած հոգով, կարոտն իր սրտում երկինք սլացավ:

Դառնահեծեծ քամու անողոք հարվածներից վիրավորված՝ պատուհանների փեղկերը նորից շխկշխկացին գիշերային խավարի մեջ, իսկ անձրևն իր մայրական հոգատարությամբ ու փաղաքշանքով նորից շտապեց լվանալ լացող պատուհանների ապակիներից հոսող հորդառատ արցունքները:

- Ինձ կներե՞ս, Բալո՛, - ճչաց մոր մեղավոր լռությունն ու կորավ խավարում:

ՁԵՐՄՈՒԿ

Շուրջս համատարած լռություն է…

Առավոտյան այս ժամին մարդիկ կամ քնած են, կամ էլ աշխատատեղերում են արդեն: Փողոցը, որով քայլում եմ, կարծես խոժոռված հայացքով հետևում է

իր անդորրը խաթարող իմ ամեն մի ոտնահետքին՝ փորձելով գուշակել, թե ինչ է սպասվում ինձ առջևում: Ես բանտի շենքից ներս եմ մտնում, իսկ ձեռքիս դատարանի որոշումն է: Այո, այո, առանց ձեռքերս մեջքիս ետևում ոլորելու՝ իմ սեփական ոտքերն իմ նման համեստ, քառասունամյա կնոջը բանտ են բերել:

Վաղ առավոտյան դատավորը շատ տարօրինակ և նախադեպը չունեցող որոշում է կայացրել: Նա լիովին արդարացրել է ինձ, բայց գործը փակված համարելու համար պարտադրել է մուտքագրվել Լոս Անջելեսի բանտերից որևէ մեկում՝ ըստ իմ ցանկության: «Իհարկե, այսօր արդեն կարող ենք պնդել, որ այդ օրը բանտ տանելը սխալ կարգադրություն էր - ասել է դատավորն իմ փաստաբանին, - բայց ոստիկանը, իրավունք չուներ ձեռնաշղթաներ հագցնելու փոխարեն ազատ թողնելու ինքնուրույն որոշում կայացնել»:

Ընտրել եմ մոտակա բանտը, որն ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի հայաշատ Բըրբանկ քաղաքում է: Շենքի դռնից մտնելով՝ քայլում եմ նեղ ու երկար միջանցքով մինչև վերջ, որտեղ ձախ

կողմում սպասարկման համար մի փակ պատուհան է և փակ դուռ: Ոչ ոք չկա, որ հարցնեմ՝ հիմա ի՞նչ պիտի անեմ: Թակում եմ պատուհանը:

Փեղկը վեր է բարձրանում, և մի երիտասարդ աղջնակ, բնից գլուխը դուրս հանած վախեցած մկնիկի նման, հայացքն ուղղում է վրաս, հետո վիզն ավելի առաջ երկարելով աջ ու ձախ է նայում ստուգելու՝ ուրիշ էլ ո՞վ կա ինձ հետ:

- Բարև Ձեզ, սա է չէ՞ Բըրբանկի քաղաքային բանտը, - հարցնում եմ, - ես ճի՞շտ եմ եկել:

Անգլերենս այնքան էլ անթերի չէ, և նա գլխի շարժումով դրական պատասխան տալուց հետո արևմտահայերենով առաջարկում է.

- Հայ ե՞ս: Կրնաս հայերեն խոսիլ:

Շատ եմ ուրախանում, այլևս անգլերենը չեմ խառնի ռուսերենի հետ կամ էլ համրի պես ձեռքերիս օգնությանը չեմ դիմի, երբ անգլերեն ինչ-որ բառեր մոռանամ:

Ես ժպտում եմ նրան իմ հազար տարվա ծանոթի նման: Նա շատ վախեցած աչքեր ունի:

- Այսօր առաջին օրն է, որ հոս կ’աշխատիմ, - կմկմում է նա, - ինչո՞վ կրնամ օգնիլ քեզի:

- Դե ինչ, սրտանց շնորհավորում եմ Ձեզ առաջին աշխատանքային օրվա կապակցությամբ, - ասում եմ ես մտերմաբար: Նկատելով ձեռքիս մեծ և փքված պայուսակին սևեռված նրա մի տեսակ կասկածամիտ հայացքը՝ հարցնում եմ.

- Ձերմուկ կուզե՞ք, պայուսակումս մի քանի հատ դեռ մնացել է:

- Օ՛ ոչ, ես մուկ չեմ սիրեր, կը վախնամ մուկէն, - սրախոսում է նա, - մանաւանդ, որ այդ մուկը ջերմ մուկ է:

Կատակը գնահատող ժպիտով նրան եմ մեկնում դատարանի կողմից տրված թուղթն ու անձս հաստատող լուսանկարով մի փաստաթուղթ:

- Բայց հոս գրուած է, որ բանտարկեալը դուն ես, - զարմացած ինձ է դիմում սկսնակ աշխատակցուհին, ո՞ր ոստիկանները քեզ հոս բերին: Ո՞ւր են անոնք:

Գլուխը ևս մեկ անգամ աջ ու ձախ թեքելով հավաստիանում է, որ իրոք ամբողջ միջանցքում ուրիշ ոչ ոք չկա և աչքերի մեջ շողացող բոլոր հարցականներն ուղղում է վրաս:

- Ես ի՛նքս եմ եկել, - ասում եմ, - պետք է իմ անունը նշված լինի ձերբակալվածների ցուցակում: Երկու

ամիս առաջ ոստիկանն ինձ չկալանավորեց, բայց այսօրվա դատավորն այնքան արդարակորով էր, որ պահանջեց այնուամենայնիվ բանտ մտնել և...

- Վայրկեան մը սպասէ, - ընդհատում է ինձ պատուհանից այն կողմ գտնվող այդ անփորձ աղջնակի շփոթված ձայնը, - խառն բաներ կը խօսիս, սպասէ հիմայ մեծաւորիս կը հարցնեմ ինչ պիտի ընենք:

Նա արագ փակում է պատուհանը, և ես նորից հայտնվում եմ միայնակ կանգնած այդ դատարկ միջանցքում:

Երկու րոպե անց պատուհանի կողքի դուռը բացվում է, և իմ ծանոթ հայ աշխատակցուհին անսպասելի կոպիտ տոնով հրամայում է.

- Պայուսակդ պատուհանէն տուր ինծի և ներս եկուր:

Ոտքս դռնից ներս դնելուն պես նա մի ցատկով հայտնվում է կողքիս և կարծես ինձ գետնին տապալելու պատրաստ՝ «ձյուդո» մարզաձևի նոր սովորած ինչ-որ հնարքի ելման դիրք է ընդունում: Մեջքիս ետևից ցավեցնելու աստիճան ամուր գրկում

է գոտկատեղս, իսկ մյուս ձեռքով սեղմելով իր մարմնին հպված թևս ասում է.

- Դուն այս գետնին հաստ գիծը կը տեսնա՞ս: Այս գիծով մենք կ'երթանք մինչև վերջ, չփորձե՛ս փախուստ տալ:

Այս ասելով ամբողջ մարմնով ու ձեռքերով պիրկ կպած ինձ՝ սկսում է քայլել իմ կողքով: Մեզ նայողին կարող է թվալ, թե մեկ մարմին ենք, որն ունի չորս ոտք ու երկու գլուխ: Շատ ծիծաղելի է: Այնպես է սեղմվել կոնքիս ու վախից դողում, կարծես ես մի խիստ վտանգավոր հանցագործ եմ ու հիմա իրեն վնասելով փորձելու եմ դուրս պրծնել իր ձեռքից:

- Ներեցե՛ք, - ինչո՞ւ եք կարծում, որ պիտի փախչեմ, չէ՞ որ ես առանց ոստիկանի ուղեկցության եմ եկել, եթե ուզենայի փախչել, ինչո՞ւ պիտի ինքնակամ գայի այստեղ:

Նա այնքան շփոթված է և վախեցած, ամբողջովին դողում է: Ես դա զգում եմ կողքիս հպված նրա մարմնի փոքրիկ ցնցումներից: Աղջնակը ոչինչ չպատասխանելով՝ իր ձեռքերով ստեղծած օղակի մեջ ավելի ուժգին է սեղմում գոտկատեղս: «Քիչ առաջ ինձ հետ մտերիմ զրույցի բռնված

կատակասեր հայուհին ինչո՞ւ հանկարծ այսպես կերպարանափոխվեց, - մտածում եմ, - տեսնես ի՞նչ պատահեց, երևի թե ես իր աշխատանքային առաջին օրվա առաջին կալանավորն եմ»:

Ես կողքերս ոչինչ չեմ տեսնում, քանի որ նայում եմ միայն գետնի վրա ներկած այն գծին, որին հետևելով, իրար կպած, մի կերպ առաջ ենք շարժվում՝ անընդմեջ կոնքերով հրելով ու խանգարելով միմյանց: Քայլում եմ, և մի պահ հոգիս ցավում է, երբ պատկերացնում եմ, թե ինչքան անմեղներ և՛ս քայլած կլինեն այս հոծ գծի վրայով՝ չիմանալով, թե ինչպես այս ստի աշխարհում կհաջողվի ապացուցել իրենց արդար ու ազնիվ լինելը:

«Ի՜նչ լավ է, որ ես արդեն արդարացված եմ ու վստահ եմ, որ բանտախուց տանող դռներն այդպես էլ փակ կմնան իմ առջև», - այս մտքից այնպիսի երջանկությամբ եմ համակվում, որ կարմիր շրթներկով երիզված ժպիտս դեռ երկար ժամանակ չի անհետանում դեմքիցս:

Ոլորապտույտ ուղեգիծն ավարտվում է ինչ-որ գրասեղանի մոտ, որի դիմաց նստած տղամարդը

լրացնում է համակարգչի մեջ իմ անունն ու անձիս վերաբերող որոշ տվյալներ:

- Կանգնե՛ք այս պատի մոտ նկարվելու, սկզբում՝ դիմացից, հետո՝ կողքից, - վերջացնելուց հետո ավելացնում է նա:

Նկարվելու պահին կիսաբաց շրթունքներով շարունակում եմ ժպտալ՝ փորձելով նմանվել հոլիվուդյան որևէ դերասանուհու, իսկ աչքերս ճառագում են երջանկությունից: Համոզված եմ, որ երբեմնի իմ ունեցած բոլոր լուսանկարներից այս մեկն ամենագեղեցիկն է, ափսոս, որ ինձ չեն տա սրա պատճեն:

Ես անչափ երջանիկ եմ ոչ միայն այն պատճառով, որ մի քանի րոպե անց դուրս կգամ փողոց ու կշնչեմ ազատության բույրը, թեկուզև տաքացած մայթերի ու մեքենաների ծխով համեմված, այլ նաև՝ երեկոյան դիմավորելու եմ շատ թանկագին հյուրիս: Իմ մանկությունից պոկված մի պատառիկ, դպրոցական կանաչ նստարանների վառ հիշողություններով արբած և տատիկ-պապիկիս կարոտի բուրմունքով շաղախված՝ Հայաստանից ժամանելու է ԱՄՆ: Անհամբեր սպասում եմ դիմավորելու նրան՝ իմ

ամենամտերիմ ընկերուհուն: Ինչպես միշտ նետվելու ենք մեր մանկության գիրկը, հիշելու ենք ու ծիծաղենք միամիտ և զվարճալի արարքների վրա:

Նրա ամուսինն ապրում է այստեղ և ամեն անգամ պատահաբար հանդիպելիս՝ առիթը բաց չի թողնում ասելու.

- Հիշո՞ւմ ես, մի ժամանակ Հայաստանի հետ հեռախոսակապը շատ թանկ էր, - սկսում է այս հարցադրումով ու շարունակում, - դժվարությամբ էր հաջողվում գումար հատկացնել մի քանի րոպե խոսելու համար: Երբ երկու ընկերուհիներով օվկիանոսի տարբեր կողմերից զանգում էիք իրար, դեռ միմյանց ձայնն անգամ չլսած, սկսում էիք կարոտից ողբաձայն հեկեկալ, և «բարևը» դառնում էր այն միակ բառը, որ կարողանում էիք արտաբերել մինչև հեռախոսակապի ընդհատումը:

- Իհարկե, հիշում եմ, ինչպե՞ս չէ, - ամեն անգամ հավաստիացնում եմ նրան և ավելացնում, - այդպես շարունակվեց համարյա վեց ամիս անընդմեջ:

- Այդքան գումար իզուր տեղն արցունքների վրա ծախսելու փոխարեն, - մշտապես հեգնում է նա, - մի ժամ ընտրեիք, և ամեն մեկդ այդ ժամին ձեր տներում

ինչքան ուզում էիք, լաց լինեիք: Զանգելու գումարն էլ կխնայեիք ու կփոխանցեիք Հայաստանում ապրող մի կարիքավորի:

Որպես կանոն՝ ես նրան մինչև վերջ չեմ կարողանում լսել: Ընկնում եմ հիշողություններիս գիրկն ու մտքում փորձում վերականգնել հեռախոսակապի մյուս ծայրից ասված այդ միակ բառը՝ «բարևը»: Այդ բառի մեջ է իմ կարոտը հայրենի բնօրրանի ու իմ հայրական տան, մեր անցկացրած օրերի, մեզ դպրոց ուղեկցող պապիս ու վերադառնալիս ժպտացող տատիս ջերմության, ականջ շոյող իմ ոսկեղենիկ հայերենի և այդ լեզվով խոսող ծանոթ ու անծանոթ մարդկանց հանդեպ:

«Շուտով նա այստեղ կլինի», - ցնծում է հոգիս: Երջանկության ժպիտներս ժայթքում են հոգուս խորքից և անվերջ դիպչելով բանտի նախաշեմի այս գրասենյակի պատերին, հազար մասերի բաժանված նորից ետ են ցայտում վրաս, ավելի ու ավելի զվարթացնելով ինձ:

Նկատում եմ, որ աշխատասեղանների մոտ նստած երկու անտարբեր և սառը դեմքերով կանայք գրանցում են իմ ամեն խոսքն ու շարժումը:

Վերջացնելով իրենց մատների թմբկահարումը համակարգչի ստեղներին՝ նրանք ինձ են սևեռում մռայլ ու խիստ հայացքները, որոնք կարծես լռելյայն ասում են. «Սա ոչ միայն հանցագործ է, այլև՝ խենթ»: Ես ժպտում եմ նրանց, երևի այսքան ուրախ ու զվարթ բանտարկյալ երբեք չեն տեսել: Նրանց տրամադրությունը բարձրացնելու համար փորձում եմ հաճոյախոսել.

- Դուք էլ շատ գեղեցիկ եք այսօր, ձեր երկուսի մազերի գույներն էլ անչափ հմայիչ են, չնկարվե՞նք միասին, - և մի կարճ ծիծաղով հասկացնում եմ, որ սա կատակ է, պետք չէ ավելի մռայլվել:

Նրանք բարկացած հայացքներ են նետում վրաս և ավելի են խոժոռվում, քանի որ չգիտեն, թե ինչ պատճառով եմ հայտնվել բանտում:

- Վե՛րջ, կրնաք երթալ, - հայտարարում է հայուհին և շտապում առաջ անցնել՝ իմ առջև բացելու դուրս տանող դուռը:

- Լավ օր եմ Ձեզ ցանկանում, - ուրախ ձայնով դիմում եմ նրան:

Նա շրթունքները մոտեցնում է ականջիս ու շշնջում.

- Անկեղծ պիտի ըլլամ: Այսպիսի տարօրինակ դէպք մը ես չեմ լսած՝ մարդ ա՞լ իր ոտքով բանտ կը մտնէ և անմիջապէս դուրս կու գայ: Արդեօ՞ք կրնամ դիմանալ այս գործին մէջ:

- Այո՛, իհարկե կդիմանաք: Ես նկատեցի, Դուք ջանք չէիք խնայում ամեն ինչ ճիշտ անելու համար: Մնա՛ք բարով, հուսով եմ, այլևս երբեք չենք հանդիպի:

Նա զարմացած նայում է վրաս:

- Նկատի ունեմ ա՛յս պատերի ներսում, - իմ սխալի վրա ծիծաղում եմ ես:

- Յաջողութիւն եւ բարի ճանապարհ քեզի, - ժպտում է նա և անհետանում փակվող դռան ետևում:

Դրսում կանգնած ինչ-որ մեքենայից հնչում է ականջներիցս հոգուս մեջ ներխուժող Արտո Թունջբոյաջյանի երգեցողության ախորժալուր ձայնը. «Ա-րա-րա՛տ, մերի սիրուն Ա՛-րա-րատ...»: Երգչի ձայնն ու երգի բառերն ավելի են թարմացնում իմ շուրջն ազատության զգացումով հագեցած օդը, իսկ տաքացած մայթերի ու մեքենաների թեթև ծխի

բույրն էլ արդեն այնքան աննշան է թվում, որ ուզում եմ անվերջ թափառել փողոցներով ու պուրակներով:

Մտնում եմ դիմացի այգին: Երեխաներից մի քանիսը հեծանիվ են քշում, մյուսները՝ մայթեզերքին նստած, ձանձրացած նայում են հեռախոսներից երբեք չձանձրացող ծնողներին: Երիտասարդները սպորտային կեցվածքով քայլում են ականջակալներն ականջներին: Խենթ ու խելառ աշունն էլ իր ձանձրույթը փարատելու համար երբեմն-երբեմն խառնափնթոր գույների չորացած տերևներ է նետում նրանց ուղղությամբ՝ ամեն կերպ փորձելով ուշադրության կենտրոնում հայտնվել:

Օդում թևածող ձանձրույթի այդ թմբիրն ինձ էլ է պատում, և այնպես հրապուրիչ է դառնում գեթ մեկ օր ոչինչ չանելու գաղափարը, որ որոշում եմ տուն չգնալ: Նստարանին նստելով վայելում եմ պայուսակիցս հանած հանքային ջուրը՝ ջերմուկը: Դա միակ միջոցն է, որն ինձ լիովին փրկում է ծարավից: Այն խմում եմ հենց շշից՝ կում-կում, վայելելով նրա պղպջակներից առաջացած հաճելի ծակծկոցները քիմքիս վրա և մտովի սավառնելով Ջերմուկի անտառների վրայով՝ իջնում եմ մի բարձր

ժայռի վրա: Արծվահայաց նայելով ցած՝ ինձ այնպես հզոր եմ զգում, ինչպես որ հզոր են մեր քարերն ու ժայռերը, մեր սարերն ու անտառները, մեր հայրենասեր քաջերը, մեր ժողովուրդը:

Նստարանների կողքով քայլող ոստիկանը մի քանի մետր հեռավորությունից ինչ-որ բան է ասում ինձ: Նրան լսելու կամ հասկանալու համար ես դեռ Ձերմուկի սարերից պիտի վայրէջք կատարեմ այստեղ՝ այս նստարանի վրա: Մի քանի ակնթարթ չհասկացողի անքթիթ հայացքով նրան եմ նայում: Նկատում եմ, որ շրջապատի մարդիկ էլ իրենց հեռախոսներից կտրվելով՝ ոստիկանի հետ միասին ինձնից ինչ-որ պատասխան են ակնկալում:

- Ի՞նչ, - դիմում եմ ոստիկանին, - Դուք ի՞նձ հետ եք:

Ոստիկանը պատասխանի փոխարեն հանդարտ ու հանդիսավոր մոտենում է ինձ և ձեռքիս շիշը մատնացույց անելով հարցնում.

- Ի՞նչ ոգելից խմիչք եք Դուք հիմա խմում: Այգում արգելված է դա:

Ես նրան եմ մեկնում ջերմուկիս կիսատ շիշը՝ բացատրելով.

- Սա պարզապես հանքային ջուր է, Հայաստանից է:

Իրականում մի փոքր անհանգստանում եմ: «Կարո՞ղ է պատահաբար չհասկացող ոստիկան է դիմացս կանգնածը, - մտածում եմ, - և ես երկրորդ անգամ, դարձյալ ջերմուկի շշի պատճառով, թյուրիմացաբար կհայտնվեմ այն բանտում, որտեղից քիչ առաջ դուրս եկա»: Ոստիկանը վերցնելով շիշը կարդում է փոքր տառերով գրված տեղեկությունը: Փառք Աստծո, բացի հայերենից նաև անգլերեն է գրված:

- Կներե՛ք, - ասում է, - կարծեցի գարեջրի շիշ է, հեռվից այդպիսի տպավորություն թողեց:

Ոստիկանի հեռանալուց հետո մի պահ ուրախանում եմ, որ ըմբռնումով մոտեցավ, բայց նաև ակամա հիշում, որ երկու ամիս առաջ պատահած դեպքի համար կանչված ոստիկանն էլ ըմբռնումով հեռացավ, բայց համակարգը չհարգեց նրա մարդկային որոշումը: Արդյունքում՝ տարբեր աշխատանքների դիմելիս հարցաթերթիկներում «բանտ ընկե՞լ եք» հարցին ես այսօրվանից սկսած պետք է «այո» պատասխանեմ: Լավ վարձատրվող

աշխատանք գտնելու հույսս կարծես մի փոքր նվազում է:

Նայելով ձեռքիս ջերմուկի շշին, մի պահ հիշում եմ երկու ամիս առաջ պատահած չարաբաստիկ, բայց շատ ծիծաղելի այն պատմությունը, որի պատճառով էլ քիչ առաջ մուտքագրվեցի բանտում:

Դեպքը պատահեց ամռանը: Անգլերեն լեզվի սկսնակների դասընթացների էի մասնակցում: Ուսուցչուհին երիտասարդ հայ կին էր: Նա հաճախ փոքր խմբերի բաժանելով և սեղանների շուրջ միավորելով տարբեր առոգանությամբ անգլերեն խոսող ուսանողներին՝ հնարավորություն էր տալիս զրուցել միմյանց հետ: Իմ խմբում արդեն ծանոթացել էի հրեա, պարսիկ, ազերի ու մեքսիկացի ուսանողների հետ: Ծարավելիս նրանք անմիջապես հենց շշերից էլ խմում էին ջուրը: Ես նույնպես սովորեցի առանց բաժակի խմել, բայց միշտ ջրի փոխարեն ջերմուկ էի խմում:

- Կարելի՞ է իմանալ՝ ինչ ես խմում, - այդ օրն ինձ հարցրեց կողքիս նստած մեքսիկացի պատանին, - այնպիսի մեծ բավականությամբ ես խմում, հետաքրքիր է, ի՞նչ համ ունի:

Հիշում եմ, թե ինչ հպարտությամբ էի պատմում իմ հայրենի Ջերմուկ քաղաքի բնական աղբյուրների և առողջարանների մասին: Նրանք բոլորն էլ հետաքրքրությամբ լի աչքերն ինձ հառած ուշադիր լսում էին, իսկ իմ ամեն կումն անելիս էլ կարծես փորձում էին գուշակել, թե ինչ համ կունենար այդ հանքային հեղուկը:

- Ես ձեզ խոստանում եմ ընդմիջման ժամին մեքենայիս միջից բերել ջերմուկներով լի մի փոքր արկղ, - ասացի նրանց, - և արդեն դասը սկսվելուն պես դուք կարող եք վայելել այս անմահական հանքային ջուրը: Եթե հավանեք, կարող եք գնել հայկական խանութներից:

Հեռախոսս անընդհատ զնգում է, և ջերմուկով հետաքրքրվող դասընկերներիս մոտից նորից հայտնվում եմ այգում՝ նստարանի վրա:

Ծանոթներս են անհանգստանում: Ուզում են իմանալ, թե ինչով ավարտվեց իմ դեմ հարուցված դատավարությունը: Բոլորն էլ խիստ զարմանում են դատավորի առաջադրած պարտադիր պայմանի վրա՝ բանտ մտնել, համակարգի մեջ գրանցվել, այն էլ՝ արդեն լիովին արդարացված լինելուց հետո ու

բանտից անմիջապես ազատվել, քանի որ ոչ մի հանցագործություն էլ տեղի չի ունեցել: «Ես արդեն բանտից դուրս եմ եկել և ազատության մեջ եմ, կարող եք շնորհավորել», - նույն կատակս եմ կրկնում բոլորին, հետո լուրջ տոնով ավելացնում, - վաղը երեկոյան եկեք մեր տուն, այս առիթը պետք է նշել»:

Օ՜, նոր հաղորդագրություն էլ ունեմ՝ ընկերուհուս ամուսնուց է: Նա տեղեկացնում է, որ ընկերուհուս չի հաջողվել ինքնաթիռ մտնել, օդանավակայանում ինչ-որ փաստաթղթային խնդիրներ են առաջացել: Ափսո՜ս, հույս ունեմ, որ որոշ ժամանակ անց խնդիրները կհարթվեն:

Պատկերացնում եմ, ինչպես եմ ընկերուհուս պատմելու այս անգլերեն դասաժամին պատահած ջերմուկի պատմությունը, ո՜նց ենք ծիծաղից ուշագնաց լինելու: Հեռախոսով պատմելու բան չի: Նույնիսկ այս պահին, երբ հիշում եմ կողքիս նստած մեքսիկացի պատանու դեմքը, չեմ կարողանում ծիծաղս զսպել:

Դասն արդեն սկսվել էր: Ես, ինչպես որ խոստացել էի, ջերմուկի նոր, դեռ չբացված շշերը բաժանեցի իմ փոքր խմբի բոլոր դասընկերներին: Արևի տակ

կանգնած մեքենայիս մեջ գտնվելով՝ շշերը բավականին տաքացել էին, բայց դա չէր խանգարում այս ու այն կողմից լսել խմողների հիացական բացականչությունները: Մի քանի կում անելուց հետո փայլփլուն աչքերով նայում էին ինձ ու իրենց գոհունակությունը հայտնում: Նրանք բոլորն էլ շատ արագ դատարկեցին իրենց շշերը, բացի կողքիս նստած պատանուց: Նա վեր կացավ, մի քանի մետր ետ քայլեց դեպի պատն ու չբացված շիշը պատի մոտ դնելով ասաց.

- Ես դասից հետո սա կփորձեմ:

Դասասենյակում շատ ցուրտ էր, քանի որ օդորակիչը սառեցնում էր ամբողջ ուժով: Դրսում շոգ ամառ էր, իսկ ներսում որոշ ուսանողներ նույնիսկ աշնանային տաք վերարկուներ էին հագել:

- Շատ ճիշտ ես վարվում, որ հիմա չես խմում, - ասացի նրան, - հիմա շատ տաք է, դասի վերջում այն սառնարանից նոր հանած ջերմուկի պես կլինի: Ա՛յ, հրաշքն իսկական հենց դա է:

Շուտով դասարանում քար լռություն տիրեց: Բոլորն իրենց ջերմուկի դատարկ շշերը վաղուց արդեն ցած էին դրել: Ուսուցչուհին գրավոր

հանձնարարություն էր տվել, և գլուխներս կախ նայում էինք մեր առջև դրված թերթիկներին:

- Շըրը՛խկ, - ահռելի պայթյունից վեր ցատկեցինք ու սարսափած նայեցինք իրար:

- Այդ ի՞նչ էր, - բղավեց ուսուցչուհին:

Լռության մեջ հանկարծակի պայթյունն ու դրան հետևող ջարդված ապակիների իրար վրա թափվող շըխշըխկոցը մեր ականջների թմբկաթաղանթներն ուղղակի խլացրեցին: Դա պատի մոտ դրված ջերմուկի շիշն էր: Մինչև հիմա չեմ հասկանում՝ այդ փոքր շշից այդպիսի հզոր պայթյո՞ւն, և ի՞նչն էր պատճառը՝ մեքենայի թափահարումները, թե՞ շատ տաքացած վիճակում միանգամից շշի վրա փչող օդորակիչի սառը հոսանքը: Չգիտեմ:

Շշի տերը՝ մեքսիկացի պատանին այնպիսի վախեցած աչքերով նայեց վրաս, և զարմանքից բացված բերանի պատճառով էլ դեմքն այնքան ծիծաղելիորեն երկարեց, որ ես հազիվ զսպեցի իմ քրքիջը: Նա մատով ցույց տալով ջարդված շիշը՝ մի կերպ կարողացավ կմկմալ.

- Ու-րեմն այդ ջը-ջեր-մուկն իմ փորի մե՞ջ պիտի պայթեր:

Բոլորս փռթկացինք, և մեր վարակիչ հռհռոցը տարածվեց ամբողջ դասասենյակով մեկ:

Չինացի դասընկերս սփրթնած դեմքով դուրս վազեց դասասենյակից: Պատից այն կողմ գտնվող պետքարանից լսվում էին ջերմուկը ստամոքսից արտաբերելու նրա տարօրինակ ձայները: Խեղճը ջանք չէր խնայում այդ «վտանգավոր հեղուկի» հնարավոր պայթյունն իր որովայնի ներսում կանխելու համար:

Հրեա ուսանողուհին անմիջապես հայտնեց ուսուցչուհուն, որ վատ է զգում, պետք է բժշկի գնա ու պայուսակը վերցնելով շտապ դուրս եկավ սենյակից:

Ես, ազերի դասընկերս ու մեքսիկացի պատանին սկսեցինք իրար օգնելով արագ-արագ հավաքել ջարդված կտորները: Ազերու անզգույշ շարժման պատճառով ջարդված ապակու մի կտոր վնասեց մատս, և թափված ջերմուկի հեղուկը որոշ տեղերում կարմիր գույն ստացավ:

Նա սփրթնած դեմքով մի քանի անգամ ներում էր խնդրում ինձնից ասելով, որ պատահական, միամիտ շարժում էր, ես էլ ամեն անգամ հավաստիացնում էի

նրան, որ ամեն ինչ լավ է, և ոչ մի խնդիր չկա: Դե պարզ էր, ինչո՞ւ պիտի դիտավորյալ լիներ, մանավանդ, որ սրտանց եկել էր օգնելու: Ի զարմանս ինձ, նա նեղացածի տեսք ընդունելով անսպասելի հեռացավ՝ ինձ լսելի ձայնով բացատրելով մտերիմներին, որ ես անպատեհ կերպով այպանում էի իրեն մատս դիտավորյալ վնասելու համար: «Հոգ չէ, - մտածեցի, - դասից հետո կմոտենամ նրան ու կփորձեմ հարթել իրավիճակը»:

Դեռ չէինք հասցրել լրիվ մաքրել փշրված ապակու մնացորդներն ու թափված հեղուկը, երբ ոստիկանը ներս մտավ դասասենյակ:

Ահազարհուր լռություն տիրեց:

Նա իմ անունն ու ազգանունն արտաբերեց, չգիտեմ որտեղի՞ց արդեն գիտեր, որ ես էի բերել այդ պայթուցիկ շիշը:

- Ես եմ, - ներկայացա:

Ուսուցչուհին շտապեց մոտենալ ոստիկանին և բացատրել, որ ջերմուկ հանքային ջուրն իրեն շատ ծանոթ է, քանի որ ինքը հայ է, իսկ դա իր հայրենի երկրի հանքային աղբյուրներից է բերված:

- Պայթյունը ոչ մի դիտավորություն չուներ, - իր խոսքն ավարտեց նա՝ միաժամանակ դիմելով ողջ դասարանին և ոստիկանին, - իմ սառնարանում էլ ջերմուկի շիշ է պայթել: Տաքացած ջերմուկը դնելուց հետո՝ տաք ապակին չի դիմացել սառը օդին:

Ոստիկանը հարցեց ինձ.

- Ասացին, որ մեքենայիցդ բերեցիր շշերը: Էլի ունե՞ս այդ ջերմուկ կոչված հեղուկից:

- Իհա՛րկե, - ուրախ պատասխանեցի:

- Դե գնացինք մեքենայիդ մոտ, - ժպտաց նա՝ վարակվելով իմ բարձր տրամադրությամբ:

Քայլում էի մեքսիկացի ոստիկանի կողքով ու պատկերացնում, թե ինչ հպարտությամբ էի շուտով հյուրասիրելու նրան իմ հայրենիքի հրաշքներից մեկը՝ ջերմուկը:

- Դուք երբևէ ջերմուկ խմե՞լ եք, - հարցրեցի լռությունն ընդհատելու համար:

- Դե իհարկե՝ ոչ:

- Անպայման կփորձեք, խնդրում եմ: Վստա՛հ եմ, ոչ մի հանքային ջուր այդպիսի համ չունի: Այսօր մեր ամբողջ խումբն այդ կարծիքին էր հյուրասիրվելուց հետո:

- Իհա՛րկե, մի օր անպայման խանութից կգնեմ, - վստահ ձայնով ասաց նա, - բայց քո մոտինները պետք է տանեմ փորձաքննության:

Մեքենաս բավականին հեռու էի կանգնեցրել:

- Կներե՛ք, որ ստիպված եք այսքան երկար քայլել, - ասացի և նրա թմբլիկ կառուցվածքին նայելով ավելացրեցի, - չնայած՝ ավելի լավ, որ հեռու է, ի՞նչ եք կարծում, լավ էլ նիհարեցնող վարժություն է քայլելը, չէ՞:

Նա քահ-քահ ծիծաղեց և ժպտալով նայեց աչքերիս մեջ:

- Գիտե՞ս ինչ, - ասաց, - ես քեզ ձերբակալելու հրամանով եմ եկել, բայց քեզ հետ խոսելով կարծում եմ, որ ինչ-որ սխալ է տեղի ունեցել: Ես չեմ կարող խղճիս դեմ գնալ և այսպիսի միամիտ ու ազնվաբարո կնոջը ձեռնաշղթաներ հագցնել:

Ես զարմացած նայեցի նրան ու կատակեցի.

- Դուք եկել եք ի՞նձ ձերբակալելու, բայց ջերմուկի 22ի՞ն պիտի ձերբակալեք, չէ՞ որ նա էր պայթողը:

Մենք բարձրաձայն քրքջացինք:

Մեքենայիս միջից բոլոր ցաքուցրիվ ջերմուկի 22երը վերցնելով՝ նա ավելացրեց.

- Շուտով նամակ կստանաս, որտեղ կլինի քո դատարան ներկայանալու տեղը, օրն ու ժամը: Խնդրում եմ, անպայման գնալ, այլապես՝ շատ բարդություններ կառաջանան:

- Իհարկե, կգնամ:

- Դե ինչ, լա՛վ եղիր, - ասաց ոստիկանն ու շշերով տուփը ձեռքին հեռացավ:

Մինչև հիմա այնպիսի ջերմությամբ եմ հիշում նրա մասին, կարծես իմ վաղեմի ծանոթը լինի, որին երկար ժամանակ է, ինչ չեմ տեսել: Տեսնես, ինչպե՞ս է նա հիմա: Հույս ունեմ, նրան աշխատանքից չեն հեռացրել ինձ ձերբակալելու հրամանը չկատարելու համար: Ափսոս, նա այդպես էլ չի իմանա, թե ինձ չկալանավորելու իր ջանքերն ինչքան անիմաստ են դարձել հիմա, քանի որ այդ չարաբաստիկ ջերմուկի շշի պայթյունի պատճառով, այսօր առավոտյան այնուամենայնիվ գրանցվել եմ բանտում որպես բերման ենթարկված անձ:

Այգին հետզհետե սակավամարդ է դառնում: Եղանակը գնալով ցրտում է, և մութն արդեն իջնելով ծառերի սաղարթներից ներքև՝ թափվում է խոտերին ու մայթերին: Ինձ մնում է տուն գնալ և երկրային

մարմինս փաթաթելով փափուկ վերմակով՝ գլուխս մխրճել Հայաստանից բերված բմբուլե բարձի մեջ, որն էլ ինձ կտեղափոխի երազների աշխարհ:

Սենյակիս լռությունը մի տեսակ ճնշող է և ինչ-որ դառնահամ տխրություն ունի: Այս պատերի մեջ, երբ մենակ եմ, ես այլևս այն ուրախ, երջանիկ ու կատակասեր կինը չեմ, որ ամեն կերպ փորձում էր ողջ օրվա ընթացքում բարձր պահել իր և իրեն շրջապատողների տրամադրությունները: Այստեղ ես անկեղծ եմ ինքս ինձ հետ, և իրականությունն անսպասելի ապտակելով՝ արդեն դեմքիս է շպրտում ճշմարտությունը. «Դու այլևս չես կարող ունենալ քո երազած աշխատանքը, որի համար այսքան տարիներ ջանասիրաբար գիտելիքներ էիր ձեռք բերում»: Ժամանակի անդառնալիության ափսոսանքի զգացումից սիրտս կծկվում է:

Շուտով կլռի խավարի դեմ մարտնչող լույսերի վերջին աղմուկը: Շտապում եմ փակել աչքերս քանի դեռ չեն վառվել հոգուս լույսերը՝ մտքերիս, հիշողություններիս ու անտաղանդ մուսաներիս տեսքով: Հակառակ դեպքում այդ լուսատենչ մարտիկներն իմ գլխավորությամբ կկռվեն մինչև

լուսաբաց: Անտեղի պայքար կլինի՝ լույսն առանց մեզ էլ կբացվի:

Աչքերս չարաճճի երեխայի պես ինձ չեն ենթարկվում: Ես փակում եմ նրանց, որոշ ժամանակ անց նրանք էլի բաց են, և ես այդպես էլ չեմ կարողանում քնել մինչև այգաբաց: «Իսկ կարո՞ղ է այս բանտ մտնելու և դուրս գալու կեղծ արարողությունն ինձ խանգարի ոչ միայն երազած, այլև՝ ցանկացած աշխատանքի տեղավորման հարցում: Այդ դեպքում ինչպե՞ս եմ ապրելու», - մտածում եմ ու ինքս ինձ հանգստացնում փաստաբանիս բացատրությամբ. «Դե, դու, իհարկե, կդիտարկվես, որպես սխալմամբ ձերբակալված ու հետո անմիջապես ազատված անձ և միայն պետական կարևորագույն հիմնարկներում աշխատանք գտնելիս դժվարության կհանդիպես»:

Երբ քունս չի տանում, ուզում եմ ընկղմվել անցյալի մեջ ու նորից լսել մայրական քնքույշ օրորոցային երգերը, որոնք գնալով աղոտանում են ու սպառնում իսպառ ջնջվել իմ հիշողությունից: Իմ օրորոցայինը հիմա Հայաստանից ցանկացած լուր լսելն է, միայն

թե այն տագնապ չպարունակի: Միացնում եմ հայկական ամենահայտնի լրատվական ալիքը.

«Այսօր, 2022թ.-ի սեպտեմբերի 13 - ին ժամը 00:05-ից, Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ հարձակում են սկսել Հայաստանի Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի ուղղություններով: Հիմնական հարվածն ուղղված է Վայոց ձորի մարզի Ձերմուկ առողջարանային քաղաքի վրա…»:

«Ի՞նչ, լայնածավալ հարձակո՞ւմ, հիմնականում ողղված Ձերմուկի վրա՞, - սիրտս մի պահ կարծես դադարում է աշխատել ու մի քանի կում սառը ջերմուկ խմելով բարկացած մտածում եմ, - մի՞թե բանականությունն այնքան է զարգացել, որ պետություններն արդեն միայն հրթիռային համակարգերի ու անօդաչու թռչող սարքերի լեզվով են իրենց ասելիքը փոխանցում իրար»:

Սենյակիս անսպեռ խավարը հետզհետե նահանջում է՝ դանդաղորեն տեղափոխվելով օվկիանոսից այն կողմ, ուր հայ քաջերն են առյուծաբար մարտնչում մարդկային խավարի դեմ:

«Համենայն դեպս, այս ամենը շատ տարօրինակ է, - հուզված խոստովանում եմ ինքս ինձ, - ես պատասխանատվության եմ կանչվում մեկ շիշ ջերմուկի անվնաս պայթյունի համար: Իսկ ո՞վ պետք է պատասխան տա այդ նույն ջերմուկի աղբյուրների ուղղությամբ բազմաթիվ պայթյունների և զոհերի համար, ո՞վ»:

Շուրջս համատարած լռություն է…

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԵՐԿՐՊԱԳՈՒՆ

Աշուն է դրսում: Երփներանգ տերևներն օդում պարելով՝ մեղմ ու հանդարտ փաթիլների պես իջնում են ցած ու ծածկում գետինն իրենցով: Անցորդների ոտքերի տակ էլ երգում են իրենց հրաժեշտի երգը, ինչպես ձյունն է վերջին անգամ կոշիկի տակ ճռճռում հալվելուց առաջ:

Պատուհանից դուրս նայելով հիանում եմ այդ բազմերանգ գույներով ու անհամբեր սպասում

իրական ձյան փափուկ սպիտակին: Խորհրդավոր անդորրը երբեմն-երբեմն ընդհատվում է թույլ ու հաճելի թխթխկոցով: Երևի հարևաններն են, արդեն մի քանի րոպե է, կարծես ինչ-որ բան են վերանորոգում: Մենակ եմ տանն ու միայնակ: Այնպես եմ ուզում վերջապես գտնել նրան, ում կնվիրեմ սերս ու սիրո հույզերս: Տեսնես ո՞վ է լինելու այդ երջանիկը: Նկատել եմ, երբ ամբողջ հոգով ինչ-որ բան եմ ուզում, անպայման կատարվում է:

Ահա, այս պահին ուզում եմ, որ արդեն կողքիս լինի իմ խորհրդավոր սիրելին, որին դեռ չեմ ճանաչում: Վստահ եմ, նա երբեք չի ձանձրացնի ինձ իր զրույցներով ու ես երջանիկ կլինեմ իր գոյությամբ: Ի՜նչ հաճույքով սուրճ կխմեի հիմա նրա հետ: Նորից այդ թույլ ու անվստահ թխթխկոցն ընդհատում է մտքերս: Գուցե ոչ թե հարևաններն են, այլ դո՞ւռս են բախում: Ես սրում եմ լսողությունս: Դե իհարկե, դուռս են թակում: Երեխայի պես ուրախացած ու երջանիկ վազում եմ դուռը բացելու: Սա երևի նա է, ում մասին քիչ առաջ երազում էի:

- Ներեցե՛ք, Դուք ո՞վ եք, - զարմացած հարցնում եմ դիմացս կանգնած խեղճ ու անօգնական, թզուկի

չափ փոքր ծերունուն ու մտածում. «Սա հաստատ իր բնակարանի հասցեն է շփոթել ծերունական մոռացկոտության պատճառով և իմ դուռն է բախել»:

Իմ անկոչ հյուրը ոչինչ չխոսելով, իրեն ներս է գցում ու փռվում բազմոցին՝ շունչը ետ բերելու: Ուզում եմ բարկանալ ու դուրս հրավիրել այդ աներեսին, բայց նրան նայելիս սիրտս այնպես է խղճահարությունից տակնուվրա լինում, որ քիչ է մնում լաց լինեմ:

- Ներեցե՛ք, ինչո՞վ օգնեմ: Ձեզ վա՞տ եք զգում: Դուք ո՞վ եք:

Նրա դեմքն ամոթխած երեխայի այտի նման միանգամից շառագունում է: Չկարողանալով ուղիղ աչքերիս մեջ նայել՝ նա ցածրաձայն պատասխանում է.

- Քո առաջին և վերջին երկրպագուն, ով միայն քեզնով է ապրում:

«Պահո՛, - մտքումս բացականչում եմ ես, և խղճահարությունս անմիջապես փոխվում է բարկության, - սա ոչ միայն ծեր է, այլև՝ խելագար, - մտածում եմ, - չէ մի չէ՝ երկրպագո՛ւ, հիմա ո՞նց ազատվեմ էս խելագար բիձուկից»:

- Ես խելագար չեմ ու չես կարող ազատվել, - ասում է նա, - մենք միասին ծնվել ենք, միասին էլ կմեռնենք:

- Դուք այնքան ծեր եք միասին ծնված լինելու համար, - վիճելու պատրաստ դիրքով կանգնած՝ հեգնում եմ, - միասին մեռնե՞լ: Հապա ինձ նայե՛ք, ի՛նչ ջահել, առողջ ու սիրուն կին եմ: Էդ ո՞նց կարող եմ Ձեզ հետ մեռնել: Ներեցե՛ք, Դուք կարո՞ղ է հարբած եք:

«Երբեք մի վիճեք հիմարների հետ: Դուք կիջնեք նրանց մակարդակին, որտեղ նրանք կոչնչացնեն ձեզ իրենց փորձով», - որտե՞ղ եմ կարդացել: Ախ, հա՛, Մարկ Տվենի միտքն է, կարծես հենց այս պահի համար է ասված: Որոշում եմ չվիճել հիմար ծերուկի հետ: Լռության մի քանի վայրկյաններն ինձ մտածելու ժամանակ են տալիս հասկանալու, թե ինչու է այդ տարօրինակ կերպարանքն այստեղ: Ենթագիտակցաբար մտքումս կրկնելով խենթ ծերուկի ասածները՝ վախեցած բղավում եմ.

- Մի րոպե, այդ ինչպե՞ս իմացաք, որ քիչ առաջ Ձեզ «խելագար» անվանեցի: Չէ՞ որ ես մտքումս ասացի դա:

Նա անտեսելով պատասխանի սպասող իմ զարմացական հայացքը՝ անտաղանդ և հարբած ծաղրածուի պես ցատկոտելով մոտենում է պատուհանին: Այդ տարօրինակ խեղկատակը, ապակու արտացոլանքի մեջ իմ հայացքը որսալով և փորձելով զվարճացնել ինձ, ինչ-որ ծիծաղելի ծամածռություններ է անում: «Ա՛յ քեզ բա՛ն, չի էլ ցանկանում ասել, թե ինչպես կարողացավ միտքս կարդալ, - զարմանում եմ ես, - հնարավոր է, որ այս ծերունին ոչ թե խելագար է, այլ՝ պայծառատես գուշակ, բայց ինչո՞ւ է եկել իմ տուն ու ծամածռություններ անում»:

Այդ պահին պատուհանիս տակ բամբասող կանանց ծիծաղի ու հռհռոցի այնպիսի ձայներ են տարածվում, որ ակամայից նայում եմ դուրս: Կանայք իրենց զրույցն ընդհատելով մատնացույց են անում իմ պատուհանից երևացող ծերուկին: «Ինչո՞ւ են ծիծաղում, մի՞թե այս բամբասողները կարծում են այս հիմար ծերուկն իմ սիրեկանն է», - բարկանում եմ ես: Իմ տարօրինակ հյուրը նրանց հայացքներից ավելի ոգևորվելով շարունակում է ձեռքերը քթին հպելով նորանոր ծիծաղելի հնարքներ անել:

Քիչ է մնում, թե ես էլ ծիծաղից ուշաթափվեմ, բայց կարողանում եմ ժամանակին զսպել ինձ: «Ի՞նչ իմանամ, թե ե՛ս ինչպիսի հիմարություններ կանեմ նրա տարիքին հասնելիս», - ասում եմ ինքս ինձ և չգիտես ինչու, նորից սկսում եմ խորը կարեկցանք ու խղճահարություն տածել այդ տարօրինակ այցելուի հանդեպ:

«Հաստատ փող էլ չունի, որ նոր տաբատ կամ կոշիկներ գնի: Խեղճ ծերուկ... Միայն ձախ ոտքի կոշիկն է մի փոքր նորմալ վիճակում, իսկ աջ ոտքինը երևի ծակ է, - մտածում եմ, - այդ պատճառով էլ մի ոտքը փորձում է թաքցնել մյուսի ետևում: Դե իհա՛րկե, քայլելու փոխարեն էլ կաղալով ցատկոտում է, որ չնկատվի այն: Իսկ եթե այս խեղճ ձևացողը բանտից փախած հանցագո՞րծ է: Աստվա՛ծ իմ, գուցե պետք է ոստիկա՞ն կանչել, քանի դեռ ուշ չէ»:

- Ոստիկան պետք չի՛ կանչել, - ասում է նա անսպասելիորեն լրջացած ձայնով ու կարծես «ոստիկան» բառից վախեցած՝ արագ ետ է քաշվում պատուհանից, որ իրեն չտեսնեն, - կներե՛ս, որ շատ կոպիտ ներխուժեցի: Դու քիչ առաջ պատուհանից դուրս էիր նայում ու այնքան տխուր էիր, ես էլ

որոշեցի գործի անցնել ու բախտս փորձել, քանի որ դժվար թե սրանից ավելի հարմար պահ գտնեմ քեզ այցելելու:

Նայելով նրա անհունորեն խոր, մութ գիշեր հիշեցնող բիբերի կարմիր ցոլքերին, ես մի վայրկյանում աշնան տերևի պես դեղնում եմ ու կարծես մահվան շունչն զգալով սկսում եմ ամբողջ մարմնով դողալ: «Թմրամոլի աչքեր ունի, - մտածում եմ, - փաստորեն, խոստովանեց, որ դրսում կանգնել ու երկրորդ հարկի իմ այս պատուհանին նայելով, երկար ժամանակ ինձ է հետևել»: «Իսկ կարո՞ղ է սա սպանություններ սիրող մոլագար է, եկել է իմ ետևից», - ահաբեկված հարցնում եմ ինքս ինձ: Վախս հաղթահարելու համար շատ ցածր ձայնով առաջարկում եմ.

- Սուրճ կխմե՞ք:

Նա անխնամ մորուքի տակից ծիծաղի նմանվող տարօրինակ ձայներ է հանում, հետո ասում.

- Ինչո՞ւ այդպես պաշտոնապես, «դո՛ւ»-ով դիմիր ինձ, մենք մտերիմներ ենք:

Երբ նա նստում է աթոռին և մի ոտքը գցում մյուսի վրա, շատ եմ զարմանում: Պարզվում է, երկրորդ

ոտքի կոշիկը բոլորովին էլ ծակ չունի: Այդ դեպքում ինչո՞ւ էր թռչկոտելով թաքցնում այն՝ բարձր պահելով տաբատի լայն փողքերի ետևում:

- Ներեցե՛ք, - հարցնում եմ, - ի՞նչն է պատճառը, որ քայլելու փոխարեն կաղալով ցատկոտում եք, ոտքի ոսկրային ցա՞վ ունեք, ես էլ կարծում էի հնամաշ կոշիկից եք ամաչում:

- Չէ՛, դա անում եմ քեզ զվարճացնելու համար, - ասում է, - փոքր հասակում դու շատ էիր ծիծաղում ցատկոտող ծաղրածուների վրա: Ախր, դու ինչո՞ւ ես այսքան վախեցած: Խնդրում եմ, մի փոքր ժպտա:

- Չասացի՛ք, ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, - նորից եմ հարցնում խիստ անհանգստացած:

Նա զարմանքով նայում է վրաս.

- Ինձ չե՞ս ճանաչում: Դու ինձ մի քանի անգամ տեսել ես իմ ու քո մտերիմների բնակարաններում: Վերջին անգամ մենք չորս ընկերներով նույն մեքենայի մեջ էինք, հիշո՞ւմ ես, բոլորս էլ խմած էինք ու հարբած, նույնիսկ վարորդը: Այդ օրը հրաշքով փրկվեցինք ձորը գլորվելուց: Լավ, հիմա հաստատ կհիշես ինձ: Քո ծննդյան օրը դու վարդեր ստացար, իսկ փնջի միջի երկտողի վրա գրված էր.

«Խորհրդավոր երկրպագուից», այսինքն՝ ինձնից: Տե՛ս, է՛, վաղուց չենք հանդիպել, նույնիսկ անունս ես մոռացել: Քո մտերիմներն ինձ հանդիպելիս չգիտես ինչու շփոթվում են, կարծես չեն կարողանում ուղիղ նայել աչքերիս մեջ և իմ մասին խոսելիս էլ ինձ Մահ են անվանում: Դե, ես չեմ նեղանում, նրանք պարզապես լավ չգիտեն, թե ես ով եմ իրականում:

«Տեսա՞ր, - ասում եմ ինքս ինձ, - ընկերներս էլ փաստորեն գիտեն նրա մականունը՝ Մահ: Ես ճիշտ էի՝ եկել է ինձ սպանելու այս մոլագարը: Փաստորեն, այս տարվա ծննդյանս օրվանից սկսած հարմար առիթ գտնելու հույսով՝ գաղտնի հետևում է ինձ: Ընկերներիս հետ ձորը գլորվելու դեպքն էլ, վստահ եմ, հենց նոր գուշակեց՝ այդ պատմության մեջ ավելացնելով իր ներկայությունը: Աստվա՛ծ իմ, ի՞նչ անեմ, ինչպե՞ս փրկեմ կյանքս»:

Հանճարեղ միտք է ծագում գլխումս՝ աննկատ մտնել խոհանոց ու ջուրն անխնա բաց թողնել հատակին: Մի տաս կամ տասնհինգ րոպեից այն կսկսի կաթել ներքևի հարևանի առաստաղից: Նա էլ իմ բնակարան կներխուժի, եթե պետք է նույնիսկ ջարդելով փակ դուռս: Ինչ գնով էլ լինի, նա կշտապի

պարզել ջրի հոսքի պատճառն այն կանխելու նպատակով, և ես փրկված եմ:

Իմ տարօրինակ հյուրը հայացքը չի կտրում ինձնից, այնպես որ աննկատ ոչինչ չեմ կարող անել:

- Կներե՛ք իհարկե, Ձեզ մի քանի րոպեով մենակ եմ թողնելու, ինձ խիստ անհրաժեշտ է սառնարանից սառը ջուր վերցնել հիմա, - այս ասելով փորձում եմ դուրս գալ սենյակից, երբ ետևիցս լսում եմ նրա հանգիստ ձայնը.

- Մի չարչարվի՛ր ջրի ծորակը բացել, ներքևի հարևանը տանը չի հիմա:

Շփոթված նայում եմ շուրջս: Ինչո՞ւ է այս ամենն ինձ հետ պատահում:

«Կարո՞ղ է երկար ժամանակ մենակ մնալուց խելագարվել եմ, - հուսահատ մտածում եմ, - ու այս ծերունին էլ իմ աչքին է երևում»: Տրորում եմ աչքերս: «Բայց չէ՞ որ բացի ինձնից բակում կանգնած կանայք նույնպես պատուհանից տեսնում էին նրան, - մտածում եմ, - ուրեմն ամեն ինչ իրական է»: Ես չգիտեմ՝ ուրախանա՞լ, որ տեսիլք չէ ու չեմ ցնորվել, թե՞ ափսոսալ: Երկու դեպքում էլ ես

կործանված եմ: «Մի որպե, - ասում եմ ինքս ինձ, - իսկ կարո՞ղ է այդ կանայք էլ էին իմ աչքին երևում»:

Մոտենում եմ պատուհանին ու դուրս նայում: Կանայք արդեն այնտեղ չեն: Չէ՛, փրփուրներից եմ կախվում, չէ՞ որ իրականում ես տեսիլքներ երբեք չեմ տեսնում: Նշանակում է, ամեն ինչ ցավալի իրողություն է, իսկ բակում արդեն ոչ ոք չկա, որ փորձեմ օգնության կանչել:

Հասկանում եմ, որ հիմա միայն հրաշքը կարող է ինձ փրկել: Շտապում եմ այդ «մոլագար մարդասպանին» մեկնել սուրճը, գուցե խղճա՞ ինձ: Սուրճն իմ համար էի պատրաստել: Գոնե համն անեի, ի՛նչ հաճելի է բուրում:

«Վա՛յ, ոնց մտքովս չանցավ, պիտի նախօրոք քնաբեր դեղ լցրած լինեի այդ սուրճի բաժակի մեջ, գուցե չնկատեր ու խմեր», - ափսոսում եմ ես արդեն սուրճը տալու պահին:

- Քնաբերներն ինձ վրա չեն ազդում, - ասում է նա և մեկ կումով ըմպելով ողջ պարունակությունը՝ անսպասելի ծնկում է իմ առջև: Ինչ-որ փոքրիկ, օղակաձև ձգան ունեցող մետաղափայլ ատրճանակ

և մի քանի փամփուշտներ ափի մեջ պահած՝ մեկնում է ինձ հարցնելով.

- Կամուսնանա՞ս ինձ հետ: Ընտրի՛ր և վերցրու սրանցից որևէ մեկը: Կարող ես նույնիսկ բոլորովին այլ բան պատվիրել՝ թունավորված դեղահաբ, պարանոցը խեղդող պարանե կլոր օղակ, մարգարտաշար կոթով դանակներ: Ինչ էլ ուզես՝ կճարեմ քեզ համար: Սիրո՛ւմ եմ քեզ: Ես ամբողջ կյանքում միայն քեզ եմ սիրել:

Մի պահ մտքումս նրա ձեռքից արագ խլում եմ ատրճանակը, որը վստահ եմ, լիցքավորված է և ինքնապաշտպանության նպատակով մի քանի անգամ կրակում եմ նրա վրա: Մնում է համարձակ գտնվել և իրականացնել այդ շատ վտանգավոր մտահղացումը: «Վատ միտք չի, - հորդորում եմ ինքս ինձ, - դե՛, սկսի՛ր, դե՛, ախր սա քո փրկվելու վերջին հնարավորությունն է»: Ոչինչ չի ստացվում: Սարսափահար ինքս ինձ խոստովանում եմ, որ կյանքս փրկելու համար անգամ ես չեմ կարող մարդ սպանել:

Հայացքս պատահմամբ ընկնում է պատուհանի ապակու մեջ դեմքիս արտացոլանքին: Այտերս

մայրամուտի արևի պես շառագունել են, իսկ աչքերս փայլում են երկյուղից: Մի՞թե իրեն Մահ կոչող այս հանցագործի ձեռքով շուտով հրաժեշտ կտամ կյանքիս, երբ այնպես գեղեցիկ եմ ու այնքան երիտասարդ: Մի՞թե այս հրաշագեղ աշխարհում ապրելու իմ վերջին ժամերն են: Ես այնպես եմ խղճում ինքս ինձ, կարծես սարդոստայնի մեջ ընկած ճանճ լինեմ կամ էլ վագրի ճիրաններում հայտնված մի խեղճ ու անպաշտպան նապաստակ:

Ծերուկն իմ պատասխանը դեռ չստացած շաղակրատում է: Պատմում է, թե ինչքան երկար ժամանակ է սիրահարված ինձ, որքան դժվար է եղել իր համար բազմաթիվ պատահական մահերից հրաշքով փրկել իմ կյանքը, ինչ հավատարիմ է եղել ինձ ու ամբողջ կյանքում իր աչքն անգամ մի ակնթարթ չի հեռացրել ինձնից:

- Դե՛, ասա՛, - իր հորինած հեքիաթները վերջապես ավարտելուց հետո նա նորից դիմում է ինձ, - կամուսնանա՞ս:

Ես չգիտեմ ինչ ասել: Եթե ասեմ՝ ոչ, հաստատ տեղում ինձ կսպանի: Հարկավոր է ժամանակ ձգել և

ձևացնել, որ նա ինձ դուր է գալիս, մինչև որևէ տեղից գուցե հրաշքով փրկության մի դուռ բացվի:

- Դե... մի՞թե ես կարող եմ քեզ մերժել, - ասում եմ, - այժմ ես իմ ամբողջ էությամբ արդեն զգում եմ քո հմայքը: Այո՛, ես արդեն ճանաչել եմ քեզ, ես շատ անգամ եմ քեզ տեսել ինձ հետապնդելիս՝ խանութում, փողոցում, մուտքի աստիճաններով բարձրանալիս ու իջնելիս:

Այս ստերից վերջինն էլ հատուկ հորինում եմ պարզելու՝ իրո՞ք վաղուց է ինձ հետևում:

- Ուրեմն, քո պատասխանն «այո՞ն» է, - ասում է նա անչափ տխուր ձայնով ու գլխիս դրական պատասխանից ցնցված՝ անսպասելի սկսում է այնպես դառնագին հեկեկալ, որ սիրտս ճմլվում է ցավից:

Նրա արցունքներն այնքան ազնիվ են ու անկեղծ, որ սրտիս թելադրանքով անսպասելի գրկում եմ նրան ու փորձում հանգստացնել: Օ՛ զարմանք, այդ հզոր ու կարծես թե բարի գրկում ես այնպես ապահով եմ ինձ զգում: Նրա բազուկներն այնքան ուժեղ են ու պինդ, որ կարծես ուզում եմ այս պահը երբեք չվերջանա ու տենչում եմ մի ողջ

հավիտենականություն լինել նրա կողքին, վայելել նրա զուլալ առվակի պես պարզ ու մաքուր հոգու ներկայությունը: Ինչքա՜ն կարոտ կա նրա աչքերում, ասես մանուկ հասակից միասին ենք մեծացել՝ խաղալով ու կռվելով, սիրելով ու ատելով իրար, և այժմ էլ հիշողություններիս մեջ արթնացած նրա շնչառության ձայնն այնքան հարազատ է հնչում ականջիս, ոնց որ իմ երկվորյակ եղբայրը լինի:

- Ինչո՞ւ ես լալիս, դու կարծես շատ հարազատ ես ինձ և նույնիսկ իմ աչքին արդեն գեղեցիկ ես ու ջահել:

Նա լսելով ինձ ավելի սրտաճմլիկ ձայնով է լալիս, ոնց որ մորը հենց նոր կորցրած հուսահատ ու վախեցած մի երեխա լինի իմ գրկում: Ավելի պինդ է փաթաթվում ինձ ու գլուխը հենելով ուսիս ողբում է այնպես բարձր ու խղճալի, որ ամենակարծր մարդկային հոգին անգամ չի դիմանա, ուր մնաց իմ պես փխրուն սիրտ ունեցողը: Արցունքներս սկսում են ցած հոսել տեղատարափ անձրևի նման: Ես ամբողջ մարմնով դողում եմ և պարզ զգում նրա սրտի տրոփյունը:

Նրա անզուսպ սիրո փոթորիկը ներխուժում ու տակնուվրա է անում հոգիս: Իրոք, նա չի ստում, սիրում է ինձ այնքան անձնուրաց, որ նույնիսկ ինքս ինձ այդքան երբեք չեմ սիրել: Ես երջանիկ եմ: Մի պահ սիրո բոցերի մեջ վառվելուց հետո հանկարծ մարմինս սկսում է կամաց-կամաց սառցակալել: Ա՛յ քեզ բան: Մի գերբնական ուժ քարացրել է ինձ ու չեմ կարողանում շարժվել: Սիրտս կծկվում է: Սա ի՞նչ է: Հոգիս այրվում է սիրուց՝ մարմինս սառչում մահվան շնչից: Ինչ-որ հավիտենական կարոտի ցավից ու ոտքերիցս դանդաղ վերև բարձրացող սառնությունից սթափվում եմ.

- Աստվա՛ծ իմ, դու իրո՛ք մահն ես, - բացականչում եմ:

Նա մի կերպ շունչը ետ բերելով մի քայլ ետ է ցատկում և արցունքները սրբելով խեղճացած ու հուսահատ խնդրում.

- Սիրի՛ր ինձ, աղաչում եմ, սիրի՛ր: Չէ՞ որ սիրուց է սկսվում դրախտի ճամփան, իսկ ես էլ քո սիրո կարիքն այնպես եմ զգում հիմա: Երբ մենք մեռնենք, ես այլևս չեմ տեսնի քեզ: Ես չեմ վախենում

մեռնելուց, բայց ինչպե՞ս քեզ այլևս չտեսնեմ ու չզգամ:

- Դու կարող ես մեռնե՞լ, չէ՞ որ դու մահն ես:

- Ես միայն քո՛ մահն եմ: Եթե մերժեիր իմ առաջարկը, մենք միասին դեռ երկար, շատ երկար կվայելեինք այս հրաշագեղ կյանքը: Ախր, ինչո՛ւ «այո» ասացիր, ինչո՛ւ, չէ՞ որ ես հատուկ եկել եմ տհաճ ու զառամյալ ծերուկի տեսքով: Ես պարտավոր եմ երբեմն-երբեմն հայտնվել քեզ շատ մոտ, որ քեզ չխլեն ինձնից ուրիշ պատահական մահերը: Նրանք այնպիսի տենչանքով են պտտվում քո շուրջը, ոնց կսպանեի բոլորին... Ա՛խ, ինչո՞ւ չդիմացա ու առաջարկությունս հիմա արեցի: Իսկ դո՛ւ, ախր դո՛ւ, ինչպե՞ս կարողացար համաձայնվել այսպիսի ծեր և խենթի պես ցատկոտող արարածի հետ ամուսնանալ: Ահա՛ և վերջ, - ասում է նա վշտահար:

- Ուրեմն, - զարմացած հարցնում եմ նրան, - ստացվում է, որ դու իմ մահն ես, իսկ իմ «այո»-ն քո՞ մահը:

- Քո չէ՝ մեր, - ուղղում է նա ինձ:

- Ես փոխում եմ իմ որոշումը, - արագ վրա եմ տալիս, - ես չեմ ուզում ամուսնանալ քեզ հետ, իմ

պատասխանը «ոչ»-ն է, - այս ասելով հաղթական հայացքով նայում եմ նրան:

- Ամեն ինչ վերջացած է արդեն, - ափսոսանքով ասում է նա, - որևէ մեկին դեռ չի հաջողվել ետ պտտել ժամանակն ու փոխել իր ճակատագիրը: Շուտով մենք երկուսով էլ ճիշտ նույն պահին, ինչպես որ միասին հայտնվել ենք, այնպես էլ կանհետանանք աշխարհից: Ես քեզ հետ եմ ծնվել: Երբ դու չլինես, ես էլ չեմ լինի այլևս: Դու դեռ կապրես դրախտային հոգիների աշխարհում, - շարունակում է նա, - հոգիներն անմահ են ու մահերն այնտեղ տեղ չունեն, իսկ ե՞ս... Ես այլևս քեզ չեմ տեսնի:

Ծերուկը հեծկլտալով նորից նետվում է իմ գիրկը կցկտուր ավարտելով միտքը, - մահերը, երբ մեռնում են, իսպառ չքանում են:

Նա սկսում է ավելի աղեկտուր ձայնով հեկեկալ:

- Իսկ կարո՞ղ եմ իմանալ, թե ի՞նչն է իմ մահվան պատճառը, - հարցնում եմ, - չէ՞ որ ես շատ առողջ եմ, ջահել ու գեղեցիկ, մի՞թե այսօր ավտովթար է լինելու:

Նա դադարեցնելով իր լացուկոծը՝ բերանը մոտեցնում է ականջիս ու փսփսում.

- Քո դեպքում պատճառը սիրո պակասն է, սիրելի՛ս, սիրո պակասը: Բացառությամբ դժբախտ պատահարների ու բնական աղետների՝ սիրո պակասից են մեռնում բույսերը, կենդանիներն ու մարդիկ, նույնիսկ ազգերն ու պետություններն են վերանում: Առողջ, թե հիվանդ, ծեր, թե երիտասարդ, բարի, թե չարակամ և նույնիսկ ամենագեղեցիկ մահկանացուները՝ բոլորն էլ ունեն այդ պակասը, - ասում է նա, - սեր մերձավորի նկատմամբ, սեր Աստծո ու հայրենիքի հանդեպ, տիեզերական սեր, իսկ կոնկրետ քո դեպքում...

- Բայց ես սիրո պակաս չունեմ, - ընդհատում եմ նրան, - ես սիրում եմ հարազատներիս, ընկերներիս, իմ առօրյան: Շատերն էլ ինձ են սիրում, որն ինձ բնավ էլ պետք չի, ես ոչինչ չեմ զգում դրանից: Դա նրանց սերն է: Կարճ ասած, ես ի՛մ սիրելն եմ սիրում միայն ու սիրում եմ բոլորին, ինչպես նաև իմ տունը, իմ քաղաքը, իմ մոլորակը: Մի խոսքով՝ սիրում եմ կյանքը:

- Չէ՛, դու էլ բոլորի նման կյանքը չես սիրում, դու քեզ ես սիրում այդ կյանքի մեջ: Կյանք ասելով միայն ձեր սեփական կյանքն եք պատկերացնում: Բոլորդ էլ

եսասեր եք ու բոլորդ էլ սարսափում եք մահից: Մինչդեռ կյանքը եղել է ձեզնից առաջ ու միշտ էլ կլինի ձեզնից հետո: Այ, դա՛ սիրեք: Սիրե՛ք այնքան, որ ձեր չգոյությունն այդ կյանքում շատ չնչին ու անկարևոր լինի այս ահռելի տիեզերքի մեջ: Տիեզերական սիրո պակաս բոլորդ ունեք: Ասա՛ ինձ, կա՞ մեկը, որ սիրի ոչ միայն իրեն կամ հարազատին, ծանոթին կամ անծանոթին, այլ նաև կարողանա սիրել իր մահը, կամ նրանց մահերը:

Ես հիացած զննում եմ իմ մահի ոգևորված դեմքն ու մտածում. «Ի՜նչ հետաքրքիր է խոսում, ինչո՞ւ ավելի վաղ ծանոթ չեմ եղել նրան»:

- Իսկ այդ դեպքում, - ասում եմ նրան, - դու ինչո՞ւ քո խորհրդից չես օգտվում, ինչո՞ւ ես լաց լինում ու չես ուզում մեռնել, դու էլ քո՛ մահը սիրիր:

Նա շատ անսպասելի սկսում է նորից հեկեկալ՝ կցկտուր ու խղճալի ձայնով մի կերպ արտաբերելով.

- Դու այդպես էլ ոչինչ չհասկացար…

- Խնդրում եմ, մի լացի՛ր, - համբուրելով նրա այտը հանգստացնում եմ նրան, ինչպես կհամբուրեի երեխայիս, որին այդպես էլ չեմ հասցնի ունենալ, քանի որ կյանքս ավարտվում է արդեն: - Երբ դու լաց

ես լինում, ես կորցնում եմ իմ բոլոր ուժերը, - բացատրում եմ նրան, - չէ՞ որ միշտ երազել եմ կյանքից հեռանալիս չարտասվել, նույնիսկ ժպտալ և ծիծաղեցնել ինքս ինձ:

Մահն անմիջապես վեր ցատկելով սկսում է օդից որսալ իմ կյանքի բոլոր զվարճալի դեպքերն ու ծիծաղի դրվագները և դրանցով մի մեծ ծաղկեփունջ սարքելով նվիրում է ինձ: Վերջապես ես տեսնում եմ նրա գեղեցիկ ժպիտը: Երբեք չեմ պատկերացրել, որ կան ժպիտներ, որոնք լուսավորում են ոչ միայն իրենց շրջապատը, այլ՝ մտնելով սրտիդ մեջ, վառում են նաև քո հոգում մարված բոլոր ճրագները:

«Նա սկսում է ինձ դուր գալ, - վախեցած մտածում եմ ես, մի պահ մոռանալով, որ քիչ առաջ կանգնած էի մահվան շեմին, - այնքան հմայիչ երիտասարդների մերժեցի, որ այս ծերուկի՞ն հավանեի, իսկ ի՞նչ կասեն ընկերուհիներս, ծանոթներս»: Ակամա նայում եմ դեմքի կնճիռներին: Աչքերից ճառագող լույսն այնքան ուժգին է լուսավորում դեմքը, որ համարյա ոչ մի ակոս էլ չի երևում: Աստվա՛ծ իմ, նա բավականին գրավիչ արտաքին ունի առանց այդ չարաբաստիկ կնճիռների:

Իմ այդ տարօրինակ երկրպագուն այնքան է ցատկոտում, անբնական շարժումներով ընկնում և վեր կենում, զանազան զվարճալի դեպքեր հիշում մեր կյանքից ու քրքջում, որ քիչ է մնում ծիծաղից ուշաթափվեմ:

Ես երջանկությունից ինձ կորցրել եմ: Փաստորեն, իմ առաջին սերը, որին ես այնքան երկար եմ սպասել, հենց նա է: «Ես սիրում եմ նրան, - խոստովանում եմ ինքս ինձ, - ես նրա ձեռքից բռնած մինչև աշխարհի ծայրն էլ կգնամ: Սա իսկական սե՛ր է, սե՛ր, բայց ոչ թե առաջին, այլ՝ գուցե վերջին հայացքից»:

- Սիրելի՛ս, - շշնջում եմ նրան, - ես քեզ սիրո՛ւմ եմ, և մահն անգամ չի կարող մեզ բաժանել: Դու իմ միա՛կ, իմ առաջին ու վերջի՛ն սեր, դու իմ սիրելի՛, թանկագի՛ն Մահ, երբ ես մեռնեմ, հոգի կդառնամ, իսկ դու արդեն իմ հոգու մեջ ես: Դու ընդմիշտ կմնաս այնտեղ՝ իմ հոգում, նույնիսկ, երբ իմ հոգին սավառնի անմահ հոգիների աշխարհում:

Նա ուրախությունից խենթի նման վեր է ցատկում ու գոռում.

- Ուրեմն, ես չե՞մ վերանա: Փաստորեն, ես գտնվելով քո հոգում կլինե՛մ մահ, որն անմահ է այդ

անմահ հոգիների աշխարհում, և մենք հավիտյանս հավիտենից միասին կլինենք, - հետո ձեռքն ինձ մեկնելով հարցնում է, - պարե՞նք ամպերի վրա:

Մենք միասին վալսի հնչյունների տակ սավառնում ենք լուրթ երկնքում: Ես նրա նվիրած ծիծաղներով լի ծաղկեփունջն ուսիս վրայով շպրտում եմ ետ, ինչպես սպիտակազգեստ հարսնացուներն են նետում բռնելու պատրաստ դեռ չամուսնացած աղջիկների ուղղությամբ: Տեսնես, ո՞վ կբռնի իմ ծաղկեփունջը, ո՞վ է այն հաջորդ երջանիկը, որը պատրաստ է կյանքն ավարտել հանուն իր սիրած էակի՝ հավիտյանս մնալով նրա հոգում: Մահս նույն ակնթարթին ցատկելով ետ՝ օդի մեջ արագորեն բռնում է իմ ծաղկեփունջը:

Նա վախճանվում է իր խենթ ու երջանիկ մահով և անմիջապես էլ անէանում:

Ոչինչ չի փոխվել: Աշուն է դրսում: Երփներանգ տերևներն օդում պարելով՝ մեղմ ու հանդարտ փաթիլների պես իջնում են ցած ու ծածկում գետինն իրենցով: Իսկ իմ փոքրամարմին սիրելին արդեն չկա: Թվում է, թե երբեք չի էլ եղել այս աշխարհում, ինչպես այն ձյան ճերմակ փաթիլը, որն ի վերջո

անհետ կորում է մայր հողի տաք գրկում՝ ձուլվելով սիրո հավերժությանը:

Բայց ա՛յ քեզ հրաշք, ես դեռ ապրում եմ ու զգում նրա թողած սիրո շունչը: Հոգիս այրվում է սիրո նույն կրակների մեջ, սիրտս հուզմունքից թրթռում է: Շրջապատիս օդը վարակված է անմահ սիրով: Ես պատրաստ եմ սիրահարվելու առաջին իսկ պատահած երիտասարդին, ով կթակի իմ սրտի դուռը, և...

Արդեն թակում են իմ բնակարանի դուռը:

- Դուք ո՞վ եք, - զարմացած հարցնում եմ իմ դիմաց կանգնած գեղեցիկ կազմվածքով, առնական դիմագծերով երիտասարդին ու մտածում, - մի՞թե իրեն Մահ կոչող իմ սիրելին նորից կենդանացել է և այս ի՜նչ սքանչելի արտաքինով է որոշել այցելել՝ երևի թե ինձ զարմացնել կամ ավելի դուր գալ է ուզում: Իսկ գուցե սա նրանցից մեկն է, ով ծերունու կարծիքով կարող էր ինձ խլե՞լ իրենից: Զգուշորեն հարցնում եմ.

- Ներեցե՛ք, Դուք Մա՞հն եք:

Նա ժպտալով ինձ է մեկնում մեջքի ետևում թաքցրած ծաղկեփունջն ասելով.

- Մի՞թե այս շքեղ ծաղիկները մահվան ծաղկեպսակի նման են: Չէ, ես մահը չեմ, ես Ձեր երկրպագուն եմ: Երեկ Ձեզ տեսա պատուհանից տխուր դուրս նայելիս: Ախր, ինչո՞ւ էիք այդքան թախծոտ: Ես ամբողջ օրը չեմ կարողացել քնել, միայն Ձեր մասին եմ մտածել: Սա սեր է առաջին հայացքից: Լուսադեմին, երբ աչքերս վերջապես փակվեցին, ես վալսի հնչյունների տակ պարում էի Ձեզ հետ թափանցիկ ամպերի վրա, և մենք այնքան երջանիկ էինք:

Ես ընդհատում եմ նրան շնչակտուր հարցնելով.

- Ու ես ուսիս վրայով ետ շպրտեցի իմ ձեռքի ծաղկեփո՞ւնջը:

Նա զարմացած աչքերն ինձ վրա հառելով բացականչում է.

- Այո՛, բայց ես դա դեռ չասացի, դա ի՛մ տեսած երազն է, ինչպե՞ս իմացաք:

Ես ինքնամոռաց նետվում եմ նրա գիրկը, և սավառնում են մեր հոգիները կապույտ երկնքում, հետո պարում ամպերի վրա, լողում են սառցապատ ջրերում ու նորից ամպոտված ոտքերով մայր հողին կանգնում բերկրանքով: Երազ է, ցնորք է աշխարհը,

իսկ ես էլ սիրատենչ իմ հոգով այն ճերմակ փաթիլն եմ երազի, որ քնքույշ պարելով իջնում ցած, ձուլվում է հավերժող սիրո մեջ:

ՄԱՔՐՎԱԾ ՀՈԳԻՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆ

Ճիշտը ճշտի դեմ կռիվ էր տալիս, իսկ հայ երիտասարդը զգուշորեն դժոխքի պատուհանից ներս էր նայում նրանց ու լռում: Նա գիտեր, որ լռությունը համաձայնության նշան է, ուղղակի չգիտեր այս ճշտի հետ է համաձայն, թե՞ այն:

Նա ճշմարտությունն ասելու համար մոլորվել էր տիեզերքում:

- Միայն մի դուռ կա բաց, որ կարող ես մտնել ներս ու մարդկանց ասել ճշմարտությունը, - լսեց նա իր ետևում:

- Իսկ ո՞րն է այդ դուռը:

- Դժոխքի դուռը, - պատասխանեց ձայնը, - բայց ո՞րն է այն ճշմարտությունը, որը դու ես պատրաստ ասելու, ասա՛ ինձ, - շարունակեց ձայնը:

- Մարդի՛կ, դուք դժոխքում եք, - պատասխանեց երիտասարդը:

- Դե լավ, մտի՛ր:

- Օ՛, ես միշտ էլ գիտեի, որ անարդարության դեմ լռողները դժոխք են գնալու, - կմկմաց երիտասարդը, - հաստատ այլևս չեմ լռելու, այլապես՝ կործանվելու եմ, տե՛ր, - որոշեց նա ու ներս մտավ:

Մի պահ զարմացած նայեց շուրջը: Կրակի բոցեղեն լեզուների աղմկահույզ ճարճատյունը կարծես խլացրեց ականջները: Մի մեծ կաթսայի միջից դանդաղորեն եփվող գորտերի պես հանգիստ ու երջանիկ դեմքերով մարդկային մի քանի կերպարանքներ բարեկամաբար նրան ձեռքով արեցին և առաջարկեցին միանալ իրենց:

- Ե՛կ, ե՛կ մեզ մոտ: Շատ հետաքրքիր զրույց ենք վարում, - ուրախ կանչեց մեկը տաքությունից կարմրատակած աչքերով, - այստեղ գիտնականներ ու հայտնի փիլիսոփաներ կան, գրականագետներ, երաժիշտեր, պետական գործիչներ, լրագրողներ, ողջ վերնախավն այստեղ է: Մենք դեմ չենք քեզ ընդունել մեր խմբի մեջ:

«Զգուշացնե՞լ, որ նրանք կաթսայի մեջ եփվում են, թե՞ ոչ: Գուցե նրանք դա չե՞ն զգում, քանի որ ջուրը շատ դանդաղ ու աստիճանաբար է տաքանում, - մտածեց երիտասարդն ու հետո ձեռքը թափ տվեց, - ինձ ի՞նչ, եփվողը հո ե՞ս չեմ: Նրանց ընտրությունն է, թող չխաբվեին այդ սատանաներից ու կաթսա չմտնեին»:

Կրակի շուրջը խրախճանքի մեջ թաղված պոզավորներն այնքան զբաղված էին իրենց ստամոքսները լցնելով, որ նույնիսկ չնկատեցին նորեկ երիտասարդին:

- Տե՛ս, դու դարձյալ լռեցիր ու ճշմարտությունը թաքցրեցիր այդ դանդաղ եփվող մարդկային հոգիներից, - լսվեց ետևից ծանոթ ձայնը, - չէ՞ որ որոշել էիր այլևս չլռել, երբ շուրջդ ինչ-որ սխալ է տեղի ունենում:

Երիտասարդը շուռ եկավ տեսնելու իրենից դժգոհ այդ ձայնի տիրոջը:

- Ո՞վ ես, ինչո՞ւ չես երևում և ինչո՞ւ ես ամենուր հետևում ինձ, - բարկացավ տղան:

Ձայնը լուռ էր:

Քիչ այն կողմ սառույցից հաճույք ստացող ստախոսներն էին, որոնք համոզում էին բոլորին, որ գտել էին ջահելության գաղտնիքը, այն է՝ համակերպվել ու հաճույք ստանալ և բոլորովին էլ չկարևորել, թե որտեղ ես՝ եռման կաթսայում, թե՞ սառցե ժայռերի խոռոչներում:

Առանձին փոքրիկ կաթսայի մեջ սուրը ձեռքին մի հայուհի էր պարում խենթացած: Նա իր լռության ու բոլորի պես խաբված լինելու համար էր այդտեղ: Նրանց բոլորի լռությունն էլ հենց վայրագ պատերազմի սադրիչ շարժառիթներից մեկն էր, և զոհված որդու վրեժն իր դարավոր թշնամուց դեռ չհասցրած առնել՝ մոր սուրն օդում էր մնացել հավերժ:

«Ո՞նց կարող է քնքույշ մի կին պարել այսքան առնական», - զարմացավ դժոխք ժամանած նորեկ այցելուն:

Կարդալով մոտակա պատերին փակցված բոլոր հայտարարությունները՝ շուտով նա հասկացավ, որ փաստորեն, ինքն այդ պահին գտնվում է դժոխքի «Անարդարությունների դեմ չպայքարողների» բաժանմունքում:

Նա փակեց աչքերը: Այդ որտեղի՞ց էին լսվում աղիողորմ հեծեծանքների, գոռոցների ձայներն ու փրկության աղոթքները: Դրանք կարծես իր հոգու մեջ էին: Բացեց աչքերը: Լռություն էր դարձյալ:

Նորից փակեց աչքերն ու այդպես էլ փակ աչքերով քայլեց առաջ: Այո՛, այո՛, այդ դարավոր աղաղակներն իր քարացած հոգու լռության մեջ էին պահված:

Փակ կոպերով նա լսում էր բազում աչքերի թախծոտ կանչերը: Նրանք հորդորում էին իրեն փրկել աշխարհը: «Բայց ես այդ ո՞վ եմ, որ փրկեմ աշխարհը կործանումից, մանավանդ, ինչքան հասկացա՝ ես էլ արդեն չկամ, - մտածեց դժոխքի վերջին այցելուն ու հանկարծ բարձրաձայն գոռաց, - ես այլևս չե՛մ լռելու»:

Դժոխքի պատերը ցնցվեցին: Ինչ-որ մանկան ոտնահետքեր ճչացին խավարի մեջ, չնայած՝ ոչ-ոք նրանց ձայնը չլսեց, քանի որ լռությունը կլանում էր բոլոր ձայներն ու լուռ էր մնում:

Ահա, այն կողմում երիտասարդը ճանաչեց տխուր թափառող մի երեխայի: «Աստվա՛ծ իմ, ախր սա իմ մանկությունն է, - բացականչեց նա, - բայց իմ մանկությունն ի՞նչ է անում դժոխքում»: Նա

առաջ վազեց գրկելու իր մանկությունը և նայելու նրա անմեղ աչուկներից ներս: Այդ աչքերում թաքնված արցունքներն իր հայրենի հողի բուրմունքն ունեին ու այդ հողի կարոտից ծլած չորացած ձնծաղիկներ էին արտացոլում: Իսկ աշխարհի քնքույշ անտարբերությունը կարմիր կակաչներ էր շաղ տալիս նրա նման շատ ու շատ երեխաների շուրջ ու բարի ժպտում:

- Դու հենց այդ տարիքից էլ լռել ես, երբ շուրջդ քո փոխարեն անարդար կերպով մեղադրել են մեկ ուրիշ երեխայի, - ետևից լսվեց նորից նույն խորհրդավոր ձայնը, որն էլ հեգնանքով շարունակեց, - միայն թե ծնողներդ չիմանային ու քեզ չայպանեին:

- Ո՞վ ես դու, սրիկա՛, - զայրացած գոռաց նրա վրա երիտասարդը, - ի՞նչ ես ուզում ինձնից: Ես դժոխքում եմ հիմա, ես մահացել եմ արդեն:

- Չե՞ս ուզում խոստովանել, որ ճանաչում ես ինձ, - նորից հեգնեց ձայնը, - ես քո խիղճն եմ և ես դեռ չեմ մահացել:

- Ի՞նչ, դու իմ խի՞ղճն ես: Ինձնից ինչ-որ բան դեռ կենդանի՞ է մնացել, - երիտասարդն ուրախությունից քիչ էր մնում խենթանար, - վա՛յ, չես պատկերացնի,

ոնց եմ քեզ սիրում, իմ լա՛վ, իմ քա՛ղցր, իմ բարի՛ խիղճ, - փնտրող հայացքով աջ ու ձախ նայելով ասաց նա:

- Դե ուրեմն, առա՛ջ: Քանի որ դու արդեն որոշել ես չլռել, մենք կարող ենք փրկել հայերին ու նաև ամբողջ աշխարհը: Դե, սկսի՛ր, - լսվեց երիտասարդի դեռ կենդանի մնացած խղճի ոգևորված ձայնը:

- Ժողովո՛ւրդ, - բացականչեց երիտասարդը, - մենք հիմա բոլորս դժոխքում ենք, բայց սա դեռ վերջը չէ:

Բոլորը զարմացած նրան նայեցին:

- Իհարկե, այստեղից փախչելու տեղ չունենք, - շարունակեց նա, - բայց ամեն ինչ մեզնից է կախված: Կարող ենք այս դժոխքը դրախտի վերածել: Չէ՞ որ դուք էլ, ո՛վ մարդկային հոգիներ, դո՛ւք էլ նույնն եք ուզում:

Մի պահ լռությունը խոժոռվեց, և ամեն ինչ սկսեց տակնուվրա լինել դժոխքում: Սառցե լուլաները շպրտվելով սատանաների ու նրանց պետերի վրա՝ ցած էին տապալում այդ պոզավորներին: Հայուհին քայլելով գետնին փռվածների վրայով՝ պարային ամեն շարժումով կտրում էր նրանց պոզերն ու պոչերը, և օ՛ հրաշք, պարզվում էր, որ նրանք այլևս

սատանաներ չէին, այլ՝ մաքրված հոգիներ, որոնք միանում էին չարքի դեմ մղվող այդ հզոր պայքարին:

- Իսկույն ևեթ դադարեցրե՛ք այս քաոսը, - գոռում էր սատանայապետը, թե չէ դուք դժոխք կգնա՛ք:

- Բայց մենք արդեն դժոխքում ենք, - ծիծաղում էին նրա վրա ու շարունակում շուռ տալ եռման ջրով կաթսաներն ու մարել գեհենի կրակները:

- Դուք դեմ եք գնում Աստծուն, - անհույս բղավում էին սատանաները, - չէ՞ որ դժոխքն էլ է նա ստեղծել, որտեղ ուղարկում է մեղավոր հոգիներին:

- Սատանայի գործերն Աստծուն մի՛ վերագրեք, առա՛ջ, - գոռում էր հայ երիտասարդը, որն ամբողջ կյանքում լռել էր, իսկ դժոխքում համբերության բաժակն արդեն լցվել էր, և դարերի մեջ հոգում խտացված մարտնչող ճշմարտությունը դուրս էր թափվել՝ վերջնականապես խլացնելու ստի ու կեղծիքի ականջները:

Կապանքներից վերջապես ձերբազատված դժոխքի բնակիչները միանալով ազատարարների խմբերին՝ ավելի ու ավելի էին մոտեցնում մաքրված հոգիների հաղթանակը չարագործ սատանաների նկատմամբ:

Դժոխքում իր իշխանությունը պահելու ուրիշ ելք չկար, և սատանայապետը որոշեց խորամանկ քայլ անել: Նա մոտեցավ երիտասարդին հարցնելով.

- Կարո՞ղ ես ինձ ասել, ո՞վ է ավելի մեղավոր՝ նա ով ստում է, թե նա ով հավատում է այդ ստին: Ճիշտ պատասխանի դեպքում ամբողջ դժոխքը քոնն է:

- Պատահում է, որ նա ով ստում է, ինքն էլ չգիտի, որ ստում է, - պատասխանեց երիտասարդը, - իսկ նա ով հավատում է, պետք է, որ գոնե մեկ անգամ իր կյանքում սուտ ասած լինի, որպեսզի չհավատա ստին: Հետևություն՝ հավատացողները ստախոս չեն, իսկ ստախոսների մի մասն էլ համոզված է իր ասածի ճշմարտության մեջ, այսինքն՝ չի ստում: Դիտավորյալ ստողներն էլ, անշուշտ, սատանաներ են կամ էլ սատանային ծախվածներ: Իսկ ինձ չես կարող դժոխքով կաշառել:

- Ինձ կներեք, իհարկե, - կողքից խոսակցությունը լսելով մեջ մտավ մի ծեր քահանա, - ես այստեղ եմ դժոխքի ստեղծման հենց առաջին օրերից: Աստված այս դժոխքը ստեղծել է կործանված հոգիներին պատժելու համար, իսկ կործանված ու մեղավոր հոգիներ ունեն միայն սատանաները:

Նախատեսված է եղել նրանց հոգիներն այրել գեհենի կրակներում, բայց նրանք ոչ սահմանադիր ճանապարհով ղեկն իրենց ձեռքն են վերցրել ու դժոխքի տերերն են դարձել:

Նորից իրարանցում սկսվեց: Քաոս էր տիրում դժոխքում: Երբ վերջին կրակներն էին արդեն մոխրի վերածվում, մի քանի սատանաներ գոռացին.

- Դժոխքը վերանում է, դժոխք ենք ուզում, - ու նետվեցին կրակների մեջ գեթ մեկ վայրկյան նորից իրենց դժոխքում զգալու հույսով:

Նրանք իսպառ վերացան: Իսկ մնացածները լեղապատառ դուրս թռան դժոխքի դռնից ու պատուհաններից և անհետացան խավարում:

Դժոխքն այդ շուտով վերանվանվեց «Մաքրված հոգիների կացարան», որի դռները հավիտյանս հավիտենից բաց էին բոլոր այցելուների համար: Ցավոք սրտի, այցելուների մեջ նորից սկսեցին սատանաներ հայտնվել: Բնակիչները բողոքեցին.

- Ախր, ո՞վ է տեսել չարի դեմ դարպասներ բանան:

Չնայած, դա իր դրական կողմն ուներ: Երիտասարդն ու իր խիղճը երբրմն-երբեմն այցելուներից տեղեկություններ էին ստանում

հարազատ Երկիր մոլորակի վրա ողջ մնացած մարդկության մասին:

- Այս ի՞նչ արեցիր, - երիտասարդը դժգոհեց իր դեռ ողջ մնացած խղճից, - դու նորից խղճացիր ու ողջ թողեցիր որոշ սատանաների: Շտապեցրի՛ր ինձ ու ես նախօրոք չփակեցի բոլոր պատուհաններն ու մուտքի դուռը: Չէ՞ որ սատանայապետը ողջ դժոխքն անմիջապես տեղափոխեց Երկիր մոլորակ: Ես այդ մասին մեր կացարանի այցելուներից տեղեկացա:

Երիտասարդի խիղճը շտապ հրաժեշտ տվեց տիրոջը՝ խոստանալով հավաքագրել աշխարհում դեռ ողջ մնացած բոլոր մաքրամաքուր խղճերը, ջոկատ կազմել ու սլանալ Երկիրը փրկելու:

- Խի՛ղճ իմ, սիրելի՛ս, չմոռանա՛ս խնդրում եմ, - ձայնեց հայ երիտասարդը նրա ետևից, - չարին խղճացող խիղճը անխիղճ դավաճան է, իսկ դավաճաններին երբեք չպետք է խղճալ: Դե հիմա, առա՛ջ, դեպի հաղթանա՛կ:

Երիտասարդը համոզված էր, որ այնտեղ՝ Երկիր մոլորակի վրա, նույնպես ճիշտը ճշտի դեմ կռիվ էր տալու, և մարդիկ այդպես էլ չէին իմանալու՝ ա՞յս ճշտի հետ համաձայնվել, թե՞ այն: Նա նաև վստահ

էր, որ անարդարության դեմ չլռող հայի խիղճն անթաքույց փրկելու է աշխարհը:

ՃԱՆՃԸ

Դասասենյակում քար լռություն էր: Ժամանակ առ ժամանակ այն ընդհատվում էր երիտասարդ դասախոսի ձանձրացնող ձայնի ելևեջներով, որոնց վրա կարծես հաստատակամ նստած ինչ-որ զուգահեռ գծեր, տարբեր եռանկյուններ, ինչպես նաև երկրաչափական բանաձևեր սլանում էին վերջին դասին հոգնած ուսանողների ուղղությամբ:

- Տեսնում եմ, որ ոչինչ չեք հասկացել, - այս ասելով դասախոսը վերցրեց կավիճը:

- Լավ, ես խնդրի ամբողջ ապացույցը կգրեմ գրատախտակին:

Նա արագ վերցնելով նշումների տետրը՝ սկսեց արտագրել նախօրոք իր կողմից ապացուցված խնդիրը:

Բաց օդանցքից մի շփոթված ճանճ ներխուժեց սենյակ և երկրաչափությունից սաստիկ ձանձրացած

ուսանողներին տեսնելով՝ նույն վայրկյանին էլ կարծես փոշմանեց: Խեղճն ապակիներին բախվելով փորձում էր նորից հայտնվել ազատության մեջ: Լռության մեջ միայն այդ ճանճի տզզոցն էր լսվում ու երբեմն-երբեմն խառնվելով գրատախտակի վրա կավճի թեթև կտկտոցին՝ ինչ-որ չհաջողված ջազային ստեղծագործության սկիզբ էր հիշեցնում:

Ես, ըստ իմ սովորության, մինչ գրատախտակի վրա դասախոսի գրառման ավարտը, գլուխս կախել էի թղթի վրա ու փորձում էի ինքնուրույն լուծել տրված առաջադրանքը: Տզզացող ճանճն ինձ հունից հանում էր: Այնպես կսատկացնեի... Չէ, բայց ես իմ կյանքում դեռ ոչ մի ճանճ չէի սատկացրել: Համենայն դեպս, դա իրեն իրավունք չէր տալիս մտնել մտքերիս մեջ և իր բզզոցով իրար խառնել ամեն ինչ: Չնայած, այդ ի՛նչ զգացողություն էր, ինչ-որ շատ հարազատ հիշողություններ էր կարծես արթնացնում իմ մեջ: Ես չնկատեցի, թե ինչպես այն ինձ իր բզզացող թևերի վրա առած տարավ իմ հոր ծննդավայրը՝ Շիրակի դաշտավայրում գտնվող մի փոքրիկ գյուղակի շատ հին տներից մեկը:

Հայրս նոր, փոքրիկ հեռուստացույց էր գնել, որ ամառային արձակուրդները գյուղում անցկացնելով չձանձրանայինք: Դա այդ գյուղի առաջին և միակ հեռուստացույցն էր: Նա միացրել էր էկրանը, բայց ձայնը դեռ չէր կարգավորել և ոչինչ չէր լսվում: Մենք՝ երեխաներով, շատ էինք ուզում լսել այդ օրվա հեռուստահաղորդումների ծրագիրը:

Կիսամութ սենյակը պայծառացել էր նոր հեռուստացույցի էկրանի լուսավորմամբ: Շլացնող լույսից մոտակա ճանճերն արագ սենյակ էին ներխուժում ու մի քանի շրջան գործելով՝ նստում աթոռների հենակներին, պատերին ու սեղանին: Թվում էր, թե այդ պնդերես միջատները նույնպես պատրաստվում էին հեռուստացույց դիտել: Հաղորդավարուհին ձկան նման անձայն բացում և փակում էր բերանը, իսկ մենք ջանք էինք գործադրում շրթունքների շարժումներից գլխի ընկնելու՝ մուլտֆիլմ լինելո՞ւ էր, թե ոչ:

Պատուհանի նուրբ ու թափանցիկ ապակիներին բախվելով՝ ամենախոշոր և ամենատզզան ճանճն իր երգեցողությունը հասցնում էր բզզոցային հնարավորինս բարձր նոտաներին: Մի քանի

ակնթարթ լռելուց հետո այդ անպատկառը, շուրջը ոչ մի երաժշտական լարային գործիք չգտնելով, նորից շարունակում էր նվագել մարդկանց նյարդային համակարգերի նրբին լարերի վրա:

Ես սրել էի լսողությունս՝ հուսահատ փորձելով այդ հեռուստացույցի էկրանի լռության մեջ գոնե մի պատահական, թեկուզև աննշան ձայն որսալ: Իսկ ճանճը շարունակում էր բզզալ ու սղոցել ականջներս.

- Տըըզզզ, տըըզզզ…

- Վա՛յ, էս տուփի միջի մորաքույրը ճանճի պես տզզալ գիտի՛, - զարմացած բացականչեց երեք տարեկան եղբայրս:

Մեր հռհռոցի վրա բակի երեխաները սենյակ ներխուժեցին ու կյանքում առաջին անգամ հեռուստացույց տեսնելով՝ տեղում քարացան:

- Այդ ի՞նչ է պատահել, որ բոլորը ներս վազեցին, - ինքն իրեն բարձրաձայն խոսելով ներս մտավ տատիկս՝ գոգնոցով սրբելով ալրոտ ձեռքերը: Նա շանթահարվածի պես կանգնեց հեռուստացույցի դիմաց ու սկսեց վախեցած աչ ու ձախ նայել:

Էկրանի պատկերը մի պահ կորավ ու հայտնված սև ու սպիտակ գծերն սկսեցին ճանճից ավելի բարձր բզզալ: Դե իհարկե, եկել էր պահը գնահատելու բնության ստեղծած նույնիսկ տհաճ ձայն հանող միջատի առավելությունը մարդու ստեղծած էլեկտրոնային սարքի համեմատ: Մեկն ընդամենը թեթև բարկացնում էր քեզ, իսկ մյուսն ուղղակի շլացնելով աչքերդ՝ ռմբակոծում էր ականջներդ: Վերջապես էկրանի անձայն պատկերը վերականգնվեց, բայց ճանճային աղմուկը դեռ շարունակվում էր: Ես բարկացած հայացքով հետևում էի այդ զմրուխտե ցոլքերով թափանցիկ թևեր ունեցող միջատի անկանոն թռիչքներին, երբ լսվեց տատիկիս տարակուսած ձայնը.

- Ա՛յ քեզ բան… Այս կինն ինչպե՞ս մտավ այս տուփի մեջ և ինչո՞ւ է անձայն խոսում: Իսկ որտեղի՞ց նա եկավ, ես բակում հենց դռան մոտ էլ նստել՝ խմոր էի հունցում, ոչ ոք չկար այնտեղ:

Մենք ծիծաղի փռթկոցը հազիվ պահելով՝ անմեղ աչուկներով նրան էինք նայում:

Տատս ապշահար բոլորին հերթով հարց էր տալիս.

- Դու տեսա՞ր, տեսա՞ր, - պատասխանի չսպասելով դիմում էր մյուսներին, - դուք տեսա՞ք ինչպես մտավ սեղանի վրա դրված այս տուփի մեջ:

Տատս այլայլված դեմքով մեզ էր նայում: Մեր չարաճճի հայացքներին հանդիպելով՝ նա մոտենում էր այդ նոր հայտնված խորհրդավոր արկղին ու փորձում տարբեր կողմերից ավելի ուշադիր ուսումնասիրել: Նա զարմանքով կռանում և սեղանի տակ էր նայում, որի վրա հեռուստացույցն էր, շոշափում էր էկրանն ու նորից հարցնում ինձ.

- Բայց որտեղի՞ց եկավ, չտեսա՞ր, ա՛յ բալա:

- Հա՛, հա, տատի՛ ջան, - վրա էր տալիս ավագ եղբայրս իմ փոխարեն, - ես տեսա, նա մտավ ներս և ուղիղ վազեց հեռուստացույցի էկրանի մեջ:

Մենք նույնպես մի կերպ զսպելով մեր ծիծաղը՝ պնդում էինք, որ տեսել ենք, թե ինչպես է այդ կինը էկրանի մեջ խցկվել: Տատս շատ վախեցած էր ու կարծես ինչ-որ վտանգ էր զգում այդ անլուծելի առեղծվածից: Չէր հասկանում, թե ինչու էին սենյակում գտնվողներն այդքան հանգիստ ու առանց որևէ զարմանքի ընդունում այն փաստը, որ մարդ

կարող էր փոքրանալ ու տեղավորվել այդ հեռուստացույց կոչվող արկղիկի մեջ:

Էլ չդիմացանք ու այնքան քրքջացինք, որ բոլորս արցունքակալվեցինք: Մեծ քույրս՝ ով տասնմեկ տարեկան էր արդեն, փորը բռնած գալարվում էր գետնի վրա՝ թափահարելով ոտքերը: Նրա ծիծաղն այնքան վարակիչ էր, որ չէի կարող զսպել ինձ: Ինչքան էլ փորձում էի տատիկիս չնեղացնել, չէր ստացվում, և ես էլ նրանց հետ բարձրաձայն ծիծաղում էի:

Իմ ծիծաղի ձայնից և դասախոսի ինձ վրա ուղղված հայացքից սթափվեցի.

- Ի՞նչ է, դու ուրիշ լուծում գիտե՞ս, որ ծիծաղում ես: Ահա՛, ամեն ինչ արդեն ապացուցված է, - բարկացավ դասախոսը՝ կավճոտ մատներով գրատախտակը ցույց տալով:

Առաջին շարքում նստած տղաներից մեկը, որը «Գիտունիկ» մականունն էր կրում, ակնոցներն ուղղելով ընդհատեց նրան.

- Ներեցե՛ք, կարծես շատ երկար էր ու շփոթեցնող, ոչինչ չհասկացա:

Երիտասարդ դասախոսը մի փոքր շփոթվեց: Ես տարակուսանքով նայեցի նրա կավճոտ ձեռքի ուղղությամբ: Երկու գրատախտակներն էլ լցված էին տարբեր երկրաչափական փոքր պատկերներով, տառերով ու նշաններով: Այսքան երկար ապացույց ես երբեք տեսած չկայի, ասես շարունակությունն էլ դեռ պատերին պիտի գրվեր: Դասախոսն ինձնից կարճ լուծման պատասխանն էր սպասում:

Ես նույնիսկ մոռացել էի, թե ինչ էինք ապացուցում: «Աստված իմ, ուրեմն նա կարծում է, որ իր երկար, ծայրից ծայր գրառման վրա եմ բարձր ծիծաղում», - մտածեցի ես՝ զգալով, թե ինչպես էր ականջներիս հրդեհը կամաց-կամաց տեղափոխվում այտերիս: Իրենց հանդիմանական հայացքներն ինձ վրա ուղղած՝ դասընկերներս նույնպես պատասխանի էին սպասում:

«Դըզզզ…, դըզզզ…», - նորից այդ աներես ճանճը: Պայթյունավտանգ լռության մեջ այնպես էր տզզում, կարծես ինքն էլ էր սպասում պատասխանի: «Դե թող ինքն էլ հենց պատասխանը տա, - կատակեցի մտքումս ու նույն պահին էլ լրջացա: Ի՞նչ կատակելու ժամանակ է: Պիտի ասել՝ այո կամ՝ ոչ, ավելի ճիշտ՝

ոչ, չէ՞ որ չարաճճի ճանճերն ինձ մոռացնել տվեցին ամեն բան: Կարծես հիմա էլ գլխիս մեջ են բզզում:

- Դու կարող ես ավելի կարճ ձևով ապացուցե՞լ, որ այդպես բարձր, հրճվալից ծիծաղում ես, - հեգնեց դասախոսը:

- Այո՛, - լսվեց իմ վճռական պատասխանը: «Ինչպե՞ս թե՝ այո, ինչո՞ւ ասացի՝ այո, ախր որոշել էի պատասխանել՝ ոչ, - ինքս ինձ վրա բարկացա ես, - հիմա ի՞նչ եմ անելու, չէ՞ որ նույնիսկ չգիտեմ, թե ինչ էր պահանջվում ապացուցել»: Ճանճի թևերով երանելի մանկության մեջ հայտնվելուց հետո հեշտ չէր մի ակնթարթում նորից տեղավորվել այս իրականության մեջ: Գլխումս կարծես բացի «այո» բառից ու ճանճի տզզոցից ուրիշ ոչինչ չկար:

- Դե ուրեմն, ե՛կ գրատախտակի մոտ ու ապացուցի՛ր, - հնչեց դասախոսի կտրուկ ու մի փոքր բարկացած ձայնը:

Հայացքս գցեցի գրատախտակի վերջին տողերին՝ հասկանալու, թե ինչ էր ապացուցված և վերցրեցի կավիճը: «Մի քանի րոպե անց ես ականատես կլինեմ իմ կյանքի ամենախայտառակ պահերին, - մտածում

էի, - հիմա մեր ամբողջ խումբը քրքջալու է վրաս: Դա դեռ ոչի՛նչ, իսկ վիրավորված դասախո՞սը: Դե եկ ու նրան բացատրիր, որ այս ամենի մեղավորը ե՛ս չեմ, այլ՝ զզվելի ձայնով բզզացող միջատն է»:

Հանկարծ նկատեցի, որ գրատախտակին գրված երրորդ տողից հետո անմիջապես հետևում է պատասխանը, այսինքն՝ խնդրի ապացույցը և միանգամից համոզիչ տոնով բարձրաձայնեցի այն:

Դասասենյակում աշխուժություն սկսվեց: Բոլորն անկեղծ ու գոհ ժպտում էին, դասախոսը՝ նույնպես:

- Ա՛յ, հիմա հասկացանք, - ձայնում էին տարբեր կողմերից ու բացում սեղանների վրա դրված իրենց համակարգիչները՝ նոր գրառումներ անելու:

Իսկ ճանճն անվերջ տզզում էր ու տզզում...

Ախր, այդ աներես փոքրիկ միջատի համար ի՞նչ տարբերություն, թե ում էր խանգարում իր միալար բզզոցը՝ գյուղի սենյակում անգույն հեռուստացույց դիտողի՞ն, թե՞ մայրաքաղաքի ինչ-որ դասասենյակներից մեկում համակարգիչ օգտագործող ուսանողին: Իր գործը տզզալն էր ու մարդկանց հունից հանելը՝ ինքն էլ իր գործի մեջ մեծագույն վարպետ:

ՍԱՏԿԱԾ ԳԱՅԼԸ

Ներկան չգիտի, որ անցյալը ստում է: Իսկ անորոշ ապագան ոճիրն իր դեռ չի գործել, բայց կգործի անկասկած, քանի որ այն էլ անցյալ կդառնա մի օր, և ոճրագործ անցյալը դարձյալ կխաբի:

Անցյալը լոկ հիշողություն է, իսկ հիշողությունը հիշում է ինչ ինքն է ուզում ու ինչպես որ ինքն է ուզում, որովհետև որոշ «ազնվաբարո» մարդիկ լքում են ներկան՝ իրենց հետ տանելով Նեռի դեմ պայքարի լռության խորհուրդը: Իսկ երբևէ լսե՞լ եք, որ ճշմարտությունը լռությամբ հաղթանակ տանի, այն էլ այն դեպքում, երբ ճշտի համար պայքարողների թիվը գնալով նվազում է: Հոշոտված ոչխարների լռությունը կարո՞ղ է կանգնեցնել գայլերին: Այո՛, իհարկե, եթե գայլերն արդեն սատկած են:

Արամը երազում է հենց այդպիսի մի սատկած գայլ տեսնել: Քանի որ այն արդեն անվնաս կլինի, մոտ կգնա, չի խորշի բացել այդ գիշատչի երախն

ու նայելով ահազարհուր ժանիքներին՝ մտովի կպատկերացնի, թե ինչ զգացած կլինեն խեղճ զոհերն այդ ժանիքավորի անկուշտ երախին վերջին անգամ նայելիս: Բոլոր այդ հոշոտվածների վրեժն էլ կլուծի հանելով դրա ժանիքներն ու ծիծաղելով այդ «քյաֆթառ» սատկածի վրա:

Արամը, այդ տասնվեցամյա թխադեմ ու թիկնեղ պատանին, իրենից մի քանի տարով փոքր քրոջ հետ ամեն ամառ քաղաքի շոգերն աղմկաշատ բակերում թողնելով՝ արձակուրդներն անց է կացնում այս գյուղում՝ պապիկի տանը: Թեպետ նախընտրում է ազատ ժամերին խորանալ գիտական ու փիլիսոփայական գրքերի մեջ, սակայն շատ է սիրում նաև հովվի մահակը ձեռքը վերցնել և իրենց գամփռ շան՝ Գմփոյի ուղեկցությամբ հսկել մի քանի հարևաններին պատկանող ոչխարների փոքր հոտի անվտանգությունը:

Չնայած արդեն իր հովվային կյանքի երկրորդ շաբաթն է, պատանի հովիվը խիստ մտահոգ է:

Մի գառնուկ է անհետացել իր հոտից ու արդեն մի քանի օր է դեռ չի պարզվել եղելությունը: Գյուղի իր ամենամոտ ընկերը՝ Սաքոն կատակով պնդում է, թե

գիշատիչ գայլ է նրան փախցնողը, իսկ տանեցիներն ու հարևաններն ասում են, որ իրենց կողմերում գայլեր չկան ու դա նախանձ հարևանի ձեռքի գործ կլինի:

Այսօր ոչխարների հետ սար գնացողների խմբին են միացել Սաքոն, մի քանի թափառական շներ ու նաև Արամի քույրը՝ Վիկան, որն իր ճարպկությամբ և ուժով բոլորովին չի զիջում իր տարեկից որևէ տղայի:

- Էդ գելերը քեզ վստահված ոչխարներից ի՞նչ են ուզում, դու կարծես գելերի մագնիս լինես, - ծիծաղելով ընկերոջ հոգու հետ է խաղում Սաքոն, - Արա՛մ, զարմանում եմ, մինչև քեզ դեռ ոչ մի այսպիսի դեպք չեմ հիշում, որ պատահած լինի:

- Տղե՛րք, չեմ հասկանում, երկու-երկու կանգնած եք եղել ու այդ ո՞նց եկավ, որ չտեսաք, - զարմանում է Վիկան, - բա էսքան շները ո՞նց չեն նկատել էդ գայլին:

- Բայց բոլորն են ասում, որ էս կողմերում գայլ չկա, - արագ ավելացնում է Արամն ու հեգնում, - հա՛, հասկացա՝ հավանաբար, այդ գառան գողը միայնակ

շրջող գայլ է: Ի՞նչ ես կարծում, իսկ կարո՞ղ է շատ խորամանկ աղվես է, հը՞ Սաք:

Սաքոն փորը բռնած, բարձր հռհռալով թավալվում է խոտերի մեջ:

- Ի՞նչ միամիտն ես, - ծիծաղի միջից մի կերպ արտաբերում է նա, - ո՞նց են քեզ էդքանից հետո էլի վստահում էս գործը: Մի օր էլ էդ քո «աղվեսագայլը» քեզ կշփոթի մի բոյով ոչխարի հետ ու իմ լավագույն ընկերը կանհետանա այս խորը ձորերում:

Արամի ծիծաղը պայթելով միանում է ընկերոջ արդեն օդի մեջ գալարվող հռհռոցի բոցեղեն լեզվակներին, և երկու դեռահաս պատանիները երկար ժամանակ չեն կարողանում լրջանալ: Ձեռքերն ու ոտքերն օդում թափահարելով՝ հուսահատ փորձեր են անում կասեցնելու մոլեգնող ծիծաղն ու այտերի մկանների սաստկացող ցավը: Վերջապես թուլացած փռվում են խոտերին:

- Գնամ, ստուգեմ, բոլոր ոչխարները տեղո՞ւմ են, - մի կերպ իրեն տիրապետելով ասում է Արամը:

- Հա Է՛լի, կարծես էն Սևուկն աչքովս չի ընկնում, - ավելացնում է Սաքոն, - ոնց որ թե կորել է:

Նրանք արագ վեր են ցատկում ու սկսում փնտրել կորած գառնուկին:

Սաքոն անմիջապես որոշելով օգնել ընկերոջը՝ ձայնային ինչ-որ հատուկ ազդանշաններով ցաքուցրիվ ոչխարներին հավաքում է իր շուրջը: Դա նրա մոտ շատ լավ է ստացվում, կարծես թե ոչխարների հետ համատեղ նոր լեզու են ստեղծել, որը միայն իրենք են հասկանում: Մոտակա բլրակներում ու փոքր ձորակներում անօգուտ փնտրտուքից հետո՝ Արամը ձայնում է մի փոքր հեռու կանգնած քրոջը.

- Վիկա՛, Վի՛կ ջան, մեր եկած ճամփով ետ գնա մինչև աղբյուրն ու արի՛, տես Սևուկը որտե՞ղ մնաց, ես ոտքերս գոնե մի քիչ հանգստացնեմ: Վերջին անգամ բոլորին աղբյուրի մոտ եմ հաշվել, Էդ մոլորվածին էլ կարծես ջուր խմելուց եմ տեսել:

Մինչ Վիկան կվերադառնա՝ Արամը հոգնած պառկում է խոտերին: Երկնքի կապույտը ասես փորձում է նրա առջև բացել ողջ տիեզերքն իր գաղտնիքներով, սակայն, արևի ժպտացող ճաճանչների սուր ծակոցները ստիպում են փակել կոպերը: Նա նույնիսկ փակ աչքերով էլ է զգում, թե

արևն ինչպես է իր վերջին ջերմությունը հավասարապես սփռելով ամենուր, մոր նման փաղաքույշ գուրգուրում բոլոր կենդանի էակներին՝ հորդորելով չմտածել վաղվա օրվա մասին, ապրել միայն ներկայով և քնել խաղաղ ու հանգիստ:

Արամը մի պահ գլուխը բարձրացնում է շուրջը նայելու: «Ապրել միայն ներկայո՞վ, բայց ոչ ոք չգիտի, որ ներկա չկա ու երբեք էլ չի եղել, - զարմացած մտածում է նա, - ապագան սահուն թռիչքով միանգամից անցյալ է ցատկում ամեն վայրկյան ու ամեն ակնթարթ»:

Նա, մոռանալով քիչ առաջվա հոգնածությունը, պառկած տեղից վեր է կենում, կանգնում ու ոտքը մի քայլ առաջ գցելով՝ փորձում է ինքն իրեն համոզել դրանում. «Ահա, ես քայլեցի, այն արդեն կատարված, վերջացած է: Իմ քայլն արդեն անցյալում է: Ստացվում է, որ ամեն ինչ ամեն ակնթարթ ապագայից շարժվում է դեպի անցյալ, իսկ անցյալում հայտնվածները տեղափոխվում են ավելի ու ավելի հեռու անցյալներ, այսինքն կյանքն իրականում ոչ թե առաջ է սլանում՝ դեպի ապագա,

այլ շարժվում է դեպի ետ՝ մխրճվելով անցյալի անսահմանության մեջ»:

Արամը սթափվելով իր մտքերից՝ Վիկային փնտրող հայացքով նայում է շուրջը:

- Էս Վիկան կարծես շատ է ուշանում, է՛, - անհանգստացած մրթմրթում է նա:

Սաքոն զայրացած բացականչում է.

- Ախր, ինչի՞ Վիկային ուղարկեցիր, ես կգնայի: Տեսնես առանց ինձ ի՞նչ էիր անելու: Ախր, շատ անճար ես: Չեմ հասկանում, թե իմ փոխարեն ո՞նց են քո նման անփորձին վստահել էս ապագա խորովածների կյանքերը, հը՞: Ոչխարի փոխարեն երևի մի օր էլ դու կկորես սարերում: Լավ, լավ, մի նեղսրտիր, ես կհսկեմ ոչխարներին, իսկ դու գնա քրոջդ հետևից:

Գմփոն Արամին արահետով դեպի սարը գնալիս տեսնելով՝ նստում է ճամփեզրին և հավատարմորեն սպասում նրա վերադարձին:

Հեռվից լսվում են ոչխարների հոտի մեջ Սևուկին փնտրող և միաժամանակ Արամի հոգու հետ խաղալ փորձող Սաքոյի երգի տողերը.

«Ողորմելի, չար Նեռը հոգնել է մեր Սևուկից,

Նրան իբրև իր բեռը գցել է ցած բլրակից:

Տրա-լյա-լյա, տրա-լյա-լյա, գցել է ցած բլրակից»:

Արահետը նեղ է ու քարքարոտ: Արամն իր հոգնած ոտքերը հազիվ քարշ տալով նորից է բարձրանում այն նույն սարը, որտեղ առավոտյան արդեն եղել են բոլորով:

Քայլում է Արամն ու հիանում սարի ետևում անհետացող արևով, որի վերջին ճառագայթները խավարի դեմ անվեհեր կռվի ընթացքում երկինքն արդեն ներկել են արյան բոսորագույնով: Հոգին ճախրում է ազատության մեջ: Թեթև քամու շոյանքից կարմիր կակաչները հեզաճկուն աղջիկների պես ճոճվում են նազանքով ու ժպտում անդադար՝ մոռացնել տալով խեղճ, կորած Սևուկին:

Մի պահ կյանքի շարունակական գոյությունն իրենից առաջ ու իրենից հետո պատկերացնելով՝ Արամը հրաժարվում է «ներկա» չլինելու իր նախկին կարծիքից: «Իհարկե ներկա կա, - մտածում է նա, - ավելի ճիշտ, միայն ներկա կա: Ամեն ինչ, նույնիսկ մեզ թվացող անցյալն ու ապագան գոյություն ունեն միայն հզոր ներկայի մեջ»:

Հետո փորձելով շրջանցել ցեխոտ ջրափոսերն ավելացնում է. «Իսկ ներկան անվերջ մեծ ժամանակի մեջ անվերջին ձգտող տիեզերական կյանքի շարժվող գոյությունն է»:

«Վա՛յ, էս ինչ էլ լավ միտք ստացվեց», - ոգևորվում է նա, և նույն պահին էլ իրենից գոհ ժպիտը սառում է դեմքին: Նրա դիմաց, կանաչապատ բարձր խոտածածկույթի մեջ, միայն մեջքն ու գլուխը երևացող ինչ-որ գորշագույն կենդանի է պառկած:

Փորձելով գուշակել, թե ինչ է դա, շունչը պահած, շատ զգուշորեն մոտենում է այդ արարածին: «Տեսնես քնա՞ծ է, թե՞ արթուն: Կարո՞ղ է գայլ է, - ինքն իրեն հարց տալով դանդաղ առաջ է շարժվում, - իսկ գուցե ինձ տեսնելով սուտմեռո՞ւկ է ձևանում, տեսնես ի՞նչ կենդանի է»:

Մի պահ ուզում է արագ ետ վազել, բայց ինքն իր վախկոտ պահվածքից ամաչելով՝ շարունակում է առաջ գնալ: Չնայած կենդանու միայն մեջքն ու գլուխն են երևում, Արամի համար արդեն պարզ է դառնում՝ գայլ է, այն էլ սատկած: «Ուրեմն, այնուամենայնիվ այստեղ գայլեր կան: Եթե իմանայի, քրոջս մենակ չէի ուղարկի Սևուկի

հետևից: Սաքոն ճիշտ էր՝ ինչ անճար եմ: Աստվա՛ծ իմ, այս ի՞նչ արեցի ես», - անհանգստանում է Արամը կրծքավանդակում զգալով սրտի զարկերի անհավանական արագ տրոփյունը:

- Վիկա՛, - ինչքան ձայն ունի գոռում է Արամն ու ոչ մի պատասխան չստանալով տարակուսանքով նայում շուրջը:

Իր իսկ ձայնի տագնապած ու հուսահատ հնչյունների արձագանքն ավելի է սարսափեցնում Արամին: Համենայն դեպս, որոշում է գայլն իր հետ վերցնել և ոտքով թեթև հարվածելով այդ սատկած կենդանու մեջքին՝ փորձում է դուրս բերել դրան խոտերի միջից: Թեթև հրելով գայլին՝ նա նորից է ձայնում է.

– Վի՛կ:

Հանկարծ ոտքերի մոտ գտնվող գայլի անկենդան դին մի տեսակ հեռավոր ու խուլ, կարծես գետնի տակից հնչելով՝ մարդկային ձայնով սկսում է բողոքել.

- Վա՛յ, դե հերի՛ք է խփես, Արա՛մ, հո վայրենի չես:

Արամն անսպասելիությունից մի կողմ է ցատկում: Նայում է խոտերի մեջ անշարժ ընկած գայլին,

գլուխը շրջում աջ ու ձախ: Մոտակայքում բացի իրենից ու այդ գետնին ընկած կենդանուց ոչ ոք չկա: «Էս ո՞վ էր, հիմա սա իրականությո՞ւն է, թե՞ երազ», - մտածում է նա ու բարձրաձայն կանչում.

- Հե՛յ, ո՞վ ես, ո՞վ կա էստեղ:

Խոսող սատկած գայլի առեղծվածը դեռ չբացահայտված՝ գայլի փորն անսպասելի բացվում է, և միջից երևում է Վիկայի գլուխը: Կորած քույրը գլուխը գայլի փորից հանելուց հետո՝ բարձր բուսածածկույթի մեջ թաքնված իր ոտքերն ու մարմինը մի կերպ դուրս է քաշում և ոտքի կանգնում:

Արամի զարմացած հայացքի ներքո սկսում է անսպասելի ցատկոտել տեղում ու ծիծաղելի շարժումներով հարվածել մեկ ոտքերին, մեկ ձեռքերին, մեկ փորին: Հավանաբար, ոտքի կանգնելու պահին Վիկան մրջնանոց է տրորել՝ բնաջնջելով մրջյունների մի հսկայական բազմություն: Փրկվածներն էլ դեռ լեղապատառ մագլցում են նրա մարմնով վեր՝ հասնելով նույնիսկ վզին:

Արամն անմիջապես օգնության է հասնում, և արդեն չորս ձեռքեր անխնա հարվածներ են տեղում Վիկայի մարմնի վրայով վազող այդ աներես սև կետերին: Տեսարանը շատ յուրօրինակ է: «Սաքոն այստեղ լիներ, - մտածում է Արամը, - հիմա կծիծաղեր ու կասեր՝ ամոթ չի՞, էս երկու հոգով վրա եք տվել, մեկին ե՞ք ծեծում»:

- Ա՛յ Վիկուլ, էս ոնց վախեցրի՛ր: Էդ ի՞նչ էիր անում, ինչո՞ւ էիր թաքնվել այդ կենդանու որովայնում և ինչո՞ւ չէիր իմ կանչերին պատասխանում: Թե՞ փորձում էիր պարզել ինչ կզգայիր, եթե էդ գայլը քեզ խժռած լիներ, հը՞ - ծիծաղում է Արամն ու հոգնած նստում առաջին իսկ պատահած քարի վրա:

- Արա՛մ, - ասում է Վիկան, - հիշո՞ւմ ես փոքր տարիքում ինչի մասին էինք վիճում: Ես միշտ պնդում էի, որ բոլոր կենդանիներն էլ գիտեն, որ Աստված կա, բայց կարծում են, թե Աստված իրենց իսկ տեսքով է՝ շները կարծում են Աստված շան տեսք ունի, գայլերը՝ գայլի, իսկ դու չէիր համաձայնվում:

- Վա՛յ, մտքովս չէր անցել, - հեգնում է Արամը,- ուրեմն, գլուխդ մտցրել էիր այդ սատկած գայլի փորի մեջ համոզվելու, որ դրա մեջ խիղճ կոչվող Աստվածն

իրոք գոյություն չունի ու վերջապես, տարիներ անց համոզվեցիր, որ ես էի ճիշտ, չէ՞:

- Արա՛մ, մի քիչ էլ, որ սպասեիր, հաստատ կտեսնեի նրան, - ծիծաղելով ավելացնում է Վիկան՝ թաքցնելով իր չհաջողված կատակը: Նա սատկած գայլի մորթով պատսպարված, որոշել էր կազմակերպել մոտեցող եղբոր վրա այդ կենդանու անակնկալ հարձակումը:

- Սպասի՛ր, սպասի՛ր, դու ինչպե՞ս կարողացար գլուխդ ամբողջովին ներս մտցնել, - այս ասելով Արամը կռանում ու ձեռքն է վերցնում սատկած գայլի մարմինը: Զննելով այն՝ զարմացած բացականչում է.

- Այս ի՞նչ է, ներսը լրիվ դատարկ է, սա հատուկ մշակված է:

Վիկան նայելով ավագ եղբոր աչքերի ապշած հայելուն՝ ընդհատում է նրան ասելով.

- Էդ գայլը հեչ, Սևուկին չգտանք, արի՛, արի աղոթենք, Արա՛մ ջան, որ մնացած ոչխարներն անփորձանք մնան: Չէ՞ որ, եթե տատիկը ողջ լիներ ու տեսներ այս ամենը, հաստատ կաղոթեր, - ու զննող հայացքով նայում է եղբորը:

Արամի մարմնով մի պահ սարսռեցուցիչ դող է անցնում: Իր հոգին կարծես փորձում է թաքնվել ոչ

թե քրոջ, այլ՝ տատիկի հայացքից, բայց ինքն ի՞նչ մեղք է գործել, որ ուզում է աննկատ մնալ այդ պարզ ու ջինջ, մինչև ոսկորները թափանցող հայացքից, չէ՞ որ բոլորն էլ գիտեն, թե ինչքան ազնիվ ու միամիտ է ինքը: Իսկ գուցե իր մեղքը հենց միամտությո՞ւնն է:

- Վի՛կ, իսկ հիշո՞ւմ ես տատիկը նաև ասում էր. «Երբ սուտը չես կարող բացահայտել, որովհետև միամիտ ես, ոգևորում ես այդ ստախոսին ու դրանով իսկ օգնում նրան իր հետագա սուտ ու մութ գործերում»:

Արամը շրջվելով Վիկայի կողմը և տեսնելով ափերն իրար միացրած քրոջ ձեռքերն ու աղոթող շուրթերը՝ միանում է նրան:

Նրանք ավարտելով իրենց կիսաձայն աղոթքը՝ երկու կողմերից այդ սատկած գայլի ոտքերից բռնած նեղ արահետով շտապում են վերադառնալ: Սաքոն հեռվից ծիծաղելով ձայն է տալիս.

- Յա՛, էս գել եք սպանե՞լ:

Նա մոտ է վազում ու Սևուկին չտեսնելով բացականչում է.

- Խեղճ Սևուկ, ասում էի չէ՞, ասում էի, բայց ինձ լսող չկար: Էս գելն էլ հենց կերել է նրան: Դե հիմա ասե՛ք, էս սատկած գելին որտե՞ղ գտաք:

- Ի՞նչ իմացար, որ գտել ենք, - զարմանում է Արամը:

- Ծիտը խաբար բերեց, - հեգնում է Սաքոն ու հռհռալով ավելացնում, - բա որ ասում եմ գելերի մագնիս ես, Արա՛մ, նեղանում ես, թե էս սարերում գել չկա: Լավ, ինչի՞ եք բերել, գցեիք մի տեղ, թող մի ուրիշ սոված գել էլ դրան խժռեր: Գոնե մի բարի գործ արած կլիներ էդ սատկածը՝ ինչ-որ սոված կշտացնելով:

- Սա՛ք ջան, Սա՛ք - Վիկան փորձում է ընդհատել Սաքոյին, բայց վերջինս կարծես չլսելու տալով հարցնում է.

- Հը՞, Վի՛կ ջան, կարո՞ղ է էս գելին Աստված է պատժել մեր Սևուկին ուտելու համար:

- Չէ՛, Սա՛ք, էս գայլն արդեն վաղուց մշակված է, երևի վաճառքի համար, - արագ վրա է տալիս Վիկան, - էս գայլը չի կարող ուտել ոչինչ, Սևուկին ուրիշն է փախցրել:

- Լա՛վ, լա՛վ, հանգստացե՛ք, - ծիծաղում է Սաքոն, - ե՛ս եմ էդ գելին բերել, քեռուս հավաքածուից եմ վերցրել:

- Ի՞նչ, ի՞նչ ես ասո՞ւմ, - ականջներին չհավատալով հարցնում է Արամը:

- Դե դու երեկ երազում էիր սատկած գել տեսնել, վա՞տ եմ արել, հա՞: Բերել, դրել եմ ճամփեզերքին, որ քեզ անակնկալ լինի, - ասում է Սաքոն ու Արամի շփոթված դեմքին նայելով ծիծաղը մի կերպ պահելով ավելացնում է.

- Հլը պատմե՛ք, պատմե՛ք, թե ո՞նց եք գելին տեսնելով մի լա՛վ վախեցել, երկու կողմից էլ ոնց եք մահակներով հարձակվել ու անխնա հարվածներով փորձել եք սատկացնել արդեն սատկածին: Վա՛յ, հիմա ծիծաղից կմեռնեմ, որ պատկերացնում եմ էդ տեսարանը, էլ չեմ դիմանում, - ու փռթկոցը չկարողանալով պահել՝ փորը բռնելով հռհռում է: Քիչ հետո մի կերպ լրջանալով ավելացնում է.

- Էսօր պիտի սրան գաղտնի դնեմ իր տեղը քանի դեռ քեռիս չի նկատել:

- Այ ապրե՛ս, Սաքո՛ ջան, դու իսկակա՛ն ընկեր ես, - ասում է Արամը, - էս ինչերի միջով ես անցել ինձ անակնկալ անելու համար: Գիտե՞ս, երբ քաղաքում եմ լինում, քեզ այնպես եմ կարոտում: Իմ բոլոր ընկերներից ամենաշատը քեզ եմ սիրում ու

վստահում: Դե էդ գայլը նորից դիր ուսապարկիդ մեջ, որ չկորի:

Սաքոն ուսապարկը բացելուն պես այնպես է այլայլվում, կարծես ներսում հրեշ տեսած լինի:

- Սաքո՛, էդ ի՞նչ եղավ, - հարցնում է Վիկան, - կարո՞ղ է, ինչ-որ այլմոլորակային է պայուսակիդ մեջ թաքնվել:

Սաքոն իրեն ոչ հատուկ կերպով, անբնական ժպտում է:

Վերադարձի ճանապարհը կարծես ավելի հեշտ է: Ոչխարներն արդեն կուշտ են և հազվադեպ են կանգնում արածելու: Հոգնածությունն էլ ստիպում է ավելի արագ քայլել, երբեմն էլ շտապելուց իրար վրա բարձրանալ և միմյանց հրելով անցնել առաջ:

- Սա՛ք, նայի՛ր ոնց են տրորում իրար՝ առաջ ընկնելու համար, ոնց որ խաղալ չիմացող սկսնակ ֆուտբոլիստներ լինեն, - կատակում է Վիկան:

Սաքոն կարծես մտքերի մեջ է և Վիկային չի լսում: Սատկած գայլին գցել է մի ուսին, իսկ մյուսից կախ տվել իր ուսապարկը, որի մեջ ընկերների կողմից ենթադրյալ «այլմոլորակայինն» է: Թեթև մարմնով, բայց ծանրացած հոգով բոլորին սարից ցած

առաջնորդելով՝ նա վարժ սպորտսմենի պես ցատկոտում է քարերի ու ջրափոսերի վրայով:

Հոտի վերջից քայլող Արամը շատ տխուր է: «Ո՞րն է իմ մեղքը՝ անճար հովիվ լինե՞լը, - ինքն իրեն անվերջ սրտնեղում է նա ու գլուխը կախ առաջ շարժվում:

Քանի որ ամեն անգամ դադարի պահերին շները չեն հեռանում Սաքոյի գետնին դրված ուսապարկից ու քաշքշելով փորձում են բացել պարկի բերանը, կապը գնալով թուլանում է, և թվում է, թե ուր որ է կբացվի այն ու ողջ պարունակությունը դուրս կթափվի: Սաքոն ամեն անգամ հազիվ քշելով նրանց ու դեռևս լրիվ չհանգստացած՝ վեր է ցատկում և առաջարկում շարժվել առաջ: Այս անգամ Գմփոյին հաջողվում է այնքան հանդուգն գտնվել, որ կարողանում է վայրկենաբար դունչը մտցնելով ուսապարկի մեջ՝ ինչ-որ պոլիէթիլենային կլոր տոպրակ առնել ատամների մեջ: Բոլոր շների դիմացից այն մի կերպ փախցնելով՝ նա վազում և անհետանում է թփերի մեջ:

Սաքոն ակնթարթորեն վազում է ետևից և Գմփոյի ատամներից կախված տոպրակը բռնած՝ կենդանու հետ միասին թավագլոր ընկնում է

թանձր ցեխաջրով լի փոսի մեջ: Չորքոտանու դնչի ամեն թափահարումից նա վեր է շպրտվում ու նորից շրմփում ցեխի մեջ՝ շարունակելով ամուր կառչած մնալ տոպրակից:

Վիկայի ու Արամի աչքերի առջև մարդն իր ձեռքով, շունն իր ատամներով պինդ բռնել են այդ տոպրակը և անզիջում քաշքշում են իրարից: Ժամանակ առ ժամանակ ցեխաջրի միջից երևում են մարտնչողների թափահարվող գլուխներն ու այդ անհասկանալի տոպրակը: Վիկայի անզուսպ քրքջոցը լսելով Սաքոն շնչակտուր ձայն է տալիս.

- Երեխե՛ք, էկեք էս շանը մի կողմ քշե՛ք, չե՞ք տեսնում, ձեր լավագույն ընկերը ձեռից գնում է, իսկ դուք էդտեղ բերաններդ եք բացել, - և դեռ խոսքը չավարտած նորից շրմփում է ցեխի մեջ:

Վիկան մի կերպ զսպելով ծիծաղը փորձում է ձեռքի հեռախոսով տեսանկարել Սաքոյի մենամարտը: Նա նույնիսկ հեռուստացույցով ցուցադրվող իր սիրած ծիծաղաշարժ դեպքերի մրցույթում նման զվարճալի տեսարանի չի հանդիպել:

Վերջապես Սաքոյի ցեխից սևացած դեմքի վրա երևում է նրա սպիտակ ատամնաշարի ցոլքերից

շողացող, լայն ու հաղթական ժպիտը: Իր ետ խլած գնդաձև ավարը երկու ձեռքով ֆուտբոլի գնդակի պես պահած՝ նա մոտենում է ուսապարկին և արտաքուստ հանգիստ ձևանալով տեղավորում այնտեղ:

- Սաքո՛ ջան, էդ ինչի՞ վրա էիք էդ շունն ու դու էդպես կռիվ տալիս, - հարցնում է Վիկան՝ ծիծաղից առաջացած արցունքները թևքով մաքրելով:

- Ճիշտ որ, էդ ի՞նչ էր էդ շան որդին պարկիցդ թռցրել, - ցարմացած Սաքոյին է նայում Արամը:

- Ձեզ ի՞նչ, - ցեխն իր վրայից թափ տալով, մի փոքր նեղացած պատասխանում է Սաքոն, - դե մի սրանց նայե՛ք, օգնելու փոխարեն մեկը կանգնել ծիծաղում է, իսկ մյուսն էլ հանդիսատեսի նման պարզապես դիտում է, համ էլ, շատ իմանաք՝ շուտ կծերանաք:

Դեմքն ու ձեռքերը վերնաշապիկի թևքով սրբելուց հետո Սաքոն խորը հոգոց է հանում մտածելով. «Լավ է, ոչ ոք չտեսավ, թե ինչ էր, դեռ շուտ է, որ իմանան»:

- Վա՛յ, տեսեք, թե ոչխարներն ինչքան հեռացան, - նկատում է Վիկան:

Սաքոն իր սիրած մեղեդին սուլելով փորձում է ընկերներից թաքցնել վատ տրամադրությունը և մի քանի մեծ լոքերով անցնում է բոլորին: Վիկան Սաքոյի հետևից է քայլում ու գեղաճաճանչ արփամուտն ըմբոշխնելու փոխարեն ստիպված է նայել Սաքոյի լայնաթիկունք մեջքին և ուսերից կախված բեռներին: Ուսապարկի բերանի կապը կարծես թուլանում է, և ներսից ինչ-որ փայլուն իր է պսպղում՝ սպառնալով ցած ընկնել:

Եվս մի քանի քայլ և հանկարծ այդ իրն իրոք չրխկում է գետնին՝ ուղիղ Վիկայի ոտքերի մոտ: Ի՞նչ է դա: Դանա՞կ: Աղջիկը կռանում է վերցնելու, բայց դանակին հետևում է դրսի կողմից ցեխոտված, շան ատամներից ծակոտված, գնդաձև մի պոլիէթիլենային ամուր, սև տոպրակ: Վիկան անմիջապես գլխի է ընկնում՝ դա Գմփոյի փախցրած ավարն է:

- Սաքո՛, - ձայն է տալիս Վիկան, - ուսիդ պարկը բացվել է ու իրեր են թափվում դուրս:

Սաքոն չի լսում նրան: Թվում է, թե ինչ-որ տանջող մտքերի հորձանուտից չի կարողանում դուրս գալ: Վիկան հողախառն գետնից վերցնելով դանակն

ու գնդաձև տոպրակը՝ արագացնում է քայլերը Սաքոյին հասնելու և իրերը նրան տալու համար: Տոպրակի պատառոտված տեղերից նա պարզ տեսնում է ինչ-որ տարօրինակ արյունոտված պարունակություն: Շները հանգիստ չեն տալիս և կողքից փորձում են խլել տոպրակը: Այդ քաշքշոցից տոպրակը լրիվ պատռվում է՝ արյունոտելով աղջկա ձեռքերն ու կենդանիների մռութները:

«Ա՛յ քեզ բան, սա հենց Սևուկի գլուխն է, իսկ մարմինն ո՞ւր է, պարկի մեջ հաստատ չէր տեղավորվի, - զարմանում է Վիկան, - ուրեմն՝ Սաքոն մորթել է գառնուկին և ինչ-որ տեղ մաս-մաս թաքցրել հետագայում վերցնելու նպատակով: Իսկ այս դանակն ու գառան գլուխը տեսնես ինչո՞ւ է գցել ուսապարկի մեջ»:

Նրա աչքերի առջև կանգնածն արդեն իր ու Արամի իմացած Սաքոն չէ, ո՞ւր կորավ նա՝ եղբոր մանկության ջինջ ու պայծառ հիշողությունները դեպի երջանիկ անցյալ գլորող ազնվասիրտ ընկերը:

Վիկան ընկնում է տարակուսանքի մեջ: Ի՞նչ անել՝ տեսածի մասին պատմե՞լ եղբորը, թե՞ ոչ: Ի՞նչ կլինի, եթե պատմի: Ահա՛ թե ինչ կպատահի…

Նրա մտքում հորինված մի պատմություն կինոժապավենի պես կարծես իրական գույներով բեմադրվում է երևակայության մեջ.

«Ինքը՝ Վիկան շնչակտուր վազում է Արամի մոտ ու նրան մեկնելով դանակն ու գառան արյունաշաղախ գլուխը՝ կամաց փսփսում է.

- Սա նրա ուսապարկից ընկավ, Արա՛մ:

- Մի րոպե, Վի՛կ ջան, ի՞նչ ուսապարկ, սա որտեղի՞ց: Սա հո մեր Սևուկի գլուխն է: Վա՛խ, Սևո՛ւկ ջան, - բացականչում է Արամն ու անմիջապես ձայն տալիս ընկերոջը, - Սաքո՛, Սաքո՛, արի՛, Սևուկին գայլը չի կերել, մարդիկ են մորթել, արի տե՛ս:

- Սպասի՛ր, Արա՛մ, - շարունակում է փսփսալ Վիկան, - դու ինձ լավ չհասկացար, սա Սաքոյի ուսապարկից ընկավ:

Այդ պահին իրենց թիկունքում լսվում է Սաքոյի ձայնը... »:

Վիկան այստեղ մի պահ դադարում է իր պատկերացրած ժապավենի ստեղծումն ու մտքում որոշում. «Չէ, ավելի լավ է պատկերացնել Սաքոյին շատ բարկացած դեմքով իրենց կողքին կանգնած, ոչ

թե ետևում»: Այս ուղղումը մտցնելով իր ստեղծած բեմադրության մեջ՝ շարունակում է.

«Եվ այսպես, այդ պահին իրենց կողքին հայտնվում է կռվարար տեսքով Սաքոն ու զայրացած գոռում է Վիկայի վրա.

- Ո՞վ քեզ թույլ տվեց իմ ուսապարկի միջից սա հանել: Դու հրեշտակ ձևացող գո՛ղ ու ավազակ ես, սրիկա՛, էս անմեղ ձևացողի՛ն նայեք:

- Դա այս դանակի հետ միասին գետնին ընկավ քո մեջքի պայուսակից, - մի կերպ, կմկմալով արդարանում է ինքը՝ Վիկան:

Սաքոն դանակը խլելով իր ձեռքից ու նայելով Արամի շվարած դեմքին՝ սկսում է ավելի բարձր բղավել.

- Հա, ե՛ս եմ մորթել և լա՛վ եմ արել, Արա՛մ: Ուզում էի բոլորն իմանան, թե ինչքան ապաշնորհ ես: Հերի՛ք է արդեն: Ամեն տեղ աչքի ես ընկնում, բոլորը միայն քե՛զ են գովում՝ իմ ծնողները, մեր ընկերները, հարևանները: Ես ինչ էլ անեմ, իրենց աչքին չի՛ երևում: Երեկ չէ առաջին օրը գառնուկ կորցրեցի՛ր, բայց էլի դեռ քեզ են վստահում իրենց ոչխարներին, բա սա ազնի՞վ է: Ազնիվ մարդ չի էլ մնացել էս

աշխարհում: Ո՞վ է տեսել, որ գյուղացուն թողնեն ու քաղաքացուն հովիվ դարձնեն»:

Վիկան սթափվելով տխուր նայում է արդեն հեռվում քայլող և իրերը կորցնելուց անտեղյակ Սաքոյին, որի ուսից կախված սատկած գայլի ոտքերը, անտարբեր ճոճվում են հանցանքը գործած անցյալի ու այն թաքցնել փորձող ապագայի միջև:

Աղջիկը ետ է նայում: Եղբայրը մռայլ է և շատ դժգոհ դեմք ունի:

«Մոտ ընկերներին բաժանելը ճիշտ չէ», - մտածում է Վիկան և որոշում գառան գլուխն ու դանակը մոտակա ձորից ցած նետել, որ Արամն այդ մասին երբևե չտեղեկանա, բայց նույն վայրկյանին էլ փոշմանում է: «Տատիկն ասում էր, որ հանցանքը թաքցնելը մեծ մեղք է», - այս հիշելով նա զգում է, թե ինչքան է կարոտել տատիկին և պինդ-պինդ փակում է աչքերը: Նա դեռ շատ փոքր հասակից միշտ փակել է աչքերը, երբ գլորվելու պատրաստ արցունքներն առանց իր թույլտվության փայլել են աչքերի հայելիներում:

- Վիկո՛ւլ, էդ շներն ինչի՞ են հավաքվել, ի՞նչ են ուզում քեզանից, - հեռվից ձայն է տալիս Արամը:

Վիկան բացելով աչքերը զարմացած շուրջն է նայում: Շները դեռ սոված գայլերի պես պսպղացնելով աչքերը՝ պտտվում են իր ձեռքում գտնվող գառան արյունոտ գլխի շուրջը: «Մի քանի րոպե ևս ու արդեն ուշ կլինի, - մտածում է Վիկան, - այս սոված շների պատճառով Արամը կիմանա Սևուկի հետ պատահածը և ընդմիշտ կկորցնի իր լավագույն ընկերոջը: Հնարավոր է նույնիսկ, որ Սաքոյին տեսնել չցանկանալով, եղբայրն այլևս գյուղ էլ չուզենա գալ»: Վիկան ինքնաբերաբար, առանց երկար մտածելու, ձեռքի մեջ եղած ողջ պարունակությունը արագ շպրտում է զառիթափից ներքև:

Կիսամութ անդունդն իր երախը բաց գիշատչի նման ագահորեն կլանում է նենգոտ մարդկային դավադրության մեջ օգտագործված իրերն ու խոստանում ինքն իրեն, որ դարերով լուռ կմնա, քանզի հավետ թաքցնելով առարկայական ապացույցները, ինքն էլ է այդ հանցագործության մասնակիցը դառնում:

Սաքոն ավելի է արագացնում քայլերը: Պատճառը հոգնածությունն ու բեռից շուտ ազատվելը չէ, այլ՝

այդ խորհրդավոր առեղծվածը հնարավորինս շուտ և լրիվ բացահայտելը: «Վա՛յ, Վիկուլ, Վիկուլ, կատակում էր, թե պարկիս մեջ այլմոլորակային է թաքնվել, - մտքում ծիծաղում է Սաքոն և հիշելով Վիկայի միամիտ, հետաքրքրասեր դեմքը՝ ժպտալով շարունակում, - ախր, խեղճը որտեղի՞ց իմանար, որ մեր կորած Սևուկի գլուխն էր արյունոտ դանակի հետ անսպասելի հայտնվել այնտեղ»:

Իրականում Սաքոն գայլի մորթին ուսապարկի մեջ դնելու պահին հանկարծակիի է եկել: Շատ անսպասելի պարկի ներսում պոլիէթիլենային ուռուցիկ տոպրակ է հայտնաբերել և մի արյունոտ դանակ: Նա անմիջապես ճանաչել է գյուղի իր նախկին ամենամոտ ընկերոջ դանակը և բացելով կլոր ուռուցիկ տոպրակն անմիջապես հասկացել է Սևուկի անհետանալու պատճառը, բայց ընկերներին դեռ ոչինչ չի հայտնել: Որոշել է այդ սատկած գայլն էլ ուսին գցած տանել, քանի որ տոպրակում այդքան ազատ տեղ չի եղել:

Նրա ականջներում կարծես դեռ հնչում են այդ սրիկայի՝ իր նախկին ընկերոջ, սպառնալիքներն իրենց վերջին վիճաբանության ժամանակ. «Ինձ

թողել ու էդ անկապ Արամի հետ ե՞ս ընկերացել, բա էն Վիկա՛ն, Վիկա՛ն: Սաքո՛ տղա, դու դեռ կտեսնե՛ս, թե քո գլխին ինչե՛ր եմ բերելու»:

«Տե՛ս, Է՛, - մտածում է Սաքոն, - իմ ուսապարկի մեջ դնելով՝ կասկածն ինձ վրա է գցել, ո՞նց էսքան ժամանակ չեմ ճանաչել էդ դավաճանին: Իր ծննդյան օրն իմ կողմից նվիրված դանակն էլ դիտավորյալ թողել է հասկացնելու, որ ինքն իր վրեժն արդեն առել է ինձնից: Գուցե թփերի մեջ թաքնված նա հիմա գաղտնի դիտում է մեզ ու հրճվո՞ւմ»:

Սաքոն ուշադիր նայում է շուրջը և զարմացած ինքն իրեն հարց է տալիս. «Բայց ինչպե՞ս է էդ անխիղճը կարողացել այդպես աննկատ հետևելով մեզ վնասել Սևուկին, ե՞րբ է էդ տականքին հաջողվել մոտենալ պայուսակիս, երևի, երբ Արամը գնաց քրոջ ետևից, իսկ ես Սևուկի՞ն էի փնտրում»:

Սաքոն նայելով ետ՝ հեռվում գլխիկոր քայլող Արամին, մտքում շարունակում է. «Մի քիչ էլ դիմացի՛ր, ախպե՛րս, շուտով ամեն ինչ պարզ կդառնա: Ես չեմ լռելու: Հոշոտված ոչխարների լռությունը երբևէ չի կարող կանգնեցնել գայլերին: Երբ տուն հասնենք, բոլորին ցույց կտամ այդ իրերը,

որ սրիկան այլևս նման չարագործ արարքներ չգործի: Կարևորն այն է, որ մարդիկ հավատան, որ ես չեմ գառնուկին մորթողը: Լավ է, այդ իրերն իմ ուսապարկի մեջ են: Աստված իմ, առանց այդ արյունոտ դանակի մի սատկած գայլ էլ ես կլինեմ՝ ճիշտ իմ ուսից կախված գազանի պես անլեզու և անճար, ոչինչ չեմ կարողանա ապացուցել»:

Ինչպես միշտ, ներկան չգիտի, որ անցյալը ստում է: Սաքոն նույնպես չի կասկածում, որ անցյալում հայտնված այդ ոճրագործ իրեղեն ապացույցներն արդեն իսկ կեղծում են՝ իրենց լռությամբ թաքցնելով իրականությունը: Անորոշ ապագան էլ ոճիրն իր դեռ չի գործել, բայց կգործի անկասկած, քանի որ Վիկան էլ կլռի իրերը ձորը նետելու իր մասնակցության մասին և իր մեղքը խոստովանելով միայն Աստծուն՝ ամեն ինչ կթողնի անցյալում:

Իսկ դառնաթախիծ երեկոն, ըստ իր սովորության, ամեն վայրկյան ամեն ինչ անցյալ կնետի, որտեղ ողջը կմոռացվի ու կմնան միայն այս պատմվածքի նման ճշմարտահունչ դեպքերն ու պատմիչների կիսաճիշտ ստերը:

ՄԻԱՅՆԱԿ ԹԱՓԱՌԱԿԱՆԸ

Սավառնում եմ ես կապույտ երկնքում ու այնքան մոտ եմ արևին: Ամպերից կարված խայտաբղետ ու թափանցիկ հագուստներ եմ հագնում և հիանում ինքս ինձնով: Մայրամուտին արծիվների կողքով այնպես եմ ճախրում, կարծես թե ես էլ մի հզոր արծիվ եմ: Այգաբացին լույսի մի շողք եմ դառնում ու համոզված եմ, որ արևի ճառագայթներից ամենաջերմն եմ ու ամենակարևորը:

Հանկարծ սարսափելի հազից խեղդվելով բացում եմ աչքերս և երազիս միջի անհուն երկնքից մի ակնթարթում հայտնվում անկողնուս մեջ: Հազս այնքան է սաստկանում, որ կոկորդս խեղդելով սպառնում է փակել շնչառությունս: Զգում եմ, որ մի քանի րոպեից արդեն ուշ կլինի: Եթե այսպես շարունակվի, կարող եմ նույնիսկ մահանալ:

Աստիճաններով արագ ցած եմ վազում ու առանց դուռը թակելու ներխուժում աղջկաս սենյակ: «Եթե հիմա ինձ հետ վատ բան պատահի, - մտածում եմ, - նա անմիջապես կօգնի ինձ»: Մի քանի վայրկյան

ուշաթափվելուց հետո, երբ աչքերս բացում եմ, շատ եմ ուրախանում, որ փրկվել եմ:

«Փառքդ շատ, տե՛ր իմ, այս անգամ էլ եմ շնորհակալ քո գթասրտության համար», - ասում եմ բարձրաձայն: Սակայն, զգում եմ, որ դուստրս տխուր է, կարծես ինձնից ինչ-որ բան է թաքցնում, անվերջ արտասվում է: «Տեսնես, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ է աղջիկս այսքան շփոթված, գուցե ամուսինն է նեղացրել: Այդ տղան ինձ երբեք էլ վստահություն չի ներշնչել: Աստվա՛ծ իմ, իսկ կարող է՞ ես չեմ փրկվել, - սկսում եմ կասկածել ու անհանգստացած շուրջս նայել:

Այդ պահին հիշում եմ հայտնի փիլիսոփա Ռենե Դեկարտի այս արտահայտությունը. «Մտածում եմ, հետևաբար՝ գոյություն ունեմ» և շատ եմ ուրախանում: Դե իհարկե, ես չեմ մահացել, քանի որ ես հիմա կարողանում եմ մտածել: Ուղեղս ակնթարթորեն պայծառանում է և սկսում ինձ հակադարձել.

- Դու նորից ամեն ինչ բառացի ես հասկանում, - շուտասելուկի պես վրա է տալիս նա, - փաստարկը պետք չէ հասկանալ որպես եզրակացություն:

- Գիտեմ, - ստում եմ ես: Ուղեղիս այդ ասածներից, իհարկե, ոչինչ էլ չեմ հասկանում, չնայած հենց այդ բացատրությունը կարդացել եմ ինչ-որ տեղ: Արդեն բարկացած հարցնում եմ.

- Բայց ինչո՞ւ ես նորից ոգևորությունս փչացնում: Մի՞թե դու ուրախ չես, որ դեռ գոյություն ունենք: Իսկ գուցե ես փրփուրների՞ց եմ կառչում, քե՛զ ինչ:

Անմիջապես որոշում եմ շատ ինքնուրույն լինել: «Ուղեղիս այլևս չեմ լսի, նա խիղճ չունի, - ասում եմ ինքս ինձ, - ես կշարժվեմ, ինչպես հոգիս կամենա»:

- Մա՛մ, մա՛մ ջան, - գոռում է աղջիկս՝ Էմման, - ի՞նչ եղավ քեզ:

Դե իհարկե, ես ընկած վիճակից դեռ չեմ վեր կացել, այդ պատճառով էլ Էմմաս անհանգիստ է: Ես մի կերպ նստելով՝ քնքշորեն փաթաթվում եմ նրան և համբուրելով այտն ասում.

- Հանգստացի՛ր, աղջիկս, տեսնո՞ւմ ես ամեն ինչ շատ լավ է:

Նա դեռ չի համոզվել, որ լավ եմ ու տագնապած բղավում է ամուսնու վրա՝ ասելով.

- Ի՞նչ ես անհասկացողի պես քարացել, Արտա՛շ, շտապ օգնություն զանգի՛ր:

- Էմմա՛ ջան, - հանգստացնում է նրան ամուսինը, - խնդրում եմ, ամուր եղիր: Ես հասկանում եմ քեզ, չէ՞ որ ես էլ եմ մայր կորցրել, իսկ շտապ օգնությունն արդեն ճանապարհին է:

«Իրոք, ի՜նչ անհասկացող ու անտաշի մեկն է այդ մարդը, - Արտաշի վրա զայրացած մտածում եմ ես, - նոր ասացի, որ լավ եմ, իսկ նա իր մեռած մորն է հիշում, փոխանակ համոզի աղջկաս, որ լավ եմ: Գուցե իրականում չի՛ էլ ուզում, որ լավ լինեմ, ո՞վ իմանա: Ես նրան մեր ծանոթության հենց առաջին պահից էլ չեմ վստահել»:

Հանկարծ նկատում եմ, որ օդն իմ շնչառական ուղիներով ոչ մտնում է և ոչ էլ դուրս գալիս: Ա՛յ քեզ նորություն: Փաստորեն, ես կարող եմ ապրել նաև առանց թթվածնի: Նայում եմ շուրջս: Ոչինչ չի փոխվել: Ես վերջում լույս երևացող թունելի միջով չեմ անցնում, ինչպես տեսել եմ կինոներում, ուրեմն, իրո՛ք, ես դեռ ողջ եմ: Երկիր մոլորակում գտնվող մեր համեստ բնակարանում եմ: Ահա պատից կախված ժամացույցը, հեռուստացույցը, նկարները: «Հրաշք է, ես կարող եմ այսպես՝ առանց թթվածնի, ապրել հավիտյան», - ուրախանում եմ ես: «Այլևս հազից

խեղդվելուց չեմ վախենա: Ընդհանրապես, էլ ոչնչից չեմ վախենա: Ես հաղթեցի մահին, - ինքս ինձ խոստովանում եմ հպարտորեն, - հարկավոր է այս հրաշք նորությունն անմիջապես հայտնել աղջկաս: Եթե միայն իմանա, թե դեռ չբացահայտված ի՜նչ գաղտնիքներ կան աշխարհում: Ախր, սա լրիվ նորություն է ինձ համար՝ կյանք առանց շնչելու»:

Ժպտացող դեմքով նայում եմ շուրջս: Հավերժ ապրելու երջանկության զգացումը կլանել է հոգիս:

- Էմմա՛ ջան, աղջիկս, - մեղմորեն դիմում եմ նրան, - կներե՛ս, որ քեզ այսքան վախեցրի: Գիտե՞ս, ես հիմա անմահ եմ: Ես դա զգում եմ իմ ամբողջ մարմնով ու հոգով: Ես առանց շնչելու կարող եմ վազել, թռչկոտել ու տե՛ս, խոսել քեզ հետ:

- Գիտեմ, մա՛մ ջան, ես շատ ուրախ եմ քեզ համար:

- Է՛մ, մի տեսակ տխուր ձայնով ես ասում, որ ուրախ ես:

Էմման գլուխը ձեռքերի մեջ է առնում ու ոնց է հեկեկում, այնպես աղիողորմ, այնպես հուսահատ, որ սիրտս կտոր-կտոր է լինում:

- Ա՛յ քեզ բան, ինչո՞ւ ես լալիս: Դու փոքր հասակում, երբ երեխաները նույնիսկ քո սիրած խաղալիքն էին խլում քեզնից, դարձյալ չէիր լալիս:

- Մա՛մ, մա՛մ ջան, քեզ շատ եմ սիրում, դու իմ սիրո՛ւն, իմ աննմա՛ն մամա:

- Ես էլ քեզ, քա՛ղցրս, - այս ասելով նայում եմ նրան ու զարմանքից կարծես արյունը սառչում է երակներումս: Նա շարունակում է շատ սիրալիր խոսքեր ասել ինձ, բայց փաստորեն, ինձ հետ իր մտքի մեջ է խոսում. ոչ նայում է վրաս, ոչ էլ շուրթերն են շարժվում: Ինչպե՞ս եմ կարողանում լսել նրան:

- Մի զարմացի՛ր, մա՛մ ջան, - նորից պարզ լսում եմ դստերս մտքում ասված տխուր բառերը, - ցավոք սրտի, հիմա միայն այսպես կարող ենք զրուցել իրար հետ: Այս խոսակցությունն էլ իրական չի: Սա ես ու դու ենք հորինում:

Ես տարակուսանքով թոթվում եմ ուսերս:

- Արտա՛շ, - աղջիկս շատ հուզված դիմում է իր ամուսնուն, - հոգուս խորքում զրուցում էի մամայիս հետ, նա այնպես հանգիստ էր, ասես ապրում ենք առօրյա կյանքով, և իր հետ ոչինչ էլ չի պատահել:

Ես նրա խոսքերից ոչինչ չեմ հասկանում: Իսկ ի՞նչ պիտի ինձ պատահած լիներ: Ես փրկվել եմ, կյանքը շարունակվում է: Սկսում եմ մի տեսակ նյարդայնանալ: Ինչո՞ւ ոչինչ չեմ հասկանում: Գուցե ծերացե՞լ եմ ու մի ողջ սերունդ ետ եմ ընկել կյանքի սովորական հունից:

Հոգեբանները նման դեպքերում խորհուրդ են տալիս, որ ինքդ քո վրա զայրանալու փոխարեն միացնես երաժշտություն և շարժվես ռիթմի տակ այնքան մինչև կարողանաս պարել արդեն ինքնամոռաց՝ կտրվելով իրականությունից:

Ես պարելով մոտենում եմ հայելուն՝ մտքումս երգելով ինչ պատահի: Հայելին ամբողջ կյանքում ոգևորել է ինձ՝ իմ շարժումները բնականից ավելի գեղեցիկ ու սահուն արտացոլելով:

Իհարկե, ետ եմ ընկել կյանքից: Մարդիկ ստեղծել են արհեստական բանականություն, որը նույնիսկ երգեր է հորինում, առանց վարորդի ավտոմեքենաներ, այժմ էլ հայելի են ստեղծել, որն ամեն ինչ արտացոլում է բացի իր մեջ նայողից: Այս վերջինի մասին դեռ չէի լսել: Երևի ծիծաղի սենյակի հայելիներից է՝ երեխաներին զվարճացնելու համար:

Մի տեղ նրանք կչքանան, մյուս հայելու մեջ նորից կհայտնվեն ծիծաղելիորեն չաղացած կամ մեծացած գլխով: Այս ժամանակակից տեխնոլոգիաների դարում, ոչնչի վրա այլևս զարմանալ պետք չէ: Դեռ ինչե՛ր կտեսնենք:

Դռան զանգն է: «Ի՞նչ էլ շուտ եկան բժիշկները, - մտածում եմ, - դե հիմա ինչպես եկել են, թող այդպես էլ ետ գնան, ես նրանց կարիքն այլևս չունեմ, ես լավ եմ»:

- Դուռը բաց արա՛, Արտա՛շ, եկան արդեն, - Էմման դիմում է ամուսնուն ու նորից հեկեկում:

Սպիտակ խալաթավորներն անխոս ներս են մտնում, պառկած տեղից ինձ տեղափոխում իրենց պատգարակի վրա և ուղղվում դեպի դուռը:

- Էդ ո՞ւր եք ինձ տանում, սրիկանե՛ր, ես լավ եմ, - բղավում եմ ես ու վազում դռան մոտ: Ամբողջ մարմնով ու ձեռքերով փակելով նրանց ճանապարհը շարունակում եմ գոռալ.

- Չեմ թույլ տա, որ անցնե՛ք, կանգ առե՛ք, կանցնե՛ք միայն իմ դիակի վրայով:

Նրանք ճեղքելով ինձ՝ հանգիստ դուրս են գալիս դռնից, կարծես ես չկամ, թափանցիկ օդ եմ, կարծես

ոչ լսում են, ոչ էլ տեսնում ինձ: Ի՞նչ անել: Գնալ նրանց ետևից և ստիպել, որ ե՞տ բերեն ինձ, թե՞ մնալ աղջկաս կողքին և նրա վիշտը փարատել: Նրա հետ ինչ-որ մեծ դժբախտություն է պատահել, այնպես եմ խղճում նրան: Քանի որ աղջիկս ինձ համար միշտ էլ ավելի կարևոր է քան ես, որոշում եմ մնալ:

«Այս ի՞նչ էր, - վերջապես սթափվում եմ, - հենց նոր ես աչքովս տեսա, որ ինձ տարան, բա հիմա ես ինչպե՞ս եմ տանը: Ուրեմն, մարմինս տարան, իսկ ես այստեղ եմ, հոգի եմ, և մարդիկ ինձ չեն տեսնում»:

Պարզվում է, որ հայելիները չեն կատակում: Անկեղծ ասած, հիմա եմ հասկանում, թե ինչո՞ւ են հնից եկած սովորության համաձայն, որոշ մարդիկ արագ ծածկում բոլոր հայելիներն ու արտացոլող ապակիները, երբ որևէ հարազատ է հեռանում կյանքից: Չէ՞ որ ես հենց հայելու մեջ նայելու պահից էլ արդեն գլխի եմ ընկել, որ այլևս չկամ կենդանի մարդկանց շարքերում: Ուղղակի չեմ կարողանում համակերպվել դրա հետ: Չնայած, գուցե այսպես էլ վատ չի: Եթե ես այս աշխարհում այլևս գոյություն չունեմ, ուրեմն կարող եմ տեսնել բոլոր իմ

հարազատներին, որոնք կյանքին վաղուց են հրաժեշտ տվել: Ինչքա՜ն եմ կարոտել նրանց:

- Տա՜տ ջան, պապի՛ ջան, որտե՞ղ եք, ձեր թոռնիկը եկել է ձեզ մոտ, - կանչում եմ բարձրաձայն ու հուզված: Չնայած, ես ի՞նչ թոռնիկ, ես ինքս կարող էի տատիկ լինել հիմա: Տեսնես կճանաչե՞ն ինձ:

Ոչ ոք չի հայտնվում, և հանկարծ հասկանում եմ, որ մեզնից յուրաքանչյուրն էլ հիմա իր առանձին պորտալով է կապված աշխարհին ու երբեք էլ իրար չենք տեսնի: Աստվա՜ծ իմ, նրանցից ամեն մեկն էլ հիմա միայնակ թափառում է կենդանության օրոք իր ընկալումներով ստեղծած աշխարհում:

Գուցե իրենց աշխարհում ես դեռ գոյություն ունեմ և դեռ շատ մեծ սպիտակ ժապավենով ու փոքրիկ սև պայուսակով այն աղջնակն եմ, որը պինդ բռնելով իր աշխույժ պապիկի ձեռքից շնչակտուր դպրոց է վազում՝ բարձրաձայն կրկնելով տնային հանձնարարությունը: Գուցե դպրոցի՞ց է տուն վազում վայելելու տատիկի պատրաստած տաք կոտլետներն ու կարկանդակները: Չէ՞ որ վերջին անգամ նրանք ինձ այդ տարիքում են տեսել: Ուրեմն, ես միաժամանակ գոյություն ունեմ արդեն հուշ

դարձած ծանոթներիս ու ընկերներիս հազարավոր զուգահեռ աշխարհներում: Ի՞նչ իմանամ, գուցե այդ աշխարհներից ամեն մեկում ես իմ յուրօրինակ ճակատագիրն ունեմ:

Աստվա՛ծ իմ, նորից այսքան գուցենե՞ր: Միշտ մտածել եմ, որ երբ կյանքս ընդհատվի, ես վերջապես կիմանամ իրականում ինչ կա կյանքից այն կողմ, կիմանամ բոլոր գաղտնիքները: Ցավոք սրտի, դարձյալ ոչինչ պարզ չէ, բացի նրանից, որ ոչ միայն մարդիկ ինձ չեն տեսնում, այլև՝ հոգիները: Շատ ձանձրալի է:

Երբ ձանձրանում եմ, նախընտրում եմ հանդիպել ընկերներիս կամ բարեկամներիս: Չնայած մի քանի օր է, ինչ չեմ տեսել նրանցից որևէ մեկին, բայց արդեն այնքա՛ն եմ կարոտել: Շատ-շատ եմ սիրում բոլորին: Գուցե այցելե՞մ նրանց: Ինձ չեն տեսնի, բայց ես կարոտս ու ձանձրույթս կփարատեմ:

Ամբողջապես սիրով լցված սլանում եմ ուսանող տարիներից շատ մոտ իմ գործընկերուհու տուն: Նա իր հարևանուհու հետ, որին նույնպես ճանաչում եմ, սուրճ է խմում պատշգամբում: Նրանք լուռ են: Լսել են իմ մահվան բոթը:

- Ափսոս, լավ կին էր, - լռությունը խախտում է հարևանուհին:

- Հա, բայց լսե՞լ ես, որ փեսան կարծես նրան ավելի էր սիրում քան իր կնոջը, ավելի ճիշտ՝ նրա փողերն էր սիրում:

- Ամո՛թ ձեզ, ամո՛թ, - զայրացած բղավում եմ, - լռե՛ք, անզգամնե՛ր:

- Լսել եմ, ոնց չէ, - շարունակում է նրա հարևանուհին, - ա՛յ կտեսնես, շուտով կնոջից բաժանվելու է, իսկ տունն էլ Էմմայից դատարանով խլելու է: Նա հենց տան համար էլ ամուսնացել է, թե չէ ինչի՞ պիտի էդ տգեղ և տձև մայր ու աղջկա հետ էդքան քնքույշ ու հոգատար լիներ:

Ես բարկությունից կարծես կարմրում եմ:

- Ճիշտ չէ՛, - բղավում եմ, չնայած գիտեմ, որ ինձ չեն լսելու, - նա երբեք էլ չափից ավելի հոգատար չի եղել մեր հանդեպ ու մենք բոլորովի՛ն էլ տգեղ չենք:

Բարկացած դուրս եմ գալիս այդ տնից: Ավելի լավ կլինի գնալ իմ լավ հարևանների մոտ: Այս հիմար խոսակցությունն էլ ինչքան հնարավոր է շուտ պետք է մոռանալ:

Դռնից դեռ ներս չմտած՝ լսում եմ ամուսինների միմյանց վրա բղավոցները: «Վիճում են, լավ է ներս չմտնել», - որոշում եմ ես ու նույն պահին էլ, չգիտես ինչու, հայտնվում եմ նրանց կողքին: Իհարկե, դա վատ արարք է իմ կողմից՝ լսել ուրիշի տանը տեղի ունեցող վիճաբանությունը, բայց, ախր, կանացի հետաքրքրասիրություն է, ի՞նչ կարող եմ անել:

- Հո չե՛ս գժվել, ա՛յ կին, նորից եմ ասում: Ես Էմմայի մոր հետ ոչ մի կապ չեմ ունեցել, մենք այդ տարիքում չենք հիմա, որ խանդես, վերջացրո՛ւ այդ թեման, - վրդովված գոռում է ամուսինը, որին մանուկ հասակից եմ ճանաչում: Բակում շատ ենք խաղացել միասին:

- Ճի՛շտն ասա, - ճչում է կինը: Աչքերդ են մատնում քեզ, թե որքան տխրեցիր, երբ իմացար նրա մահվան մասին: Չէ՞ որ նա ամուսին չուներ և այնքան հմայիչ էր ու գեղեցիկ կազմվածքով, որ ոչ մի տղամարդ անտարբեր չէր կարողանում անցնել նրա կողքով:

- Ա՛յ կին, ախր, ես ի՞նչ գործ ունեմ այդպիսի գեղեցկուհիների հետ: Մանավանդ, որ ամուսին

չունեցողները հիմնականում վատ վարքի տեր կանայք են լինում:

- Սրիկանե՛ր, - վիրավորված գոռում եմ նրանց վրա ու լացակումած աչքերով փողոց վազում:

Քամու նման սուրալով մտնում եմ իմ ազնիվ ընկերներից մեկի տուն, որն ինձ միշտ քաջալերում է չլռել ու պայքարել բոլոր անարդարությունների դեմ:

Նրա կինն արդեն սեղանը պատրաստել և ամուսնուն է սպասում, այսինքն՝ իմ խոհերն ու վրդովմունքները կիսող անչափ նվիրված այդ ընկերոջս:

- Վատ լուր ունեմ քեզ համար, - ամուսնու տուն մտնելուն պես ուրախ ձայնով նրան է դիմում կինը, - Էն մեր մշտական հյուրը, դե էն Էմմայի մայրը, Է՛լի, որ միշտ գալիս էր խորհուրդ հարցնելու քեզնից, ասում են՝ մահացել է:

- Վա՛յ, վերջապես պրծա՛նք դրանից, գլուխներս Է՛լ չի տանի: Բե՛ր, կնի՛կ ջան, բեր մի-մի բաժակ խմենք:

Ականջներիս, իրո՛ք, չեմ հավատում: Գլխիկոր շարունակում եմ այցելել բոլոր ծանոթներիս՝ մեկ առ մեկ մտնում եմ նրանց տներն ու այլայլված դուրս

գալիս: Այնպիսի անհավանական և իրականության հետ աղերս չունեցող բամբասանքներ եմ լսում, որ մնում է անկեղծ ուրախանալ, որ այլևս չկամ: «Եթե ողջ լինեի, հաստատ ինքնասպանություն կգործեի», - մտածում եմ ես: Պարզվում է՝ ընդամենը մեկ իսկական ընկեր ունեմ, և դա միայն ես եմ:

Դե, ի՞նչ արած, ավելի լավ է տուն գնալ: «Տուն, քաղցր տուն», - ասում եմ ու սլանում այնտեղ, ուր շուտով պիտի ներս բերեն իմ ներքին օրգաններից արդեն զրկված մարմինը: Չեմ նկատում, ինչպես է ինձ հաջողվում փակ պատուհանով ներս մտնել: Երկու օր առաջ մի փոքրիկ փայտե խաղալիք մկնիկ էի դրել պատուհանի փեղկերի դիմաց, որ գիշերները քամուց չբացվեն:

- Բա՛ց թող ձեռքս, սրիկա՛, - լսվում է Էմմայի ցավից զայրացած բղավոցը:

«Աստվա՛ծ իմ, երևի մարդասպան հանցագործ է ներխուժել այստեղ իմ այս բացակայության ընթացքում, - անհանգստանում եմ ես, - բայց չէ՞ որ հոգիները ֆիզիկական ուժ չունեն, ինչպե՞ս օգնեմ նրան»:

Արագ ինձ սենյակ եմ գցում և ի՞նչ...

Ամուսինը՝ այդ անտաշ Արտաշը, աղջկաս մի ձեռքը ոլորել է, մյուսի բռունցքի մեջ էլ փորձում է գրիչը խոթել օձի պես ֆշշացնելով.

- Կստորագրե՛ս, Էմմա՛, այնպես խելոք-խելոք կստորագրես, որ ինքդ էլ կզարմանաս:

- Այս տունը մայրս ի՛նձ է կտակել, ոչ թե քեզ, - բղավում է իմ խեղճ դուստրը, - ես նրան խոսք եմ տվել, որ բացի ինձնից ուրիշ սեփականատեր չի լինի: Թո՛ղ ձեռքս, ցավում է:

- Թո՛ղ նրան, - ինչքան ձայն ունեմ, գոռում եմ ու փորձում պոկել նրա բազուկներն աղջկաս թևից, բայց թույլ հպման զգացողություն անգամ չեմ ունենում: Օդում պտտվելով հարվածում եմ նրա գլխին ու քաշում ականջները: Ոչինչ չի օգնում: Գուցե ոստիկա՞ն է պետք կանչել:

Ես չեմ կարող հեռախոս վերցնել: Իսկ եթե փողոց վազեմ պատահական մարդկանցից օգնություն խնդրելո՞ւ: Չէ, իմ ձայնն անգամ չեն լսի, չէ՞ որ չկամ, ես հոգի եմ: Ի՞նչ անել: Ախ հա, գտա՛: Պետք է այնպես անել, որ գոնե հարևանները տեղեկանան այս ընտանեկան բռնության աղիողորմ գոռոցների ու վեճերի մասին: Հենց նրանք էլ ոստիկան կկանչեն:

Պատուհանն է պետք բացել, որ ձայները լսվեն, բայց այդ փեղկերը փակող խաղալիք մկնիկը ոչ մի կերպ չեմ կարողանում պատուհանի գոգից ցած գցել:

Իսկ եթե ամբողջ էներգիաս կենտրոնացնեմ այդ փայտե խաղալիքի վրա ու ինձ հաջողվի այրե՞լ այն: Շատ կինոնկարներ եմ տեսել, որտեղ ուրվականներին հաջողվել է հրդեհ առաջացնել: Հարևանները ծուխը տեսնելով ապակին կկոտրեն ու ներս կմտնեն: Բայց եթե հարևաններն ուշանան, տունն էլ, Էմման էլ, էն անտաշն էլ, նույնիսկ այս աթոռակի վրա նստած խեղճ փիսոն էլ այրված կլինեն արդեն:

Կարեկից հայացքով նայում եմ կատվին: Նա դարան է մտել և կարծես պատրաստվում է հարմար պահ գտնել զոհի վրա հարձակվելու:

«Թրը՛խկ», - արագ ցատկելով լուսամուտի գոգին դրված փայտե փոքրիկ մկնիկի վրա՝ պատահաբար ցած է գցում այն, և հրաշք՝ պատուհանի փեղքն արդեն բաց է: Կողքի սենյակում դեռ վիճում են, բայց ձայներն այնքան ցածր են լսվում, որ սկսում եմ անհանգստանալ, կարո՞ղ է ոչ ոք չլսի:

Չէ, փառք Աստծո, ինչքա՜ն լավ է վատ հարևաններ ունենալը: Իրենց անդորրը խաթարող ամենափոքր ձայնի դեպքում էլ անգամ նրանք պատրաստ են ոստիկան կանչել և բողոքել հարևաններից:

Քիչ անց մի քանի ոստիկաններ տանում են Արտաշին, որի ձեռքերը չափազանց գեր մարմնի պատճառով հազիվ են մեջքի ետևից հասնում իրար: «Վա՜յ, մեղք է, - մի պահ սկսում եմ խղճալ նրան, - հիմա ձեռքերն ինչքան կցավեն»: Հետո հասկանում եմ, որ չարին խղճալով բարին երբեք չի հաղթանակի: Ամեն քայլափոխի իր ծանր մարմինն աջ ու ձախ թափահարելով Արտաշը փորձում է ազատվել զինված ուղեկիցներից՝ գոռալով.

- Էս ո՞վ է ոստիկան կանչել, դե՛ սպասե՛ք, կվերադառնամ ու ձեռքիցս չե՛ք պրծնի:

Վազում եմ աղջկաս մոտ: Նրան նայելիս համոզվում եմ, որ ջանքեր չի խնայի ազատելու այդ սրիկային ընտանեկան բռնության հոդվածով դատվելուց, և ես արդեն հազարերորդ անգամ ստիպված կլինեմ դիտել նույն կինոնկարի ժապավենը, որն արդեն պատկերացնում եմ աչքերիս առջև.

«Այդ վայրենի անդաստիարակը, նորից տուն է վերադառնում և ձեռքը մտերմաբար աղջկաս ուսին գցելով ասում է.

- Է՛մ, Է՛մ ջան, կներես, կարծես կորցրել էի ինձ, ախր, շատ կոպիտ վարվեցի:

- Հեռու գնա ինձնից, վայրենի՛, - նրան ետ հրելով զայրանում է դստրիկս:

Այդ պահին ամուսինը մեջքի ետևից իր մի ձեռքով թաքցրած ծաղիկեփունջն անսպասելի պարզում է դստերս: Օ՛, դրանք աղջկաս ամենասիրած ծաղիկներն են՝ ծիրանագույն վարդեր, ինչպե՞ս կարող են չդյութել նրա կանացի հոգին:

- Պետք չե՛ն քո ծաղիկները, մենք բաժանվում ենք, - փորձում է դեռ ուժեղ կնոջ դեր խաղալ Էմման:

Արտաշը վերջապես գրպանից հանում է իր ամենաուժեղ զենքը՝ կեղծ մարգարիտները: Իրական մարգարիտները՝ տղամարդու այդ դառն ու անկեղծ արցունքները, դժվար է երբևէ տեսնել: Դրանք դժբախտության պահին ամպրոպաճայթ հեկեկոցով հեղեղվում են նրա հոգուց ներս, ոչ թե աչքերից դուրս:

- Մի՛ հավատա նրան, - ձայնում եմ ես դստերս՝ լսելով այդ սրիկա Արտաշի սրտաճմլիկ ու կեղծ բարբաջանքները:

- Ես քեզ սիրո՛ւմ եմ, Էմմա ջան, ինձ մենակ չթողնես, խնդրում եմ, - այս ասելով Արտաշն իր կեղծ արցունքի մարգարիտներով սարքած ականջօղերը կախում է աղջկաս ականջներից ու մնացածն էլ վզնոցի պես պարուրում նրա ճերմակ պարանոցի շուրջը, և վերջ:

- Սուրճ խմե՞նք միասին, - արցունքները սրբելով հանգիստ տոնով հարցնում է ամուսինը՝ Էմմայիս աչքերում ճառագող ներողամտության բաղձալի ժպիտի մի փոքրիկ հյուլե որսալով:

Նրանք հանգիստ սուրճ են խմում, կարծես ոչինչ էլ տեղի չի ունեցել»:

Ես սրտի ցավով դիտում եմ այդ ժապավենի վերջաբանը*:*

«Էմման կրկին անգամ իրեն բանտարկում է իր ստեղծած ԽԻՂՃ, ՍԵՐ, ԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ եռանկյան ներսում: Նա իր կանացի համբերությամբ նորից դանդաղորեն հյուսում է հաջորդ վայրագ

դրվագների սարդոստայնը, որի մեջ ընկած միակ ճանճը նորից հենց ինքն է լինելու»:

Իմ մտքում պատկերած «Սարդն ու ճանճը» կինոնկարն անջատելով վազում եմ Էմմայի մոտ, ամուր-ամուր գրկում նրան և համբույրներով ողողում դեմքը: Ես կկարոտեմ նրան, շատ կկարոտեմ, քանզի որոշել եմ հեռանալ: Այս տանն այլևս չեմ կարող մնալ: Աղջիկս շատ ներողամիտ է ամուսնու ստախոսությունների ու բռնությունների հանդեպ, իսկ ես մի անկյուն եմ ուզում գտնել այս աշխարհում, որտեղ ոչ սուտ կա, ոչ կեղծիք, ոչ էլ ընտանեկան բռնություն:

Փաստորեն, այս իրապաշտների աշխարհում, նման ազնիվ ու խաղաղ անկյուն գոյություն չունի: Պիտի խոստովանեմ, որ նույնիսկ իմ հոգում այն կարծես չկա: Թեկուզ լիներ էլ, ես ինչպե՞ս ամբողջովին կտեղավորվեի ինքս իմ հոգում, չէ՞ որ ես հոգի եմ: Հոգու մեջ հոգի ապրի՞: Ո՞վ է լսել նման բան:

Չէ, լավ է մխրճվել երկնակամարում և միայնակ թափառել անվերջության մեջ: «Դե՛, դեպի վե՛ր, միայն վե՛ր», - խրոխտ բղավում եմ ինքս ինձ ու

թևերս լայն տարածելով՝ առաջ նետվում: Ես առաջին անգամ կարուսել նստած երեխայի պես երջանիկ նայում եմ շուրջս:

Այստեղ՝ Երկիր մոլորակից հեռու, շատ հեռու բոլոր տեսակի կենցաղային ճղճիմ ու միապաղաղ խոսակցություններն այնքան աննշան են ու չնչին: Բա սա հրաշք չէ՞: Ամեն ինչ այնքան գեղեցիկ է ու ներդաշնակ, որ զարմանում եմ ինձ վրա, թե ինչո՞ւ էի այդպես ամուր կառչել այդ երկրային կյանքից:

- Հրա՛շք է, հրա՛շք, - ամբողջ ձայնով գոռում եմ երկնքից:

- Մա՛մ ջան, իհարկե՛ հրաշք է, վերջապես բացեցիր աչքերդ, - ուրախությունից իրեն կորցրած աղջկաս ձայնը ծակում է ականջներս:

Նայում եմ շուրջս: Աղջկաս սենյակում դեռ ընկած եմ հատակին: Բժիշկներն ինչ-որ սարքեր են միացրել գլխիս ու սրտի ռիթմի չափման տարօրինակ հարմարանքներ կրծքավանդակիս, իրենք էլ աջ ու ձախ են վազվզում և հեռախոսներով ինչ-որ տեղից խորհուրդ ստանում:

Աղջիկս կռանալով համբուրում է այտս.

- Վերածնունդդ շնորհավոր, մա՛մ ջան, բժիշկները կլինիկական մահ են գրանցել ու հայտնեցին, որ այդ վիճակից դուրս գալուց հետո էլ անմիջապես քնել ես: Շնորհակալ եմ Արտաշից: Նա ժամանակին շտապ օգնություն զանգեց և փրկեց քո կյանքը:

Ես շրթունքներս մոտեցնելով աղջկաս ականջին կամաց փսփսում եմ. - Է՛մ ջան, միևնույնն է, ես այդ անտաշ Արտաշին երբեք էլ չեմ վստահելու, - ու հետո բարձրաձայն ավելացնում եմ, - Է՛մ, որ խնդրեմ այն սեղանի վրայից մեծ, կլոր հայելին կփոխանցե՞ս ինձ:

Ես համարյա խլելով հայելին նրա ձեռքից շտապում եմ տեսնել դեմքս, ձեռքերս, ոտքերս: Այո՛, այո՛, նրանք արտացոլվում են հայելու մեջ: Ի՜նչ երջանիկ եմ, Աստվա՛ծ իմ, ես կամ, ես ապրում եմ:

Ուրախությունից ուզում եմ թևերս բացել ու ճախրել վեր, շատ վեր: Մի ակնթարթ անց ժպիտը սառում է դեմքիս: Անմիջապես հասկանում եմ, որ ես չեմ կարող թռչել, չեմ կարող սավառնել ազատության մեջ ու հոգիս սեղմվելով մարմնեղեն կաղապարի մեջ, պիտի շարունակի ապրել երազելով այն հավերժական թռիչքի մասին, որ մնաց միայն իմ վեհ հիշողություններում:

Ի՜նչ լավ էր այնտեղ, ի՜նչ երջանիկ էի ես այն երկնային կապույտի մեջ, որտեղ սավառնում էի ու խառնվում երկնքի լազուրին: Մայրամուտին արծիվների կողքով այնպես էի ճախրում կարծես ես էլ մի հզոր արծիվ էի: Այգաբացին լույսի մի շողք էի դառնում ու համոզված էի, որ ես արևի ճառագայթներից ամենաջերմն էի ու ամենակարևորը...

Սակայն, ոչ ոք չգիտեր ճշմարտությունը: Ես պարզապես մի լուռ ուրվական էի՝ միայնակ մի թափառական այդ հզոր ու անծայրածիր տիեզերքում:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՄԲԻՐ

Թմբիր է, թմբիր է շաղ տալիս
Թշնամու շուրթերով նենգ քամին,
Ցանում է օդի մեջ ու գալիս,
Ետևից սպառնում է ցունամին:

«Խաղաղ ենք, խաղաղ ենք ապրելու,-
Փոխանցում ենք իրար շշուկով,-
Տեսեք դեռ ինչեր ենք գրելու
Մեր խաղաղ քուն մտած արյունով»:

Քնել ենք, և չկա արթնացում,
Իսկ հեռվում ապագան է լացում:
Եղեռն է տես այնտեղ, կոտորած,

Քանի դեռ թմբրի մեջ ենք կորած:

Ախ, ես էլ պոետ չեմ մշտարթուն
Ու թմբիրն այս ինձ էլ է պատում:
Որպեսզի մենք թմբրից արթնանանք,
«Հազարան բլբուլը» պիտ կարդանք:

Ասվում է հեքիաթի հերոսին.
«Չնայես երբեք ետ, քշի՛ր ձին,
Թմբրի մեջ, որպեսզի չընկնես,
Բութ մատդ դու անշուշտ պիտ կտրես:

Միշտ արթուն ու շատ զգոն կլինես,
Եվ որ ցավն քեզ օգնի՝ չքնես,
Դու վրան մի քիչ աղ պիտ լցնես,
Թե արյուն էլ կորցնես՝ հոգ չանես»:

Թմբիր է, թմբիր է շաղ տալիս
Թշնամու շուրթերով նենգ քամին,
Ցանում է օդի մեջ ու գալիս,
Ետևից սպառնում է ցունամին:

ՀԱՅՐԵՆԻ ՄՈԼՈՐԱԿ

Լույս է, հույս է, ճառագայթ է,
Մագլցում եմ վեր, շատ վեր,
Իմ դեմ լարված որոգայթ է՝
Տանում է ինձ անհուններ:

Տե՛ս, հասնում եմ ես տիեզերք,
Իմ հայրենի՛ մոլորակ,
Երկնի մովում այս անեզերք
Ինչքան խեղճ ես, միայնակ:

Ու քո փոքրիկ մարմնի վրա
Բազում օձեր, կարիճներ
Թույն են թափում իրար վրա՝
Վառվող կրակ ու բոցեր:

Շալակել ես դեռ չդատված
Ուրացողներ, մատնիչներ,
Բանսարկուներ՝ չարքից ծնված,
Երախտամոռ սադրիչներ:

Շալակել ու գլորվում ես,
Կանգնի՛ր, ընկնեն թող նրանք,
Չէ՞ որ այսպես կործանվում ես,
Թո՛ղ որ իջնեն՝ տեղ հասանք:

Վաճառում են բարությունդ՝
Բարությունդ գողացված,
Ո՞ւր է հոգու փրկությունը,
Լոկ բառեր են մոռացված:

Չկա բառը, բառը փրկիչ,
Որ ստեղծող է, արարիչ,
Ճիշտն է անգամ, տե՛ս, մոլորվել
Ու խոր ճահիճ գլորվել:

Ախ, ստում են շող ու շաղիկ,
Ստում են փուշ ու ծաղիկ,
Հավետ կյանքի երգով դյութիչ
Մահ են սփռում կործանիչ,

Գցի՛ր, երկի՛ր, չարքին անհետ
Թեկուզ ես էլ վայր ընկնեմ,
Լույսին հասիր լոկ մարդկանց հետ
Անեղծ, անբիծ ու վսեմ:

ԺՊՏԱԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Ժպտում եմ ես ցավի միջով,
Ժպտում եմ նենգ դավի միջով
Եվ անվերջ Ժպտալ եմ ուզում:

Ծիծաղ եմ ուզում ես մանկան,
Երգ-տաղ եմ ուզում իսկական,
Որ մարդկանց հոգին է հուզում:

Աստծուց էլ մի լույս եմ հայցում,
Սեր ու գութ և հույս աղերսում,
Որ տամ խեղճ մարդկանց ազազուն:

Խենթ հոգիս վերև է թռչում,
Նոր ծագող արև է տենչում,

Միշտ խաղաղ երկինք երազում:

Ժպտում եմ ես ցավի միջով,
Ժպտում եմ նենգ դավի միջով
Եվ անվերջ ժպտալ եմ ուզում:

ՍԵՎԱՆՈՒՄ

Ինչո՞ւ Սևանում ես չեմ սևանում,
Նույնիսկ ջրի մեջ այնքան սառնորակ
Ես այրվում եմ միշտ, կարծես մոխրանում:
- Սևա՛ն, իմ լճա՛կ, դու մեղմ, պարզորակ,
Երբ արփին է վառ քեզնով հիանում,
Եվ խանդոտ քամին ամպեր կործանում,
Զմրուխտ ես հագնում, քեզ շատ է սազում,
Իսկ ես գույնիդ մեջ սուզվել եմ ուզում:

Չքնաղ քո տեսքով, գույներով արբած՝
Թռչում եմ ես, տե՛ս, ճայերի հետ վեր,
Օ՛ ոչ, այդ ե՛ս չեմ՝ հոգիս է գերված,
Սիրում է նա քեզ այնպես անձնվեր:

Չէ՞ որ դու մասն ես երկրիս հայրենի
Եվ հսկում ես, որ ոչ մի վայրենի,
Ոչ մի թշնամի ու պիղծ ոտք օտար
Շուրջդ՝ լեռներում, չբռնի շուրջպար:

ՀՈԳՈՒՍ ՀԱՅԵԼԻՆ

Հոգուս մեջ հավատքիս հայելին
Փշրվեց ու ջարդված ընկավ ցած,
Եվ այնտեղ ամեն ոք նայելիս՝
Ինքն իրեն լոկ տեսավ զարմացած:
Իմ հոգուց ամենքը մի մասունք
Լցրեցին գրպաններն ու տարան,
Եվ հոգիս դատարկվեց անարցունք,
Ինձ մնաց մի դատարկ գանձարան:
Ախ հոգ չէ՝ կխնդրեմ լուսնից հույս,
Լեռներից վեհություն կվերցնեմ,
Արեգակն ինձ պարտքով կտա լույս,
Նոր հոգիս նոր գույնով կվրձնեմ:
Իսկ Աստծուց էլ նոր սեր թե ստանամ՝
Հաղթատենչ նոր հույզեր իմ երկրում,

Հավատքով այն մարդկանց շաղ կտամ,
Որ հայոց մեծ Ոգին են կրում:
Թող վերցնեն իմ հոգին անարատ,
Որ նորից եմ քնքույշ նկարել,
Ուր կա սեր, հզոր կամք ու հավատ,
Հայրենիքս է ուր որ ծվարել:

ԻՄ ՍԵՐԸ

Ամպերի, ծովերի կապույտով
Կմաքրեմ իմ հոգին ես շուտով,
Արցունքով, կարոտով կցողեմ,
Ձեզ սիրո հույզերս կթողնեմ:

Դուք՝ ծանոթ, անծանոթ, լա՛վ մարդիկ,
Որպես իմ հարազատ ընտանիք՝
Չեմ ուզում ես ձեզնից հատուցում,
Լոկ վառ սերս եմ սրտանց մատուցում:

Սիրում եմ բոլորիդ, ո՞նց ասեմ

Ու նաև իմ այդ սերն եմ սիրում,
Այն փխրուն է այնպես ու վսեմ,
Իմ հոգում ցնծություն է տիրում:

Բայց սպասե՛ք, դուք այս ի՞նչ եք անում,
Գողանում, խլում եք ողջ սերս,
Սիրո հետ էլ առնում եք, տանում
Հավատս և վերջին հույսերս:

Չէ՞ որ ձերն եմ ես էլ, իմ սերն էլ
Իմ հոգում միշտ վառվող լույսերն էլ,
Պարզապես, վերցրե՛ք ողջն անհատույց,
ԹՈՂ ՍԵ՛ՐԸ ՄԻՇՏ ԼԻՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ:

ԳԻՇԵՐ

Գիշե՛ր լռակյաց, գիշե՛ր մեղավոր,
Դա՞վ ես նյութել դու անցյալից եկող,
Թե սուտն ես թաքցրել՝ դարձել հանցավոր,
Հանի՛ր դիմակդ, խաղա՛ղ ձևացող:
Մի՞թե չգիտես, անգո՛ւթ, անիրա՛վ,

Չարի համար չես ստեղծված դու բնավ,
Այլ՝ միտք ու հոգի խաղաղեցնելու
Եվ ոչ հեգ մարդկանց սոսկ վախեցնելու:

Տե՛ս, լուսինն անգամ հայացքը հառել
Ու թույլ մարմրող լապտերն իր վառել,
Լուսավորում է քո դեմքը անգութ,
Որ չսողոսկես հոգիները մութ:
Նույնիսկ աստղերը մինչև լուսադեմ
Ճչում են մարդկանց խավարին ընդդեմ,
Գոռում են, գոչում, սպառնում անողոք,
Ափսոս, ձայնը այդ չի լսում ոչ ոք:

Անտարբե՛ր գիշեր, ասա՛ ինձ շիտակ,
Լռությունը քո մեղքերով ցողել,
Ինչո՞ւ ես միայն ականջներիս տակ
Ճանճի միալար բզզոցը թողել:
Այդ բզզոցի մեջ շատ չարագուշակ
Վերջին պայթյունն ես կարծես թաքցրել
Եվ մութը սարքած խավար դրոշակ՝
Աշխարհակործան պահը մոտեցրել:

Գիշե՛ր մեղքերի, գիշե՛ր եղկելի,
Գիտնականներին հավաքել էլի
Պայթյունն ես ստեղծել ընդդեմ մարդկության,
Որ վերածես այն հավերժ լռության,
Ուր ոչնչության ոգին է առկա,
Ուր երկինք չկա ու երկիր չկա,
Եվ կյանք թվացող խաղն այս իր ստեղծած
Կրկին ու կրկին կհաղթի Աստված:

ՔԱՈՍ

Աջ եմ շարժվում ու անչափ զարմանում,
Ձախ եմ շրջվում ու նույնչափ զայրանում,
Այս ո՞վ է քանդել դժոխք և դրախտ,
Խառնել է իրար սատանա-հրեշտակ,
Քաոս է սարքել աշխարհը համայն:
Հիմա հավատամ, ասեք ո՞ր մեկին՝
Հրեշտակի դեմքով սատանային այն,
Թե դիմակ հագած վախկոտ հրեշտակին:

ՀԱՅԵՐԵՆ

Տոհմածառիս ծաղիկները
Դու պահպանի՛ր, տե՛ր Աստված,
Լցրո՛ւ նրանց սրտիկները
Երջանկությամբ լուսոտված:
Փրկել թուրքի յաթաղանից՝
Նորից շունչ ես տվել նոր,
Թող վայելեն քո սեղանից
Հացն ուժեղի ամեն օր,
Թող աղոթեն, սրտերն բանան
Եվ քեզ փառք տան, մեծարեն,
Բայց աշխարհում ուր էլ գնան՝
Գովքդ անեն հայերեն:

ՄԵՆՔ

Երբ ծնվեցի, շատ զարմացա՝
Տիեզերքում ես էի միայն,
Իսկ մի կապույտ երկնակամար,

Նաև, իմ շուրջն աշխարհն համայն
Կառուցված էին լոկ ինձ համար:
- Տեսնես ո՞վ եմ ես, տե՛ր Աստված,
Այսքան մարդիկ, այսքան տներ,
Այսքան ծառեր ու ծաղիկներ
Լոկ ինձ համար արարել ես
Ու ինձ անչափ հիացրել ես:

Մի փոքր անց հանկարծ տեսա,
Որ իմ շուրջը բոլոր մարդիկ
Ինձ՝ իմ ԵՍ-ին նման են շատ:
Նրանց ԵՍ-ն էլ միշտ երջանիկ
Տերն էր երկրի այս արևշատ:
Ու այդ պահին ես հասկացա՝
Մենք բոլորս, ախր, նույնն ենք,
Տիեզերքի մի նշույլն ենք,
Եվ իմ ԵՍ-ը անհետացավ,
Հզոր ՄԵՆՔ-ի շարքերն անցավ:

Ախ, ես հիմա շատ եմ ուզում,
Որ մարդկային հոգիներից
ԵՍ-ը ջնջվի, և ազատվենք,

Ձերբազատվենք այն ԵՍ-երից,
Որոնք երբեք չեն դառնա ՄԵՆՔ:
Ուզում եմ միշտ ՄԵՆՔ-ում տեսնել
Ինձ՝ նվազիս, ստորադասիս,
Մեր պապերի ծառը ջրենք,
Մեզ միշտ ուժ տա սարը Մասիս
Ու հողը մեր ԵՍ-ից փրկենք:

ՈՂՋԱԳԻՐ

ՈՂՋո՛ւյն, արև՛, եկել եմ ես,
ՈՂՋ աշխարհում բոլորի պես
ՈՂՋությունդ եմ հավետ ուզում:
«ՈՂՋակիզված» մի ժողովուրդ
ՈՂՋ մնալ է, տե՛ս՝ երազում:
ՈՂՋագուրվենք ու տուր խորհուրդ՝
ՈՂՋ մարդկությունն ո՞նց ՈՂՋ մնա,
ՈՂՋամիտ մարդ մի՞թե չկա:

ԻՆՉԵՎԷ

Ի՞ՆՉ ամպեր են մութ հայոց երկնքում,
Ի՞ՆՉ նոր պայման են Աստծո հետ կնքում,
ԻՆՉպե՞ս, մեր հողը թողնենք, հեռանա՞նք,
Ի՞ՆՉ է, պիտի մենք ընդմիշտ վերանա՞նք:
ԻՆՉքա՞ն պիտ լռենք ու դեռ հանդուրժենք,
Ի՞ՆՉ, պատմությունը մեր ձեռքով դրժե՞նք:
ԻՆՉպես, որ ստով «ճիշտն» են մատուցում՝
ԻՆՉ-որ մի օր էլ կտա՛ն հատուցում:
ԻՆՉո՞ւ են հայոց ոգին անկոտրում
ԻՆՉ-որ պղծվածներ անվերջ տրոհում:
ԻՆՉքան էլ շինծու սուտը պատմական
ԻՆՉ որ ժամանակ դառնա իրական,
ԻՆՉքան էլ հիմա մեր սիրտը ցավի,
ԻՆՉպես էլ չարքը կեղծի ու դավի,
ԻՆՉ էլ , որ անի՝ ոչինչ չի մնա.
ԻՆՉևէ, սա էլ կանցնի, կգնա:

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ

Դողում եմ ես ամռան շոգին,
Տաք անձրևից սրթսրթում եմ,
Ցավ է ապրում, ախ, իմ հոգին
Ու այդ ցավից միշտ արթուն եմ:

Հողն է տնքում իմ ոտքի տակ,
Արմատներս ինձ կանչում են,
Չեմ հանդգնում նայել շիտակ,
Բյուր հարցերով ինձ տանջում են:

- Ո՞ւր են չքվում մեր հողերը:
- Մի՞թե ազգով գերի ենք մենք:
- Իզո՞ւր կորան մեր զոհերը:
- Գերիներին ո՞նց ետ բերենք:

Ու հողն հայոց ճաքեր տալիս,
Մերթ լռում է, մերթ էլ՝ լալիս,
Խռով հոգում խորը ցասում
Պատասխան է ինձնից սպասում:

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐ

Քարե ամրոց՝ Հայո՛ց լեռներ,
Դուք ապրում եք դարեդար,
Արևահորդ երկինքը մեր
Լուռ հսկում եք անդադար:

Վեր խոյացած այնպես հզոր,
Միշտ առնական ու հպարտ,
Որպես վահան գիշեր ու զօր
Դեռ կանգնած եք պինդ, անպարտ:

Խաղա՛ղ լեռներ, հանդա՛րտ լեռներ,
Դուք այդքան վեհ, արծվադեմ,
Մեկդ ջահել, մեկդ՝ շատ ծեր
Էդ ինչո՞ւ եք տխրադեմ:

«Ա՛խ, կան սարեր մեզնից զատված,
Պատա՞նդ են լոկ, թե՞ գերի:
Չէ, ի՞նչ գերի՝ մարտ չտված,
Էլ ո՞նց Աստված մեզ ների»:

«Ժամն է արդեն, բավ է լռենք,-
Ժայռն է ձայնում շատ վերից,-
Ոսոխի դեմ այնպես կռվենք,
Որ ետ փախչի մեր ստվերից:

Մեր բյուրախոհ երգերով դեռ
Պիտի ապրենք ու ծաղկենք,
Բայց ներսում կա ոսոխ անսպեռ,
Հողն այդ չարքից նախ փրկենք»:

ՀՈՒՇԵՐ

Մի վառ արև սրտիս մեջ,
Բարի խոսքեր շուրթերիս
Միանում եմ անընդմեջ
Անցած, հեռու հուշերիս,
Ուր օջախում հայրական
Մանուկ օրերս էին անցնում,
Սիրո կողքին մայրական՝
Կյանքն անվերջ էր, անվատնում:

Տատս գլուխս էր շոյում,
Խրատ տալիս մնայուն,
Իսկ ես քնիս մեջ սուզվում,
Ոչինչ ավել չէի ուզում:
Ախ, երբ այսքան հեռացաք
Դո՛ւք, մանկության վառ օրեր,
Կյանքս հանգի՛ստ, անփորձանք
Կարծես թե հենց այսօր էր:

Ի՜նչ խաղաղ էի երջանիկ,
Ունեի հզոր հայրենիք,
Օդը բուրում էր հացով,
Ու նորածնի սուրբ լացով:
Այնտեղ լույս կար, հույսի շող,
Ձնգուն ծիծաղ ու գարուն,
Ես՝ միամիտ երազող,
Հավատում էի միշտ բարուն:

Մի վառ արև սրտիս մեջ,
Բարի խոսքեր շուրթերիս
Հիմա նայում եմ անվերջ
Դեռ չգրված թերթերիս,

Ուր քնած ենք, պիտ զարթնենք,
Երկիրը մեր պաշտպանենք,
Որ մանուկներն նորանոր,
Խաղաղ ապրեն ամեն օր:

ՆԵՐԻՐ ՆՐԱՆՑ

Նայում եմ շուրջս, մարդիկ կան բազում
Իրենց իսկ խղճից, իրենց իսկ մեղքից,
Իրենց իսկ շողքից կարծես գազազում,
Աշխարհն են դիտում հոգու մութ ճեղքից:

Նախանձով լեցուն հայացքը իրենց
Ուղղում են նրանց, ով չի թաքնված,
Ում հոգին ասես մի հայելի է հենց,
Անկեղծ է, պարկեշտ ու սիրով լցված:

Պղտոր աչքերը հառած ջինջ հոգուն՝
Իրենց են տեսնում այդ հայելու խորքում,
Բայց յուր նողկալին նրան վերագրում,
Նսեմացնում են, հոգին մորմոքում:

Նրանց համար եմ ես խնդրում ներում,
Հայացքս հառած կապույտ երկնքին,
Քանզի չգիտեն՝ այդ հայելիներում
Ի ցույց են դրել դեմքերն ամենքին:

ԲԱՐԻ ԽՈՍՔԸ

Դու կարծում ես բարությունը
Փող տալն է կամ նվերնե՞ր,
Դա՞ է հոգուդ փրկությունը՝
Լցնել որոշ գրպաննե՞ր:
Ոչ, իհարկե, իմ բարեկամ,
Բոլորը պիտ մոռացվեն,
Երբ քո կողմից հոժարակամ,
Գրպաններն Է՛լ չլցվեն:

Փողը ի՞նչ է, փողն ոչինչ է,
Խոսքը ունի լոկ արժեք:
Բարի խոսքը արարիչ է՝
Մնայուն է, լիարժեք,

Լավ իմացի՛ր՝ խոսքը թանկ է,
Այն մեխվում է հոգու մեջ,
Գարնանն արված վար ու ցանք է՝
Բերք է տալու է անընդմեջ:

ԱՆՆԱԽԱՆՁ

Դե եկ, բացատրիր ինչ է նախանձը
Նրան, ով երբեք նույնիսկ իր անձը
Ոչ մեկից ավել չի գերադասել,
Նրանց օգնել է, իրեն անտեսել:

Թե կուզես, ասա. «Շարժիչ ուժ է այն,
Առանց նախանձի աշխարհն է ունայն
Կամ էլ՝ նախանձը մրցույթ է միայն,
Հաղթության պայքարն անվերջ է սակայն:

Իսկ թե չլիներ այդպիսի պայքար,
Ոչ ոք աշխարհում չէր էլ իմանա,
Թե մարդ կա նաև, ում հոգին քանքար,
Ի՛նչ աննախանձ է և ինչ վեհ է նա:

Նախանձից պիտի մարդ միշտ զգուշանա,
Հեռանա արագ, հանկարծ չուշանա,
Քենոտ է այն միշտ, երբեմն՝ թունոտ,
Ժպիտն անմեղ է, բայց ձեռքն արյունոտ»:

Մեկ է, աննախանձն էլի ու էլի
Քենից անտեղյակ, բարությամբ իր լի
Քիչ առաջ իրեն փոսը գցողին
Իր օգնող ձեռքը կմեկնի կրկին:

Նախանձն էլ այլոց, առանց մի ջանքի,
Մարդկանց լույս տվող ճամփա կսարքի:
Այսքանից հետո, դե ե՛կ, դիմացի՛ր
Աննախանձ մարդուն, դե մի՛ նախանձիր:

ԵՍԱՍԵՐՆԵՐԻՆ

Եսասեր եղեք, այնքան եսասեր,
Որ ուրիշներին չվիրավորեք,
Դա հենց ձեզ է պետք,
Չէ՞ որ պատասխան՝ «ես»-դ ցավեցնող
Անշուշտ կլինի օրերից մի օր:

Եսասեր եղեք, այնքան եսասեր,
Որ ձեզնից ավել ուրիշին սիրեք,
Դա հենց ձեզ է պետք,
Չէ՞ որ պատասխան՝ առավել սիրող
Անշուշտ կլինի օրերից մի օր:

Եսասեր եղեք, այնքան եսասեր,
Որ հողն հայրենի մոր նման պաշտեք,
Դա հենց ձեզ է պետք,
Չէ՞ որ պապական հողում ձեզ սնող
Անշուշտ պիտ պատվով ապրեք ամեն օր:

ԱՊՐԵԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Մեռնելուց առաջ ապրել եմ ուզում,
Ունենալ սիրող և թեկուզ ատող
Իմ կողքին լավ-վատ ընկերներ բազում
Եվ անշուշտ մեկին՝ վիշտս փարատող:

Ապրել եմ ուզում, այնպես եմ ուզում,
Որ օգնեմ մարդկանց խեղճ ու ազազուն,
Որ բացահայտեմ սուտն ու կեղծիքը,
Եվ չտարածվի սխալ կարծիքը:

Ապրել եմ ուզում, այնպես եմ ուզում,
Որ ապրելով այդ ամեն մի պահը,
Թեկուզև արթուն, թեկուզ երազում,
Ինձնից սարսափի նույնիսկ իմ մահը:

Մեռնելուց առաջ ապրել եմ ուզում,
Ոչինչ այլևս այդքան չի հուզում,
Քան այնպես ապրել, որ հողն հայրենի
Ոտնակոխ չանի ոչ մի վայրենի:

ԹՈՂ ՄԻՇՏ ԼԻՆԵՆՔ

Կանգնիր դու, անցո՛րդ, ի՞նչ ես դեգերում
Անցյալ-գալիքի այս խաչմերուկում,
Լսո՞ւմ ես, այնտեղ երկիրն է քնած,
Անվերջ հոգսերից, գործերից հոգնած:

Ձայն տուր դու նրան, թող որ արթնանա,
Քունը գլխին էլ թեկուզ բարկանա,
Հավերժությունն է մեզ այցի գալիս,
Ողջ տիեզերքն է անձրևոտ լալիս:

Հավետ խավարը որպես որոգայթ
Կուլ կտա լույսն ու մեր ջանքերը սին,
Եվ ոչ մի աստղ ու արևացայտ
Էլ չեն փայլփլի երկրի երեսին:

Չէ՞ որ մենք՝ մարդիկ, ռումբեր ենք ստեղծել,
Միամիտներին, ստել ու կեղծել,
Մի ահեղ պայթյուն, մի վերջին պայթյուն
Եվ կմնա լոկ մի հավերժություն:

Աշխարհն այդ պահից ուրեմն փրկենք,
Անվերջ ներկայում, թող որ միշտ լինենք,
Չարի դեմ պայքարն պիտի արթնանա,
Որ խաղաղությունն անկոտրում մնա:

Դե հիմա, անցո՛ղդ, քայլի՛ր համաչափ,
Միացի՛ր մարդկանց անգայթ պայքարին,
Այն մարդկանց, ովքեր բարի են անչափ
Ու լույս են սփռում ամբողջ աշխարհին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԲԱԼՈՆ---------- 3

ՁԵՐՄՈՒԿ ---------- 27

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԵՐԿՐՊԱԳՈՒՆ---------- 55

ՄԱՔՐՎԱԾ ՀՈԳԻՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆ--------- 80

ՃԱՆՃԸ ---------- 91

ՍԱՏԿԱԾ ԳԱՅԼԸ---------- 101

ՄԻԱՅՆԱԿ ԹԱՓԱՌԱԿԱՆԸ---------- 130

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՄԲԻՐ---------- 154

ՀԱՅՐԵՆԻ ՄՈԼՈՐԱԿ---------- 156

ԺՊՏԱԼ ԵՄ ՈՒՋՈՒՄ---------- 158

ՍԵՎԱՆՈՒՄ---------- 159

ՀՈԳՈՒՍ ՀԱՅԵԼԻՆ---------- 160

ԻՄ ՍԵՐԸ---------- 161

ԳԻՇԵՐ---------- 162

ՔԱՈՍ ---------- 164
ՀԱՅԵՐԵՆ ---------- 165
ՄԵՆՔ---------- 165
ՈՂՋԱԳԻՐ ---------- 167
ԻՆՉԵՎԷ ---------- 168
ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ---------- 169
ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐ ---------- 170
ՀՈՒՇԵՐ ---------- 171
ՆԵՐԻՐ ՆՐԱՆՑ ---------- 173
ԲԱՐԻ ԽՈՍՔԸ ---------- 174
ԱՆՆԱԽԱՆՁ---------- 175
ԵՍԱՍԵՐՆԵՐԻՆ---------- 177
ԱՊՐԵԼ ԵՄ ՈՒՁՈՒՄ---------- 178
ԹՈՂ ՄԻՇՏ ԼԻՆԵՆՔ ---------- 179

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ

«Խառնաշփոթ գույներ», 2023թ., Երևան
(առակներ, բանաստեղծություններ, հեքիաթներ)

«Առաջին օրը գյուղում», 2023թ., Երևան
(երգիծական վիպակ)

«Եռագույն խոհեր», 2023թ., Երևան
(բանաստեղծություններ, պատմվածք)

«Սրտի աչքը», 2024թ., Երևան
(բանաստեղծություններ, պատմվածք)

«Ձվարճալի այբուբեն», 2024թ., Երևան
(երգիծական չափածո ակրոստիքոս)

ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈԳՈՒ ԽՃԱՆԿԱՐ

Խմբագիր՝ Սուսան Վարդանյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արևմտահայերենի խմբագիր՝ Նայիրի Պալանեան